

Լեոնիդ Թեյան

Հայերենագիտական
ուսումնասիրություններ

(հոդվածների ժողովածու)

Երևան

2023

ՀՏԴ 811.19
ԳՄԴ 81.51
Թ 395

Գիրքը նվիրվում է ՀՀ ԳԱԱ Ն. Աճառյանի անվան
լեզվի ինստիտուտի հիմնադրման 80-ամյակին:

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Ն. Աճառյանի անվան
լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ:

Խմբագիր՝ Բանասիրական գիտությունների դոկտոր
Վ. Լ. Կատվայան

Թեյյան Լեոնիդ

Թ 395 Հայերենագիտական ուսումնասիրություններ:
Հոդվածների ժողովածու / Լ.Թեյյան. – Եր.: ՀՀ ԳԱԱ ԼԻ
հրատարակչություն, 2023- 186 էջ:

Սույն ժողովածուն ընդգրկում է արդի հայերենի շարահյուսու-
թյան, բառագիտության և ոճագիտության արդիական խնդիրնե-
րին վերաբերող հոդվածներ, որոնց հիմնական մասը հրատա-
րակվել է գիտական պարբերականներում: Օգտակար կարող է
լինել բանասեր ուսանողներին, հայագիտության հարցերով
հետաքրքրվողներին:

ՀՏԴ 811.19
ԳՄԴ 81.51

ISBN 978-9939-9298-9-7

© ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ, 2023

**ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԼԵԶՎԱԿԱՆ
ՆՈՐՄԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ,
ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՆՈՐՄ**

Լեզվական նորմ (կանոն)¹ հասկացությունը (և համապատասխանաբար՝ տերմինը) կիրառվում է հայեցակարգային երկու ոլորտներում՝ տեսական լեզվաբանության մեջ, նաև խոսքի մշակույթի ու ոճագիտության հարցերին նվիրված ուսումնասիրություններում: Որպես լեզուն ուսումնասիրող գիտության առարկա՝ նորմը ընդունված է համարել լեզուն բնութագրող եռաստիճան հակադրության՝ **լեզու – նորմ – խոսք**, եզրերից մեկը, որը ներկայացնում է տվյալ լեզվի համակարգը կազմող միավորների և դրանց հարաբերությունների ու գուգորդումների կանոնների ամբողջությունը: «Կանոնական մակարդակը կամ պարզապես կանոնը (նորմա) խոսքային միավորների այն ընդհանուր և վերացարկված լեզվական համակարգն է, որ գոյություն ունի տվյալ լեզվով խոսող հանրության անդամների գիտակցության մեջ»²:

Վերացարկվածության աստիճանի առումով նորմը մի կողմից ավելի բարձր է խոսքից, որը լեզվական նորմի կի-

¹Մասնագիտական գրականության մեջ գործածվող այս երկու տերմիններից նախընտրելի ենք համարում «նորմը»: Առաջարկվել է նաև «չափակարգ» տերմինը (տե՛ս **Լ. Եզեկյան**, Ոճագիտություն, Ե., 2003, էջ 95):

² **Է. Աղայան**, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Ե., 1967, էջ 15:

րարկումն է այդ լեզվով խոսող հանրության հաղորդակցման գործընթացում, մյուս կողմից՝ ստորադասվում է կառուցվածքի մակարդակին, որ ներառում է տվյալ լեզուն կազմող միավորների միջև հնարավոր հարաբերությունների ամբողջությունը՝ որպես վերացական համակարգ: Լեզվական նորմը, այսպիսով, լեզվի կառուցվածքային մակարդակը ներկայացնող միավորների և դրանց հարաբերությունների գործառական իրացումն ապահովող մակարդակն է, որն իր կոնկրետ դրսևորումն է ստանում խոսքի մեջ և նրա միջոցով: Կառուցվածքի մակարդակում լեզվական նշանները (միավորները) կապված են հարացուցային հարաբերություններով. դրանք «ներքաշվում են» շարակարգի մեջ նորմի սահմանած կանոններով և վերածվում խոսքային իրողությունների: «Խոսքի ծավալման ընթացքում նախ տեղի է ունենում այս կամ այն հարացույցի որևէ անդամի և ապա՝ բառի (կամ լեզվական այլ նշանի) շարակարգային հնարավորություններից մեկի ընտրություն»³: Այս առումով հարկ է նշել, որ լեզվական կառուցվածքի տրամաբանությամբ հիմնավորվող բոլոր իրողությունները չէ, որ իրացվում են նորմի մակարդակում, մյուս կողմից էլ՝ կենդանի խոսքի մեջ հաղորդակցվողների կողմից ոչ միշտ են պահպանվում լեզվական նորմի մակարդակում ամրագրված կանոնները: Այսպես, արդի հայերենի կառուցվածքը հնարավորություն է տալիս չեզոք և ներգործական սեռի բայերից **-ցն-** ածանցով կազմել պատճառական

³Б. Н. Головин, Основы культуры речи, М., 1988, էջ 18-19:

բայեր (**խոսեցնել, խաղացնել, խմեցնել, մոտեցնել, թոցնել** և այլն), սակայն նորմի մակարդակում այս կանոնը ամբողջական իրացում չի ստանում. չկան **գրեցնել, երգեցնել** և այլ ձևեր (սրանց պատճառականները կազմվում են հարադրությամբ՝ **գրել տալ** և այլն): Կամ՝ հայերենի նորմով սահմանված կարգով հարակատար, համակատար և անորոշ (սեռական հոլովով) դերբայները կազմում են երկրորդական բաղադրյալ ժամանակների համակարգ, սակայն հայերեն խոսքում չի իրացվում **գրելու եմ լինելու** կադասարբ: Մյուս կողմից՝ կենդանի բանավոր խոսքում շատ հաճախ օժանդակ բային հաջորդող դիրքում վաղակատար դերբայի վերջին -լ հնչյունը չի արտասանվում (**չեմ տեսե, դու ես ասե** և այլն), ինչը հակասում է ժամանակակից գրական հայերենի նորմին:

Լեզվական նշված երեք գոյամակարդակները, բնականաբար, մեկընդմիջտ տրված, անփոփոխելի և քարացած երևույթներ չեն: Լեզուն հարափոփոխ և զարգացող համակարգ է հենց նշված մակարդակների տարրերի փոխադարձ ներթափանցումների, փոխազդեցությունների շնորհիվ: Ժամանակի մեջ խոսքային մակարդակի իրողությունները կարող են ամրագրվել նորմի մեջ և ընկալվել որպես կանոնական, իսկ ավելի տևական մի հատվածում կարող են փոփոխվել նաև կառուցվածքային մակարդակի տարրերն ու հարաբերությունները՝ առաջ բերելով նույնիսկ համակարգային փոփոխություններ լեզվի կառուցվածքի մեջ (այսպես է տեղի

ունեցել, օրինակ, գրաբարի բայական համակարգի աստիճանական փլուզման ու վերասերման գործընթացը):

Հարկ է նկատի առնել նաև, որ լեզվական նորմը, լինելով հանդերձ հարաբերականորեն կայուն և միասնական մի համակարգ, ենթադրում է նաև տարբերակային, հոմանիշ ու բազմիմաստ ձևերի համագոյակցությունը դրանց խոսքային իրացման գործընթացում: «Նորմը ենթադրում է խոսողների և գրողների գնահատողական վերաբերմունքը խոսքի մեջ լեզվի գործառության նկատմամբ. այսպես կարելի է, այսպես չի կարելի, այսպես ասում են, այսպես չեն ասում, այսպես ճիշտ է, այսպես՝ ոչ: Այդ վերաբերմունքը ձևավորվում է գրականության (նրա՝ հասարակության մեջ հեղինակություն վայելող գործիչների), գիտության (որը սկսում է նկարագրել և «կողավորել» նորմերը), դպրոցի և այլ գործոնների ազդեցությամբ»⁴:

Որևէ լեզվի, նաև ժամանակակից գրական արևելահայերենի նորմի՝ խոսքի մշակույթի և ոճագիտության դիրքերից կատարվող ուսումնասիրությունների, ինչպես նաև նորմավորման խնդիրներով զբաղվող մարմինների ու մասնագետների աշխատանքի նպատակը լեզվի անմիջական կիրարկման ընթացքում առկայացող միավորների, դրանց տարբերակների ու զուգաձևերի (այդ թվում՝ այլ լեզուների ազդեցությամբ պայմանավորված) քննությունն է, գնահատումը լեզվական կանոնին համապատասխանելու և գործածությ-

⁴ **Б. Н. Головин**, նշվ. աշխ., էջ 19:

յան հեռանկարի դիրքերից և, ըստ այդմ, լեզվակիրառողին համապատասխան ուղղորդիչ հանձնարարականներ ու առաջարկներ ներկայացնելը:

Լեզվական նորմով սահմանվող կանոնները բնականաբար գործում են կառուցվածքային բոլոր մակարդակներում՝ հնչյունականից մինչև շարահյուսական:

Իսկ ինչպիսի՞ն է արդի գրական արևելահայերենի նորմավորման վիճակը: Կարող ենք արձանագրել, որ այս ոլորտում բավականաչափ աշխատանք կատարվել է, սակայն հայոց լեզվի տարբեր մակարդակային միավորների նկատմամբ ուշադրությունն այս առումով համաչափ չի բաշխվել. ջանքերը մեծավ մասամբ ուղղված են եղել ուղղագրության, ուղղախոսության, տերմինաբանության, բառագործածության նորմավորման խնդիրներին: Այս հանգամանքը բացատրելի է այնքանով, որ լեզվի կենդանի գործառության ընթացքում կատարվող տեղաշարժերի ու փոփոխությունների, խոսակցական, բարբառային և հատկապես օտարամուտ տարրերի ներթափանցումների հանդեպ ավելի զգայուն են հնչյունական և բառային մակարդակները: Եվ երևի օրինաչափ է, որ նախկին և ներկա տարբեր օրինասահման և խորհրդատվական մարմինների (տերմինաբանական կոմիտե, լեզվի բարձրագույն խորհուրդ, լեզվի պետական տեսչություն, լեզվի պետական կոմիտե) որոշումներն ու հրապարակումները հիմնականում հենց այս կարգի խնդիրներ են շոշափում: Արդի շրջանում էլ բավականաչափ զգալի են

մասնագետ լեզվաբանների և պատկան մարմինների՝ նշված ոլորտների կանոնարկմանն ուղղված ջանքերը. հույժ գնահատելի աշխատանք է սա, մանավանդ եթե նկատի առնենք այսօրվա մեր զանգվածային լրատվամիջոցների լեզվական իրավիճակը:

Այն, որ լեզվի քերականական համակարգը ավելի պահպանողական է զանազան կարգի տեղաշարժերի և օտար ազդեցությունների նկատմամբ, հայտնի իրողություն է, սակայն քերականության մեջ էլ բազմաթիվ են ներքին ազդակներով և օտար ազդեցություններով պայմանավորված տարբերակային դրսևորումները, զուգաձևերը, փոխառյալ և օտարաբան կազմությունները, որոնք նույնպես նորմի տեսակետից գնահատվելու և համապատասխանաբար կանոնարկվելու պահանջ են առաջադրում: Չի կարելի ասել, թե այս բնագավառը հայերենագիտության մեջ անտեսվել է. քերականական նորմի կանոններն անհրաժեշտաբար ներկայացված են քերականության դասագրքերում ու ձեռնարկներում, նորմավորման խնդիրներ են արծարծվել տարբեր ուսումնասիրություններում, հողվածներում, հանրամատչելի հրատարակություններում:⁵ Հատկանշական է, որ մասնա-

⁵ Տե՛ս Մ. Աբրահամյան, Ժամանակակից գրական հայերեն, Ե., 1980, Պ. Բեդիրյան, Հայ լեզուն և մեր խոսքը, Ե., 1999, Զ. Աղաջանյան, Ձևաբանական նորմ և խոսքի մշակույթի հարցեր, Յու. Ավետիսյան, Տեղաշարժեր արդի գրական հայերենում, Ե., 2011, Յու. Ավետիսյան, Լ. Թեյլան, Լ. Մարգարյան, Լ. Ավետիսյան, Հայոց լեզվի ուղեցույց, Ե., 2017, Լ. Թեյլան, Արդի հայերենի քերականության հարցեր, Ե, 2016 և այլն:

գետների տեսադաշտում ավելի հաճախ հայտնվել են ձևաբանական նորմի (մասնավորապես բայական համակարգում կատարվող տեղաշարժերի) հարցերը: Սակայն խոսքի մշակույթի որակը մեծ չափով պայմանավորված է նաև շարահյուսական նորմի շրջանակում գործող կանոնների իմացությամբ և դրանց ճիշտ գործադրմամբ: Գաղտնիք չէ, որ այսօրվա մեր զանգվածային լրատվամիջոցների, մասնավորապես հեռուստատեսության լեզվում, մեղմ ասած, հազվադեպ չեն լեզվական մեղանշումներն ու խաթարումները. դրանց մի մասը հենց շարահյուսական նորմի տարաբնույթ խախտումների օրինակներ են: Ավելորդ չենք համարում ստորև մի փոքր ավելի հանգամանորեն ներկայացնել այդ խնդիրներին առնչվող մեր մի քանի դիտարկումները⁶:

Հայերեն խոսքում շարահյուսական նորմի դրսևորումները բնականաբար վերաբերում են բառերի և նախադասությունների կապակցության եղանակներին ու միջոցներին: Կապակցության եղանակները, ինչպես հայտնի է, երեքն են՝ համաձայնություն, խնդրառություն, առդրություն⁷, արտահայտության միջոցներն էլ ընդգրկում են լեզվի ձևաբանական մակարդակում գործառող ձևույթները (որոնց «կոչումն»

⁶ Այս մասին ավելի ավելի մանրամասն տե՛ս մեր՝ «Շարահյուսական նորմ. զուգաձևեր և շեղումներ» հոդվածը («Հայագիտության հարցեր», 2017, հ.1):

⁷ Առդրական կապակցության դրսևորումներից մեկը երբեմն ներկայացվում է որպես կապակցության առանձին եղանակ (տե՛ս **Ա. Մարգարյան**, Ժամանակակից հայերենի կապակցության մի եղանակի մասին, «Լեզու և լեզվաբանություն», 2015, հ. 1-2):

ի վերջո կապակցության իրացումն է), կապերը, շաղկապները, հարաբերական դերանունները, շարադասությունը, հնչերանգը (երկրորդաբար կապակցական դեր կարող են ստանձնել նաև այլ միավորներ): Շարահյուսական նորմ ասվածը խոսքի մեջ սրանց գործառության կանոնների ամբողջությունն է, որը տվյալ փուլում ընդունված է հայերեն խոսող և գրող հանրության կողմից և կայուն պարբերականությամբ գործածվում է հայերենի բանավոր և գրավոր (մասնավորապես գրականության, գիտության, արվեստի՝ հանրային հեղինակություն վայելող գործիչների) խոսքում: Պետք է նկատի առնել, որ խոսքային կոնկրետ կիրառության մեջ շարահյուսական կառույցները, լեզվական այլ միավորների նման, հանդես են բերում զանազան հոմանիշ և զուգաձև տարբերակներ, այդ թվում՝ օտար ազդեցություններով պայմանավորված դրսևորումներ, որոնք կարող են համագոյակցել լեզվական նորմի շրջանակում: Այլ խնդիր է, որ մասնագետ լեզվաբանները որոշ դեպքերում տարակարծիք են այս կամ այն շարահյուսական կառույցը հայերենի շարահյուսական նորմի տեսակետից գնահատելու, ասել է թե՛ շարահյուսական նորմի ընդգրկման շրջանակը սահմանելու հարցում: Այս առումով հատկանշական է, օրինակ, այսպես կոչված «բացարձակ աներևույթի» մասնագիտական գնահատության խնդիրը⁸: Խոսքը վերաբերում է արդի հայերենում անորոշ դերբայի

⁸ Այս մասին առավել հանգամանորեն տե՛ս **Լ. Թեյյան**, «Բացարձակ աներևույթի գնահատման շուրջ» հոդվածում, «Բանբեր Երևանի համալ-

և դիմավոր բայի կապակցության մի յուրահատուկ դրսևորման, երբ անորոշը, որպես դիմավոր բայի լրացում, չի ենթարկվում գերադաս բայի խնդրառական կանոնին և տրական կամ բացառական հոլովով դրվելու փոխարեն հանդես է գալիս ուղիղ ձևով՝ **պատրաստվում է գնալ** (փիս. **գնալու**), **հրաժարվում է ընդունել** (փիս. **ընդունելուց**): Այս կառույցը, որ շատ տարածված է հայերենում և, մեր կարծիքով, չի հակասում մեր լեզվի շարահյուսական նորմին, որոշ մասնագետների կողմից գնահատվում է որպես անթույլատրելի օտարաբանություն: Ոչ միանշանակ մասնագիտական մեկնաբանությունների առիթ սովոր շարահյուսական այս կարգի իրողություններ էլի կարելի է թվարկել:

Սակայն կենդանի խոսքում, իսկ այսօր հատկապես տարաբնույթ լրատվամիջոցների լեզվում, ինչպես նշեցինք, հազվադեպ չեն նաև գրական հայերենի շարահյուսական նորմին միանշանակորեն հակասող կառույցները, ակնհայտ սխալակազմությունները, որոնք, անշուշտ, լեզվակիրառողի ոչ պատշաճ պատրաստվածության, խոսքային ցածր մշակույթի կամ սեփական խոսքի հանդեպ անփույթ վերաբերմունքի արտահայտություններ են: Դրանց հանգամանակից վերլուծությունը թողնելով մի այլ առիթի՝ նշենք այդ կարգի շեղումների մի քանի բնորոշ դեպքեր:

Առավել տարածված են, օրինակ, կապակցության միջոցներից կապերի ու շաղկապների ոչ կանոնական կիրա-

ռությունները, որոնք պայմանավորված են տարբեր գործոններով՝ օտար ազդեցություն, կապերի ոչ ճշգրիտ հոլովառություն, այդ միջոցների ստուգաբանական իմաստների ոչ ճիշտ ընկալումներ և այլն: Օրինակներ. Չկարողանալով աշխատել ըստ մասնագիտությամբ՝ զբաղվում էր առևտրով (հանրային ռադիո), Առանց մաքսատուրքերի վճարմամբ ներմուծողները խնդիրներ կունենան («Արմենիա»), Ամեն ինչ արված է ըստ օրենքի տառով («Շանթ»), Որտեղի՞ց գտաք այդ սերը դեպի թատրոնի նկատմամբ (Արմնյուզ), Մենք, իհարկե, կգերադասեինք, որպեսզի ընդդիմությունը հանդես գար միասնական թեկնածուով (Հ.1), Ինչի՞ մասին է մեկնաբանում առողջապահության նախարարը (համացանց), Ո՞վ է հավակնում ՄԴ դատավորի թափուր տեղի համար (համացանց), Ջրի ճնշումը ուժեղ է, մինչև պոմպը չեն անջատել (ATV), Քանի դեռ ստացիոնար պայմաններում չստուգենք, ոչինչ չենք կարող ասել («Ազատություն»), Սա կարելի էր նկատել, եթե ուշադիր լինել (Հ. 2), Որպեսզի չվերադառնալ հինի, պետք է ակտիվություն ցուցաբերել («Շողակաթ») և այլն: Հաճախակի են նաև բայերի խնդրառության կանոններից շեղումները. Ձուլածո առարկաների ձևից պայմանավորված՝ ստեղծվում են կադապարներ («Շողակաթ»), Սա վերաբերում է բոլորին՝ սկսած պատգամավորից, վերջացրած հավաքարարից (համացանց), Նրա հետաքրքրությունը փոխարինվեց սարսափի (Հ. 2), Տրամաբանությամբ ելնելով՝ ընտրեցի «Հյուսիսային պատերազմը» («Արմենիա»), Պայմանավորված դա-

տավորի անձից՝ որոշումը կանխատեսելի էր (Հ. 1), Դատելով Ձեզ՝ դուք պետք է այլ ժանրով երգեիք («Շանթ») և այլն: Մի հատկանշական սխալ ևս, որ մեր շարահյուսական նորմին բնորոշ՝ դերբայական դարձվածի և դիմավոր բայի ենթակաների նույնության կանոնին է վերաբերում. Եվ, իհարկե, լինելով շատ գեղեցիկ և համակրելի՝ ես ուզում եմ քեզ նվիրել այս ծաղկեփունջը («Շանթ»), Միացյալ Նահանգները, լինելով շատ լավ երկիր, միևնույն է, մենք որոշեցինք վերադառնալ Հայաստան («Արմենիա»), Խոսելով օգտակար սննդամթերքների մասին՝ մեր սեղանին այսօր դրված է ոլոռը («Շանթ»), Ուսումնասիրելով նկարչի կտավները՝ տպավորություն է ստեղծվում...» (ATV), Չկարողանալով լողալ՝ գետը քշելտարել է («Շանթ»), Յուրաքանչյուր ոք իր լուման ներդնելով՝ փառատոնը կայանում է («Երկիր մեդիա») և այլն: Վերևում հիշատակված առդրական կապակցության մի յուրահատուկ դրսևորում էլ կա (այսպես կոչված «կախումը»), երբ որոշյալի քերականական թիվը (եզակի կամ հոգնակի) թելադրվում է որոշյի բառային իմաստով: Այս կանոնի խախտումը նույնպես սակավադեպ չէ. Նախարարության ամբողջ աշխատակիցները լծվել են այդ պրոբլեմների լուծմանը (Հ. 1), Այդ ողջ փաստաթղթերը պատրաստվել էին ժամանակին (Հ. 1), Եթե ինչ-ինչ պատճառով ձեր ուտեստը համով չի ստացվել, դիտեք «Համով գրույցը» (Հ. 2), Բոլոր աշխարհում կան չափանիշներ, որով (°) կատարվում են վիրահատություններ («Կենտրոն») և այլն:

Շարահյուսական նորմի բազմապիսի շեղումների թվարկումն, անշուշտ, շատ տեղ կարող է զբաղեցնել: Ավելորդ չենք համարում նշել, որ դրանց գերակշիռ մասը հանդիպել է հաղորդավարների կամ լրագրողների խոսքում. հանգամանք, որ մտահոգվելու առիթ պետք է տա հայերեն խոսքի մշակույթի հարցերով շահագրգիռ հաստատություններին ու մասնագետներին:

ՇԱՐԱՀՅՈՒՄԱԿԱՆ ՆՈՐՄ. ԶՈՒԳԱԶԵՎԵՐ ԵՎ ՇԵՂՈՒՄՆԵՐ

Լեզվական ստորակարգությունը կազմող կառուցվածքային մակարդակների միավորները, ինչպես հայտնի է, խոսքային կիրառության տևական գործընթացում ենթակա են փոփոխությունների ու տեղաշարժերի՝ զանազան գործոնների ազդեցությամբ: Այդ փոփոխությունները կարող են պայմանավորված լինել թե՛ լեզվի զարգացման ներքին ազդակներով, թե՛ օտար ազդեցություններով և թե՛ տվյալ լեզուն կրող հանրության կյանքում տեղի ունեցող տեղաշարժերով: Հանրահայտ է նաև, որ այս գործոնների հանդեպ առավել զգայուն է լեզվի բառապաշարը. հնչյունական համակարգի, ինչպես նաև քերականական կառուցվածքի միավորները, «ապահովագրված» չլինելով վերոնշյալ գործոնների ազդեցությունից, բավականաչափ «դժկամորեն» են ենթարկվում դրանց հարուցած փոփոխություններին: Այդուհանդերձ, լեզվական համակարգի զարգացման տրամաբանությունը թելադրում է այդ զարգացման որոշակի փուլում կանոնով (նորմով) հաստատված ձևերի կողքին նաև նույն այդ կանոնից շեղվող ձևերի ու իրողությունների առկայություն: Եթե նորակազմ ձևը կամ նորահայտ իրողությունը ակնհայտորեն հակադրվում է լեզվական կանոնին, ապա բավական արագ դուրս է մղվում և կարող է գոյատևել խոսակցական ոճում (օրինակ՝ ենթակայի և ստորոգյալի թվային անհամաձայնությ-

յան դեպքերը այսօրվա հայերենում): Լեզվական ավանդույթը երբեմն բավական տևականորեն «հանդուրժում» է նույնանշանակ ձևերի գոյակցությունը կանոնի սահմաններում, սակայն սովորաբար ժամանակի ընթացքում դրանցից մեկը՝ ավանդական կանոնականը կամ էլ նորակազմ կանոնախախտը, նախընտրության է արժանանում՝ հաճախ նաև նորմավորողի միջնորդությամբ:

Ընդհանրապես լեզվական համակարգի ներքին դինամիկան, նրանում տարբեր ձևերի համագոյակցության իրողությունը մեծապես պայմանավորված է լեզվական նշանի արտահայտության և բովանդակության պլանների ոչ համաչափ (ասիմետրիկ) համապատասխանությամբ: Սա վերաբերում է նաև քերականական, այդ թվում՝ շարահյուսական միավորներին: Այս առումով հետաքրքիր է Ժորժ Վանդրիեսի դիտարկումը. «Ցանկացած քերականության տրամաբանական իդեալն է ունենալ յուրաքանչյուր առանձին ֆունկցիայի համար մեկ արտահայտություն և միայն մեկ ֆունկցիա՝ յուրաքանչյուր արտահայտության համար: Եթե այդ իդեալը իրականանար, լեզուն կունենար նույնպիսի ճշգրիտ սահմաններ, ինչպես հանրահաշիվը, որի ցանկացած բանաձևը, մի անգամ հաստատվելով, անփոփոխ է մնում բոլոր դեպքերում: Սակայն ասույթները հանրահաշվական բանաձևեր չեն»¹: Սրան կարելի է ավելացնել նաև, որ լեզվի բուն էությունը հենց այդ «հանրահաշվական ճշգրտության» բացա-

¹ Ж. Вандриес, Язык, М., 1937, էջ 149-150.

ռումն է. նրա նշանների ներքին հարաբերությունների անհամաչափ բնույթը ոչ միայն լեզվական տարբերակային ձևերի գոյության նախապայմանն է, այլև լեզվի համակարգի զարգացման կարևորագույն լծակներից մեկը:

Լեզվական տարբերակային ձևերի մասին խոսելիս պետք է տարբերակել համաժամանակյա և տարաժամանակյա դիտվածքները: Մասնագիտական գրականությունից շատ փաստեր կարելի է բերել, որոնք կվկայեն մասնավորապես քերականական համակարգի այս կամ այն միավորի՝ անցյալում համագոյակցած ձևերից մեկի վերջնական հաղթանակը. որպես օրինակներ կարելի է նշել ենթադրական եղանակի կազմության մեջ կատարված տեղաշարժը, որի արդյունքն է ժամանակակից հայերենի ժխտական կոչվող դերբայի առաջացումը, հրամայական եղանակի ժխտական ձևերի կազմության միօրինակացման արդեն իսկ ավարտված գործընթացը և այլն: Չենք խոսում այլևս վաղ անցյալում մեր լեզվի մեջ ծայր առած այնպիսի տեղաշարժերի մասին, որոնք հանգեցրին հին հայերենի քերականական համակարգի որակական փոփոխության:

Ժամանակակից հայերենի հնչյունական, բառապաշարային, քերականական մակարդակներում կատարվող տեղաշարժերը այսօր նույնպես բավական հաճախ են հայտնվում ուսումնասիրողների տեսադաշտում. արձանագրվում են կանոնից արդեն իսկ առկա շեղումներ, փորձեր են արվում գնահատելու դրանց գործառության հեռանկարը և ըստ

այդմ էլ մշակվում են դրանց կանոնարկմանը միտված հանձնարարականներ²: Ընդամին պետք է նկատի առնել, որ համագոյակից ձևերը տվյալ փուլում կարող են հավասարապես ընդունելի դիտվել կանոնի դիրքերից. դրանք սովորաբար իմաստային կամ կիրառական նրբերանգային տարբերություններով են բնութագրվում:

Շարահյուսական մակարդակում կատարվող փոփոխությունների ու տեղաշարժերի պատճառները նույնպես բազմազան կարող են լինել՝ օտար կաղապարների ազդեցություն կամ պատճենում, կաղապարների փոխներգործություն, համաբանություն, բաղարկություն և այլն: Ինչպես նշվեց, շարահյուսական նույնանշանակ կառույցների ավանդական–կանոնական և ավանդախախտ տարբերակների գուցահեռ գործածությունը առավել տևական է լինում մակարդակային այլ միավորների համեմատությամբ: Իհարկե, խոսքը չի վերաբերում ակնհայտ սխալակազմություններին (լեզվի ոչ կատարյալ իմացությամբ պայմանավորված) կամ էլ լեզվական ցածր ճաշակի դրսևորումներին, որոնք ցավալիորեն տարածված են նաև զանգվածային լրատվամիջոցներում, հաճախ էլ հայտնվում են իրավացի քննադատության թիրախում և վերահսկվող խոսքում դյուրությամբ հաղթահարելի են:

² Տե՛ս **Յու. Ավետիսյան**, Տեղաշարժեր արդի գրական հայերենում, Ե., 2011, **Պ. Բեդիրյան**, Հայ լեզուն և մեր խոսքը, Ե., 1999, **Հ. Գալստյան**, Ճիշտը և սխալը, Ե., 2007 և այլն:

Շարահյուսական համագոյակից կառույցները, ինչպես նաև կանոնից շեղվող ձևերը դիտարկելի են կապակցության եղանակներից յուրաքանչյուրի՝ համաձայնության, խնդրառության և առդրության գործառության ոլորտներում:

Ստորև կփորձենք ներկայացնել արդի հայերենի շարահյուսական մի քանի իրողությունների տարբերակային դրսևորումներ, նշել դրանց կիրառության ոլորտներն ու պայմանները՝ ըստ հարկի անդրադառնալով նաև մասնագետների կողմից դրանց տրվող գնահատականներին:

1. Ենթակայի և ստորոգյալի թվային համաձայնության կանոնը առավել հանրահայտն ու դյուրընկալելին է թերևս, չնայած բակառություն կոչվող շեղումը այսօր էլ հաճախադեպ է բանավոր և գրավոր խոսքում (**Ուսանողների կեսը ներկա չեն, նրանց մի մասը գնացին** և այլն): Հանձնարարելի են, անշուշտ, քերականորեն ճշգրիտ կառույցները (**կեսը ներկա չէ, մի մասը գնաց** և այլն): Նույն հանձնարարականին պետք է հետևել նաև բազմակի ենթակաների հետ բայի հոգնակի թվի կիրառության կանոնի պահպանման հարցում, թեև սրանից առկա շեղումները մեր դասական գրականության ընտիր էջերում էլ են հանդիպում (Օրինակ. **Աշնան խաղաղ օրերին նրան հաճելի էր և՛ սիմֆոնիքի տերևների խշշոցը, և՛ վազերի օրորը, և՛ հնձանի դոնակի երգը** (Բակունց), **Մերն ու սիրտն էլ երբ չկա...**(Թումանյան) և այլն): Նման դեպքերում եզակի ստորոգյալի գործածությունը թույլատրելի է, եթե բազմակի ենթակաները մեկ հասկացություն արտահայ-

տող հարադրության արժեք ունեն (**կարգ ու կանոն չկա, հարց ու պատասխան չեղավ** և այլն): Թույլատրելի գուգաձևեր պետք է համարվեն թվական որոշիչով եզակի ենթակաների և դրանց ստորոգյալների եզակի կամ հոգնակի կիրառությունները (**երկու ուսանող եկավ (եկան), հինգ ուսանող բացակա է (են) և այլն**): Թվային անհամաձայնության անհանձնարարելի մյուս դեպքերը գրական լեզու են թափանցում հիմնականում խոսակցականից (օր. ...**երբ լույսերն անջատվեց, բոլորը կորցրին խոսելու կարողությունը** (համացանց), **Ոտքերս մրսում է** և այլն): Արտահայտության պլանում այս կարգի շեղումը համընկնում է թվի և առկայացման կարգի մի յուրահատուկ դրսևորման հետ, երբ **–ներ** հոգնակերտը հանդես է գալիս որպես եզակի թվի ցուցիչ (այսպես կոչված «առանձնական եզակի») և կանոնավորապես գուգորդվում է եզակի ստորոգյալի հետ, ինչպես՝ **գլուխներս ցավում է, տուններդ շինվի, աչքներս ջուր կտրեց** և այլն (հոգնակերտ ձևույթն այստեղ արտահայտում է հատկացյալների մեջ ներակայված հատկացուցիչների հոգնակիություն)³:

Ինչ վերաբերում է բացահայտչի և բացահայտյալի համաձայնությանը, ապա կարևոր ենք համարում նշել, որ շարահյուսական նորմի շրջանակներում հանդուրժելի չեն մասնական կոչվող բացահայտչի և իր լրացյալի հոլովական

³ Այս ձևերի քերականական իմաստի գնահատման մասին մանրամասն տե՛ս **Դ. Գյուլգասյան**, Գրական արևելահայերենի քերականության հիմունքներ, Ե. 2016, էջ 64-71:

համաձայնության խախտումները, որքան էլ դրանք տարածված լինեն հատկապես մերօրյա պաշտոնական խոսքում (օր. **Ես նրան՝ որպես բժիշկ (փխ.՝ բժշկի) բարձր եմ գնահատում**):⁴

2. Կապակցական շեղումների մասին խոսելիս չի կարելի անտեսել առդրական առնչության յուրահատուկ մի դրսևորում, որը հայտնի է «կախում» անունով⁵ և որոշ մասնագետների կողմից ներկայացվում է որպես շարահյուսական կապակցության առանձին եղանակ:⁶ Խոսքը հատկապես «որոշիչ-որոշյալ» կապակցության այն դեպքերին է վերաբերում, երբ որոշիչը իր բառային իմաստի թելադրանքով պահանջում է որոշյալի եզակի կամ հոգնակի թիվ: Օրինակ, **բոլոր, բազմաթիվ, մի քանի, զույգ – զույգ, խումբ – խումբ** և այլ որոշիչների հետ կանոնավորապես գործածվում է հոգնակի որոշյալ, **ամեն (մի), յուրաքանչյուր, որևէ, ողջ, ամբողջ** և այլ որոշիչների հետ՝ եզակի ստորոգյալ: Սակայն բանավոր (հաճախ նաև՝ գրավոր) խոսքում սակավադեպ չեն այս կանոնի խախտումները՝ **որևէ առաջարկներ չեն ստացվել, տարածաշրջանի ողջ երկրները, դպրոցների ամբողջ աշակերտները** և այլն:

⁴ Խոսքային նման վթարները կարող են նույնիսկ զավեշտական իրավիճակի առիթ լինել. այսպես, Ազգային ժողովի պատգամավորուհին տղամարդ հաղորդավարին շնորհակալություն է հայտնում՝ ասելով. «Դուք ինձ դիմավորեցիք որպես կին և ճանապարհում եք որպես կին»:

⁵ Տե՛ս **Ռ. Իշխանյան**, Արդի հայերենի շարահյուսություն, Ե. 1986, էջ 33:

⁶ Տե՛ս **Ա. Սարգսյան**, Ժամանակակից հայերենի շարահյուսական կապակցության մի եղանակի մասին, «Լեզու և լեզվաբանություն», 2015, հ. 1-2:

3. Քանի որ հայերենի (և ոչ միայն) շարահյուսական կառուցվածքի մեջ բացառիկ կարևոր դեր ունի բայը, շարահյուսական կառույցների կապակցական գուգահեռ կամ հոմանիշ ձևերի առկայությունը առավելաբար կապված է լինում բայի կապակցելիական հնարավորությունների կամ առանձնահատկությունների հետ: Մասնագիտական գրականության մեջ հաճախադեպ են մասնավորապես բայական խնդրառությամբ պայմանավորված գուգաձև կառույցների տարաբնույթ գնահատությունները: Որպես սրա ամենաբնորոշ օրինակ՝ կարելի է նշել դիմավոր բային լրացնող անորոշ դերբայի ձևավորման խնդիրը: Բանն այն է, որ դիմավոր բայի խնդրառական հատկությամբ թելադրվող տրական կամ բացառական հոլովով ձևերին (ձգտում է **հասնելու**, խուսափում է **հանդիպելուց**) գուգահեռ արդի հայերենում սովորական է նաև անորոշ դերբայի ուղիղ ձևով կառույցը (այսպես կոչված «բացարձակ աներևույթը»՝ ձգտում է **հասնել**, խուսափում է **հանդիպել** և այլն): Այս վերջին ձևերը հետազոտողների մի մասը համարում է օտարամուտ և անհանձնարարելի: Միանշանակ չի գնահատվում նաև անվանական բաղադրիչներով որոշ բայական հարադրությունների հետ անորոշ դերբայի չթեքված ձևի կիրառությունը՝ հույս ունի **հանդիպել**, կարիք չկա **հիշեցնել**, հարկ չկա **մտահոգվել** և այլն: Սրանք ևս շատերը ոչ կանոնական են համարում՝ հանձնարարելով նման կառույցներում գործածել միայն անորոշի սեռական – տրական հոլովածներ՝ որպես հարադրության անվանական բա-

դադրիչի հասկացուցիչ (հույս ունի **հանդիպելու** և այլն): Կարծում ենք՝ այս երկու կառույցների մեջ էլ անորոշ դերբայի ուղիղ ձևի կիրառությունը խորթ չէ հայերենի շարահյուսական կանոնի տրամաբանությանը (նույնիսկ եթե ընդունենք դրանց՝ օտար ազդեցության հետևանք լինելը), և պետք է ընդունել անորոշի թեքված ձևերով կառույցների հետ գուգահեռ դրանց գործածվելու իրավունքը գոնե արդի շրջանի արևելահայերենում (ի դեպ, նշված կառույցները նույնքան սովորական են նաև արևմտահայերենում):⁷ Այս առնչությամբ, սակայն, կարևոր է ուշադրություն դարձնել մի հանգամանքի վրա: Վերոնշյալ կառույցներում անորոշի ուղիղ ձևից խուսափելու չափազանցված զգուշավորությունը առիթ է տալիս ակնհայտ սխալ կազմությունների. մի կողմից անորոշ դերբայի տրականի ձևն են գործածում այնտեղ, որտեղ խնդրառական կանոնով միակ հնարավորը ուղղականի ձևն է (թու՛յլ տվեք **դիմելու**, (փխ.՝ **դիմել**) արտոնել են **առևտուր անելու** (**անել**) շարունակե՛ք **պատասխանելու** (**պատասխանել**), աշխատում են **հասնելու** (**հասնել**) առաջավորներին, միշտ փորձել են **օգնելու** (**օգնել**) հարազատներիս և այլն), մյուս կողմից, ընդհակառակը, ուղիղ ձևը գործածում են պահանջված տրականի փոխարեն (օր.՝ «Մենք ունենք լրագրողական

⁷ Այս մասին առավել հանգամանորեն տե՛ս **Լ. Թեյյան**, Արդի հայերենի քերականության հարցեր, Ե., 2016, էջ 23-43:

գործեր, որոնք արժանի են **հրատարակվել** և **պարզևատրվել**», (22 հեռուստաալիք), «Վազում էին **գրկել** երեխային» և այլն)⁸:

4. Բայական արժույթի, խնդրառության ոլորտում առկա տեղաշարժերն, անշուշտ, ավելի բազմազան դրսևորումներ ունեն, որոնք հաճախակի քննարկման առարկա են դառնում քերականագիտական, ուսումնական, նաև լեզվի կանոնարկման հարցերին նվիրված աշխատանքներում: Խնդրառությամբ պայմանավորված շարահյուսական տարբերակների երկու կարգի դրսևորում կարելի է առանձնացնել. **ա)** բայի բազմիմաստությունից բխող կրկնաստեռությամբ պայմանավորված՝ խնդրի տարբեր ձևավորումներ (**սովորել դասը – սովորել միջավայրին, ապրել քաղաքում – ողբերգությունն ապրել, լսել երաժշտություն – լսել ծնողներին, աշխատել գործարանում – փող աշխատել, նայել երկնքին – հեռուստացույց նայել** և այլն)⁹, և **բ)** ժամանակի ընթացքում բայաստեռի քերականական կարգի ներսում կատարված տեղաշարժերով պայմանավորված գուգաձևություններ (**կարոտել գյուղին – կարոտել գյուղը, դավաճանել հայրենիքին – դավաճանել հայրենիքը, ձեռնարկել գործին – ձեռնարկել գործը** և այլն): Այս իրողությունները քերականագիտության մեջ վաղուց նկատված և նկարագրված են, սակայն այսօր էլ հրատապ է սրանց

⁸ Այս կառույցները թերևս կանոնական են արևմտահայերենում. Հմմտ. «Եվ այլիք մը թնր բացած կը վազե / Գրկել ափունքն իղձիս ոսկե ավազե» (Մեծարենց):

⁹ Կրկնաստեռ բայերի մասին մանրամասն տե՛ս **Ս. Սաֆարյան**, Կրկնաստեռ բայերը հայերենում, Ե., 2013:

դիտարկումը հատկապես խնդրառական զուգաձև կառույցների՝ լեզվի կանոնարկման համատեքստում գնահատելու առումով: Արդի հայերենում մի շարք բայերի զուգաձև խնդրառության երևույթը հենց այս տեսանկյունով էլ քննության է առնված Լ. Մարգարյանի մի ուշագրավ հոդվածում¹⁰: Կարևոր է, որ հեղինակը համագոյակից կառույցների կիրառության հեռանկարը գնահատելիս հիմնվում է արդի փուլում դրանց գործածության հաճախականության վերաբերյալ վիճակագրական հաշվումների վրա (հարցումային գիտափորձերի օգնությամբ): Ըստ դրանց՝ արդի հայերենում **կարոտել**, **տենչալ**, **դավաճանել** բայերի զուգաձև խնդիրներից առավել հաճախական են ուղղական հոլովով ձևավորվածները (խոսքն, անշուշտ, իրի առման մասին է), **դավանել**, **խոչընդոտել**, **խանգարել** բայերի դեպքում գերակշռում են տրականաձև խնդիրները (ուղղականի համեմատությամբ): Հետաքրքիր է, որ վիճակագրական գիտափորձի մասնակիցներից սակավ գործածական կառույցներին նախապատվություն տվածները առավելապես տարեց մարդիկ են, ինչը զարգացման որոշակի միտումի վկայություն կարելի է համարել: Գնահատելի է նաև, որ հոդվածի հեղինակը սկզբունքորեն տարբերակել է համակարգային զարգացման տրամաբանությամբ թելադրված ձևերը անհատական նախընտրությամբ պայմանավորվածներից (**ափսոսալ ծառերին**, **ողջունել**

¹⁰ Լ. Մարգարյան, Բայերի սեռային անցումները արդի արևելահայերենում, «Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն», Ե., 2014, էջ 45-54:

հաղորդաշարին և այլն) կամ էլ ակնհայտ սխալակազմություններից, որոնք, անկախ կիրառության հաճախականությունից, չեն տեղավորվում այսօրվա շարահյուսական կանոնի շրջանակում:

5. Խնդրառական որոշ կարգի զուգաձևեր շարահյուսական կանոնի սահմաններում գոյության հավասար իրավունքով են օժտված իրական նույն հարաբերության՝ մտածական տարբեր կադապարներով արտահայտվելու պատճառով. **կառչել մեկին / մեկից, կախել պատին / պատից, գերազանցել մեկին / մեկից, խնդրել մեկին / մեկից, հարցնել մեկին / մեկից, տեղյակ լինել մի բանի / մի բանից, երկուսին/ երկուսից հինգ է պակաս** և այլն: Խնդրի տարբեր ձևավորումները երբեմն պայմանավորված են լինում խնդրառու բայի հետ իմաստային կապի առանձնահատկությամբ: Այսպես, **ծանոթանալ** բայի խնդիրը **հետ** կապով է ձևավորվում, եթե ծանոթությունը փոխադարձ է (բնականաբար անձ նշանակող խնդիրների դեպքում)՝ **ծանոթանալ բանաստեղծի հետ**, միակողմանի ծանոթությունը հաղորդվում է առանց կապի՝ **ծանոթանալ բանաստեղծությանը**: Նույնպես և՛ **հանդիպել** (**ուսանողների հետ / դժվարությունների**), **հարմարվել** (**հարևանների հետ / իրավիճակին**) և այլն: Հետ կապով և առանց կապի՝ տրականով արտահայտվող խնդիրների զուգահեռ թույլատրելի կիրառության այլ դեպքերի միջև էլ թերևս կարելի է հետևյալ նրբերանգային տարբերությունն արձանագրել. **հետ** – ով կառույցների մեջ ընդգծվում է հարաբերվող եզրերի տրամաբա-

նական համարժեքությունը, տրականաձև խնդիրների դեպքում էլ կարծես թե կախման հարաբերությունն է կարևորվում: Համեմատենք.

համագործակցել մեկին / մեկի հետ

**հակադր(վ)ել մեկին, մի բանի / մեկի հետ, մի բանի հետ
գուգորդ(վ)ել մի բանի / մի բանի հետ**

համապատասխանել մեկին, մի բանի / մեկի հետ, մի բանի հետ

հավասարվել մեկին, մի բանի / մեկի հետ, մի բանի հետ
և այլն:

Այս կարգի գուգաձև խնդրառությունը կարող է հատուկ լինել նաև ածականին, մակբային և այլն: Օրինակ՝ **մեկին, մի բանի / մեկի հետ, մի բանի հետ համաչափ, գուգահետ, համաքայլ, ներդաշնակ** և այլն:

Վերոբերյալ խնդրառական կաղապարների իրացումների մեջ հազվադեպ չեն նաև սխալակազմությունները, ինչպես՝ **բաժանվել կնոջ հետ, օգտվել գործիքով, սիրահարվել մեկի վրա, կտակել մեկի վրա, մոտ լինել տնից** և այլն, որոնք օտար կամ բարբառային ձևեր են: Պետք է տարբերել նաև որոշ հարանուն գույգերի խնդրառական յուրահատկությունները՝ խուսափելու համար դրանց գործածության մեջ հանդիպող շփոթից՝ **կախված լինել մեկից / մի բանից, կապված լինել մեկի հետ / մի բանի հետ**, (նաև՝ **պայմանավորված լինել**

մի բանով), շնորհակալություն հայտնել մեկին, շնորհակալ լինել մեկից /մեկին և այլն:

Թերևս արժե ևս մի անգամ առանձին անդրադառնալ **վերաբերել / վերաբերվել** և **համաձայնել / համաձայնվել** գույգերի կիրառության ոլորտներին և խնդրառական բնութագրերին: Առաջին գույգը կազմող բայերի կիրառության շրջանակները կարծես թե հստակեցված են. -վ- ածանցով ձևը «վերաբերմունք ունենալ, ցուցաբերել» նշանակությամբ գուգորդվում է միայն անձնանիշ ենթակաների հետ: Երկրորդ գույգը կազմող եզրերի համար գործածության նման որոշակիություն դժվար է սահմանել. երկուսն էլ գուգորդվում են տրական հոլովով կամ էլ տրականով ու **հետ** կապով ձևավորված խնդիրների հետ, իսկ արդի հայերենի քերականություններում և բառարաններում դրանք հիմնականում ներկայացվում են որպես հոմանիշ և փոխադարձ փոխարինելի կառույցներ: **Համաձայնվել** ձևը, որ կազմված է չեզոք սեռի բայից -վ- ածանցով, ըստ էության հակասում է հայերենի բայկազմության կանոնին (հմմտ.՝ **տուժվել, քծնվել, նախանձվել** և նման սխալ կազմությունները), սակայն հաճախադեպ կիրառությունը կարծես թե հանդուրժելի է դարձրել այն լեզվական նորմի մեջ: Հարցին նվիրված մի հոդվածում, համենայն դեպս, փորձ է արվում **համաձայնել /համաձայնվել** գույգի անդամների միջև իմաստային և կիրառական որոշակի տարբերություններ նշելու. «...Բայի երկու տարբերակների գործածության հիմքում իմաստային որոշակի տարբերակում,

այնուամենայնիվ, կա: Ածանցավոր բայը կա՛մ դրված է հոգնակի թվով և նշանակում է «համաձայնության գալ», այսինքն՝ փոխադարձ սեռի է, կա՛մ նույն նշանակությամբ գործածված է եզակի թվով՝ առանց միասնության խնդրի, որը, սակայն, հիմնականում գիտակցվում է, և հնարավոր է վերականգնել անձնանիշ գոյականի սեռական հոլով + հետ կապ»¹¹ (ընդգծումը բնագրում է): Կարծում ենք, սակայն, որ բերված իմաստակիրառական սահմանազատումն այնքան էլ համոզիչ չէ նույնիսկ հեղինակի կատարած վիճակագրական հաշվումների («Արևակի» նյութի հիման վրա) շրջանակում: Մեր տպավորությամբ **համաձայնել / համաձայնվել** բայերի կիրառության սահմաններն այսօրվա շարահյուսական կանոնի մեջ այդքան հստակորեն տարրորոշված չեն: Զուգահեռ (տրականով կամ **հետ** կապով) խնդրառության տարածված լինելը փաստելով հանդերձ, կարծում ենք, նախընտրելի պետք է համարել առանց -վ- ածանցի ձևը:

6. Խնդրառական մի անճշտություն ևս, որ հանդիպում է առավելապես գրավոր խոսքում, նաև գիտական (նույնիսկ լեզվաբանական) բնագրերում: Ուղևորման իմաստ արտահայտող բայերի տեղի պարագան (ու՞ր հարցն առնող), որն ըստ կանոնի պետք է դրվի ուղղական (հայցական) հոլովով, դրվում է ներգոյականով (հավանաբար այսպես կոչված «նե-

¹¹ Ներսիսյան Վարսիկ, Հայերենի **համաձայնել / համաձայնվել** բայերի իմաստային տարբերակման հարցի շուրջ, «Ջահուկյանական ընթերցումներ», Ե., 2016, էջ 170:

րակայման» տեղի պարագայի գուգորդային ազդեցությամբ): Ահա այդպիսի մի երկու օրինակ. Այդ շրջանից սկսած՝ հոգևորականներ և մտավորականներ մուտք են գործում այդ **երկրում** (Համացանց),Մայրը համաձայն չէր, որ աղջիկը մեծ **ընտանիքում** հարս գնար,Նա երկու տարի ինձ կանչել էր իր **համալսարանում** որպես պետական քննությունների հանձնաժողովի նախագահ (ԽԲ, «Հուշապատումներ»),Դրանք (դարձվածները)միայն այդ դեպքում են ավարտված միտք արտահայտում և ընկնում մտածական կապի **ուլորտում**, (ԽԲ),Այդ բառերը մուտք են գործում գրական **լեզվում**¹² և այլն:

7. Հայերենի շարահյուսական կանոնի պահանջներից մեկն էլ վերաբերում է անորոշ դերբայի գործիական հոլովով կազմված բառակապակցություններով (դերբայական դարձվածներով) նախադասություններին: Դեռևս Մ. Աբեղյանն էր զգուշացնում, որ նման կառույցներում «դերբայը և խոսքի բայը միշտ միևնույն ենթական ունին»¹³, ինչպես՝ «Նրանք, մի քանի ծուռ անցքեր **անցնելով, հասան** մի բարձր տեղ», «Ուռենին, կանաչագեղ ոստերը աջ ու ձախ **տարածելով, հովանավորում էր** մի փոքրիկ լճակ»: Մինչդեռ այսօրվա գրավոր և բանավոր խոսքում այնքան էլ հազվադեպ չեն այս օրինաչափության անտեսումները. «Լինելով մահմեդական երկիր՝

¹² Այս մասին տե՛ս նաև Մ. Ավագյան, Խոհեր մայրենի լեզվի մասին, Ե., 1982, էջ 77-78:

¹³ Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 406:

Հորդանանում հայերը վաղուց են բնակվում», «Գտնվելով Հորդանան գետի մոտ՝ քեզ է համակում քրիստոնեական անբացատրելի զգացում» («Արմենիա»), «Լինելով փխրուն արարած՝ ինձ միշտ հուզել է շրջապատի կարծիքն իմ մասին» (ԳԹ, հ. 40, 2016), «Դու, չունենալով դերասանական կրթություն, դժվար չէ՞ր խաղալ նրանց կողքին» (Համացանց) «Բնակվելով գյուղում՝ նրա կյանքը լիովին փոխվում է» և այլն: Ի դեպ, Մ. Ավագյանն իր գրքում բերում է այս սխալի ավելի քողարկված դրսևորման օրինակներ, երբ նախաստույթյան ստորոգյալն ու դերբայը տարբեր սեռի բայեր են. «Բառարանում բառերը **բերվում են** ժամանակագրական կարգով՝ **նշելով** նրանց գործածության ժամանակը», «Մենագրության մեջ**բնութագրված են** Սիամանթոյի ժողովածուները,**վերլուծված**՝ բանաստեղծությունները՝ **ընդգծելով** գրողի ստեղծագործական հասունացումը» և այլն¹⁴ :

Բնական է, որ այս կարգի անճշտություններից կարելի խուսափել սեփական գրավոր խոսքն առավել ուշադիր հսկելու պարագայում:

8. Ներկայացնենք հիմնականում լրատվության միջոցների (այդ թվում՝ գրավոր) լեզվում հանդիպող շարահյուսական վրիպումի ևս մի օրինակ: «Դիմավոր բայ + անորոշ դերբայ» կառույցի դիմավոր բայը հաճախ միայն եղանակավորիչ կամ կերպավորիչ արժեք է ունենում, իսկ բուն գործողությունն արտահայտվում է անորոշ դերբայով: Սեռանիշ -վ- ա-

¹⁴ Տե՛ս Մ. Ավագյան, նշվ. աշխ., էջ 82-83:

ծանցը նման կառույցում բնականաբար պետք է ընդունի հենց անորոշը: Օրինակ՝ «Նա շարունակում է կառուցել շենքը» և «Շենքը շարունակում է կառուցվել»: Պետք է խուսափել անանցի կրկնակի կիրառությունից, ինչն, օրինակ, արված է հետևյալ նախադասություններում. «Ձայնասկավառակը **սկսվել է ձայնագրվել** 2015 թվականին» (Հանրային ռադիո), «Մի հարց, որը քննարկվեց և **շարունակվում է քննարկվել** այսպիսի ծավալներով և այսպիսի տևողությամբ, նշանակում է մեկ բան...» («Իրավունք», հ. 115, 2016):

9. Վերադառնալով շարահյուսական տեղաշարժերի հարցում օտար ազդեցության խնդրին՝ հարկ է արձանագրել, որ «օտարածին» համարվող շարահյուսական միավորները լեզվական համակարգում միատեսակ «ընդունելության» չեն արժանանում: Վերը դիտարկված կառույցը՝ «բացարձակ աներևույթ» կոչվածը, ինչպես նշեցինք, չի հակասում հայոց լեզվի ներքին տրամաբանությանն ամենից առաջ հայերենի անորոշ դերբայի իմաստային յուրահատուկ նկարագրի պատճառով: Սրան հակառակ՝ մի շարք դեպքերում շարահյուսական կառույցը կամ դրա բաղադրատարրերը, լինելով օտար լեզվի ազդեցության հետևանք, չնայած տևական կիրառություններին, չեն հարմարվում հայերեն լեզվամտածողությանն ու չեն արմատավորվում լեզվական կանոնի շրջանակում: Ասվածը կարող է վերաբերել, օրինակ, **որպեսզի, եթե** շաղկապների որոշակի կիրառությունների: Նախ, պաշտոնական ոճում և թարգմանական երկերում, ի հեճուկս

մասնագետների բավական հետևողական հորդորների, դեռևս ձանձրացնելու չափ շատ են **որպեսզի** շաղկապի անձիշտ կիրառությունները՝ «Խնդրել ենք, որպեսզի օգնեն», «Ցանկանում ենք, որպեսզի հանրապետությունում օրենքը գործի», «Պահանջել է, որպեսզի դադարեցնեն», «Ժամանակն է, որպեսզի սթափվեք» և այլն¹⁵: Այս շաղկապների ռուսաբան անցանկալի կիրառության մի դեպքի՝ անորոշ դերբայով միակազմ նախադասությունների հետ սրանց զուգորդվելու մասին զգուշացրել է դեռևս Մ. Աբեղյանը. «Օտարաբանություն է անորոշ դերբայով անենթակա խոսքեր կազմելը, ինչպես՝ Եթե նրան հարցնել, նա կպատասխանի: -Որպեսզի հաջողություն ունենալ, պետք է շատ աշխատել: Այս խոսքերը հայերեն լինում են՝ Եթե նրան հարցնեն, նա կպատասխանի: -Հաջողություն ունենալու համար պետք է շատ աշխատել, կամ՝ Որպեսզի մարդ հաջողություն ունենա, պետք է աշխատի»¹⁶: Մեր օրերում ևս, թեև ոչ այնքան հաճախակի, այս կարգի սխալներ հանդիպում են: Ահա օրինակներ հեռուստահաղորդավարների խոսքից. «Եթե **անդրադառնալ** արևմտյան մեգաստղերին, ապա **կարելի է փաստել**, որ նրանք շատ են կարևորում քնելը» (ATV), Մա կարելի էր նկատել, եթե **ուշադիր լինել** («Հ. 2») և այլն

¹⁵ Տե՛ս նաև **Դ. Սարգսյան**, Խնդրառության մի քանի հարցեր, «Ջահուկյանական ընթերցումներ», Ե., 2014, **Հ. Գալստյան**, Ճիշտը և սխալը, Ե., 2007, էջ 76 և այլն:

¹⁶ **Մ. Աբեղյան**, Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965, էջ 373:

Ռուսերեն **если, чтобы** շաղկապների մի երրորդ կարգի կիրառության հայերեն պատճենումից էլ զգուշացնում է մերօրյա հայերենի մաքրության հարցերին նախանձախնդիր երախտավորներից մեկը՝ Պ. Բեդիրյանը: Խոսքը վերաբերում է նշված շաղկապներով սկսվող ռուսերեն ավարտուն (առանց գերադաս բաղադրիչի) նախադասությունների հայերեն կրկնօրինակմանը. «Որպեսզի վաղը մի մարդու պես ներկայանաք», «Եթե միայն երազանքս իրականանաք» և այլն: «Ռուսը կարգադրել կամ զգուշացնե՞լ է ուզում, թող ասի՝ **Чтобы** завтра на работу не опоздали, իսկ դուք՝ «Վաղն աշխատանքից չուշանաք, հա՛» կամ՝ «...չլինի թե ուշանաք» կամ՝ «Այնպես արեք, որ չուշանաք», կամ՝ «...մի՛ ուշանաք», կամ էլ՝ «...ձեր բաղձանքը այս բանաձևումներից մեկնումեկով պիտի հայտնեք՝ «Երանի թե... իրականանաք», «Ու՛ր էր թե... իրականանաք», «Ի՛նչ կլինե՞ր կամ ի՛նչ (ինչե՛ր) կտայի, որ... իրականանաք»»:¹⁷

Ընդհանրապես դժվար է չհամաձայնել արգո գիտնականի լեզվական նուրբ դիտարկումներին, սակայն **եթե** շաղկապով այս վերջին կարգի կառույցները (առանց գերադաս բաղադրիչի), մեր կարծիքով, դժվար է միանշանակորեն օտար կադապարի անընդունելի պատճենումներ համարել: Դրանք երևի խորթ չեն մեր լեզվամտածողությանը և հասկապես գեղարվեստական խոսքին որոշակի զգացական լիցք

¹⁷ Պ. Բեդիրյան, նշվ. աշխ., էջ 143-144:

են հաղորդում՝ արտահայտելով անկատար ըղձանքի ցավը:
Մի՞թե մեր լեզվին հարազատ չեն Տերյանի տողերը.

Ա՛խ եթե լիներ երկնային աշխարհ,
Եվ թռած լիներ քո հոգին պայծառ
Այնտեղ, ուր մաքուր երանության մեջ
Ապրում են այնքան լուսե հոգիներ
Եվ ժպտում երկնի աստղերից անշեջ,-
Ա՛խ եթե լիներ, ա՛խ եթե լիներ...¹⁸

Կամ՝ հայտնի իմաստախոսությունը՝ «Եթե երիտա-
սարդությունն իմանար..., եթե ծերությունը կարողանար...»,
հայերեն նույնքան բնական է հնչում, որքան «Երանի թե....ի-
մանար, երանի թե.... կարողանար» հոմանիշ տարբերակը, և
առաջինը նախընտրողներին օտարամոլ համարելը, գոնե
մեր կարծիքով, այնքան էլ արդարացի չի լինի:

10. Մեր լրատվության զանգվածային միջոցների լեզուն,
ինչպես որ հաճախ և իրավացիորեն ահագանգում են մաս-
նագետ լեզվաբաններն ու խնդրով մտահոգ այլ մտավորա-
կաններ, հիմնականում չի փայլում մաքրությամբ, ճշգրտությամբ,
խոսքի մշակույթի որակով: Առկա թերությունների մի
մասը, ինչպես վերևում էլ նշեցինք, հետևանք է հայոց լեզվի
շարահյուսական օրինաչափությունների չիմացության կամ
էլ սեփական խոսքի հանդեպ անփույթ վերաբերմունքի: Բե-
րենք շարահյուսական տարաբնույթ մեղանչումների մի
փունջ ևս լրատվամիջոցների (մեծ մասամբ՝ հաղորդավար-

¹⁸ Վ. Տերյան, Երկեր, Ե., 1989, էջ 148:

ների) խոսքից՝ առանց մեկնաբանության (ուշադրության են արժանի հասկապես կապային կառույցներում սխալ խնդրառության դեպքերը). «Արձանագրվել է հրազենային վնասվածք՝ **առանց թոքի վնասումով**» («Շանթ»), «Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում ճանապարհորդություն տարվա եղանակների **միջև**» («Շանթ»), «**Քանի դեռ** ստացիոնար պայմաններում **չստուգենք**, ոչինչ չենք կարող ասել» («Ազատություն» n/կ), «Նրա հետաքրքրությունը **փոխարինվեց սարսափի**» («Արմենիա»), «Չկարողանալով աշխատել **ըստ մասնագիտությամբ**՝ զբաղվում էր առևտրով» (Հանրային ռադիո), «Սա վերաբերում է բոլորին՝ սկսած հավաքարարից, վերջացրած **պատգամավորից**» (Համացանց), «Ստեղծվել է մի ստեղնաշար, որը կարելի է դեկավարել՝ **առանց կայչելով** ստեղներին» («Հ. 2»), «Այն երջանկությունը, որ տալիս է երեխան, չես **փոխարինի** ոչ մի **բանի հետ**» («Հ. 1»), «Ես կուզենայի, **որպեսզի** բոլոր մանկատները փակվեն, **որովհետև չլինեն** նման խնդիրները» («Հ. 2»), «Դատելով **Ձեզ**՝ դուք պետք է այլ ժանրով երգեիք» («Շանթ»), «Գիտելիքների ի՞նչ պաշար պիտի ունենան երեխաները՝ **բացի** անգլերենի **խմացության**» («Արմենիա»), «Այսինքն Դուք խնդիր չունե՞ք **հերոսով**» (Հ. 1), «Իրենց նախապատվությունը տալիս են **առանց բարելավիչով** հացին» (Հ. 1), «Ինձ ընդունիր, ինչպես կամ՝ իմ **կյանքի հետ հանդերձ**» («Արմենիա»), «Որքանո՞վ է **կախված** երկրի զարգացվածությունը (՝) **կոռուպցիայի հետ**» («Շանթ»), «Տրամաբանությամբ ելնելով՝ ընտրեցի «Հյուսիսային պատերազ-

մը»» («Արմենիա»), «Լավ է ժամանակ ծախսել խոհանոցում՝ **փոխարենը ուտելու** այս կուրիկները» («Հ. 1»), «**Թեև** արտասահմանյան հրավերներին՝ նա ցուցահանդեսներ է բացում արտասահմանում» («Հ. 1»), «Ձուլածո առարկաների **ձևից պայմանավորված՝** ստեղծվում են կադապարներ» («Շոդակաթ») և այլն, և այլն:

Իհարկե, հայերենի շարահյուսական համակարգի մեջ արդի փուլում առկա գուգաձևություններն ու կանոնից շեղումները շատ ավելի ընդգրկուն քննության նյութ կարող են լինել: Այս առումով հետաքրքրություն է ներկայացնում մասնավորապես բարդ նախադասության ոլորտը, որի ներսում առկա կապակցական, կիրառական, տրամաբանական տարաբնույթ դրսևորումները կարիք ունեն ուսումնասիրության և կանոնարկման:

ՇԱՐՄԱԶՅՈՒՄԱԿԱՆ ՆՈՐՄ. ԿԱՊԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Լեզվական նորմը (կանոնը) սահմանվում է որպես լեզվական համակարգի առավել կայուն, հանրայնորեն ընդունված տարրերի, իրակությունների, դրանց հարաբերությունների դրսևորման օրինաչափությունների ամբողջություն: Լեզվական տվյալ միավորը կամ իրողությունը որպես նորմատիվ (կանոնական) գնահատվելու համար պետք է բավարարի առնվազն հետևյալ երեք պահանջներին. ա) համապատասխանի տվյալ լեզվի կառուցվածքին, բ) հանրային հաղորդակցման ընթացքում զանգվածաբար և պարբերաբար վերարտադրվի և գ) լեզվակիր հանրության կողմից հավանության արժանանա և ընկալվի որպես կանոնավոր¹: Հատկապես այս վերջին պարագայում լեզվակիրառողին կարող են անհրաժեշտ լինել կողմնորոշիչ ուղղորդում և հանձնարարականներ՝ հիմնված մասնագիտական գնահատականների վրա: Սրանք էլ հենց կանոնարկման հիմնական նպատակն են:

Լեզվական (խոսքային) տարբերակները հանդես են գալիս լեզվի կառուցվածքային բոլոր մակարդակների միավորների դրսևորումներում՝ հնչունականից մինչև շարահյուսական: Հայերենի կանոնարկմանը նվիրված աշխատանքներն ու օրինասահման մարմինների՝ տարբեր ժամանակներում

¹ Sté u ЛИНГВИСТИЧЕСКИЙ ЭНЦИКЛОПЕДИЧЕСКИЙ СЛОВАРЬ, М. 1990, էջ 338:

ընդունած որոշումները առավելաբար վերաբերում են բառապաշարային (մասնավորապես տերմինաբանության), ուղղագրության, ուղղախոսության խնդիրներին: Ակնհայտ է, սակայն, որ խոսքի ճշտությանն ու ճշգրտությանը ներկայացվող պահանջները չեն կարող շրջանցել լեզվի քերականական կառուցվածքի՝ ձևաբանական և շարահյուսական միավորների գործածության, լեզվական նորմի դիրքերից դրանց գնահատության հարցերը:

Շարահյուսական մակարդակում լեզվական նորմի քննությունը բնականաբար պետք է ներառի կապակցության եղանակների՝ համաձայնության, խնդրառության, առդրության, դրանց իրացման միջոցների՝ կապերի, շաղկապների, շարադասության, հնչերանգի, նաև կետադրության հարցերը, դրանց կիրարկման ընդունված կանոնները, առկա տարբերակային ձևերի, փոխառյալ և օտարաբան կառույցների գնահատությունն այդ կանոնների դիրքերից: Ստորև կփորձենք այդ հայեցակետով դիտարկել արդի հայերենի մի շարք կապերի կիրառությունը:

Արդի հայերենի կապերի, դրանց ծագման, իմաստային և գործառական դասակարգումների, հոլովառության և գործածության հարցերը բավական հանգամանորեն լուսաբանված են ոչ միայն առանձին մենագրական ուսումնասիրություններում, այլև հայոց լեզվի քերականության դպրոցական

ու բուհական դասագրքերում, ձեռնարկներում²: Այս հոդվածում կփորձենք անդրադառնալ այսօրվա կենդանի խոսքում կապերի, դրանցով ձևավորվող շարահյուսական միավորների կիրարկության որոշ յուրահատկությունների, ներկայացնել որոշակի նկատառումներ ու գնահատականներ առկա զուգաձևերի, շեղումների ու սխալների վերաբերյալ: Քննության առիթը նաև մտահոգությունն է մեր զանգվածային լրատվամիջոցների, հատկապես հեռուստատեսության լեզվի մաքրության հանդեպ. դիտարկվող լեզվական փաստերի զգալի մասը մեր լեզվի կիրարկման հենց այդ ոլորտին է վերաբերում:

Կապերի ոչ կանոնական կիրառությունները պայմանավորված կարող են լինել մի քանի գործոններով: Նախ, քանի որ կապերի ամենատվորական գործառույթը բայական լրացումները բայ-լրացյալի հետ կապակցելն է, ուստի հանդիպող զուգաձևությունների ու շեղումների զգալի մասը առնչվում է հենց բայի խնդրառությանը: Այս առումով առանձին գնահատության կարիք ունեն հոլովական և զուգահեռ կապային կառույցները (գրոհել քաղաքը / քաղաքի վրա, ծանրանալ սրտին / սրտի վրա, միջնորդել հանձնաժողովի

² Տե՛ս **Ա. Մարգարյան**, Արդի հայերենի կապերը, Ե., 1955, **Մ. Աբրահամյան**, Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Ե., 1965, **Նույնի՝** ժամանակակից գրական հայերեն, Ե., 1980, **Մ. Ասատրյան**, ժամանակակից հայերենի ձևաբանության հարցեր, Ե., 1970 և այլն:

առջև / հանձնաժողովին, մտահոգվել մի բանով / մի բանի համար / մի բանի մասին և այլն): Այնուհետև, հաճախ են հանդիպում կապի և կապվող բառի (կապի խնդրի) ներքին խնդրառությամբ պայմանավորված գուգահեռ կամ սխալակազմ ձևեր (ըստ էության / ըստ էությամբ, բացառությամբ նշվածի / բացառությամբ նշվածից, բացի Հակոբը / Հակոբից բացի, առանց ծաղիկ / առանց ծաղկի և այլն): Խնդրառական կանոնից բացի շեղումներն այս պարագայում կարող են պայմանավորված լինել նաև այլ կարգի գործոններով, որոնցից կարելի է նշել կապվող բառի դասանշային պատկանելությունը՝ իրանշություն, անձնանշություն և այլն (օրինակ, հետևանքով, համաձայն, շուրջը (մասին) կապերը, որպես կանոն, գործածվում են ոչ անձնանիշ բառերի հետ), կապվող բառի առկայացական հատկությունը՝ որոշյալ կամ անորոշ (օրինակ, ըստ կապի հետ սխալ է գործածել որոշյալ, կից կապի հետ՝ անորոշ առումով բառեր և այլն), որոշ դեպքերում էլ՝ կապի ստուգաբանական իմաստի ոչ ճիշտ ընկալումը (հանձինս, ի դեմս, առ և այլն):

Կապերի գործածության մասնագիտական գնահատումներում նշվում են նաև օտար կառույցների պատճենումով կազմված ձևեր, որոնք գրեթե առանց խտրության հայերենի նորմի համար մերժելի և անհանձնարարելի են համարվում:

Այժմ մի փոքր ավելի հանգամանորեն՝ վերոնշյալ և նման կարգի իրողությունների մասնավոր դրսևորումների մասին:

Երևի պետք է մեկ անգամ ևս անդրադառնալ Աբեդյանի կողմից «անիսկական» կոչված այն կապերին, որոնք առանձնանում են իրենց խնդրառական յուրահատկությամբ՝ առաջին և երկրորդ դեմքի անձնական դերանունների հետ գործածվելիս պահանջելով տրական, իսկ գոյականների հետ՝ սեռական հոլովով խնդիրներ՝ մոտ, վրա, հետ, պես, չափ, համար, հոգուտ, հանձին(ս), ի դեմս, հանուն: Սրանցից խոսակցական հայերենում տարածվածները ազատորեն գործածվում են նաև նշված դերանունների սեռականի հետ՝ իմ վրա, քո հետ, մեր պես, իմ համար և այլն: Այս կիրառությունները, թեև գեղարվեստական գրականության լեզվում ևս հանդիպում են, այսօրվա գրական նորմի տեսակետից առայժմ անընդունելի են համարվում: Պետք է նկատի ունենալ, սակայն, որ մոտ, վրա, մասամբ՝ հետ կապերը նաև հոլովվում են, և սրանց թեքված ձևերի կողքին նշված անձնական դերանունները կանոնավորապես դրվում են սեռական հոլովով՝ իմ մոտից, քո վրայով և այլն (հոլովված բառերի մոտ դերանուններն ըստ էության հատկացուցչի դեր են կատարում):

ՄՈՏ կապի հիմնական իմաստը տարածական, երկրորդաբար նաև՝ ժամանակային մերձավորություն արտահայտելն է: Կանոնական է համարվում տարածական իմաստով սեռական-տրականի անորոշ (գյուղի մոտ), ժամանա-

կային իմաստով՝ որոշյալ (կեսօրին մոտ) ձևերի հետ գուգոր-
դումը: Առաջին դեպքում կապվող բառի որոշյալ կիրառու-
յունը ևս հնարավոր է (գյուղին մոտ), սակայն այստեղ կապն
ավելի շատ նախնական բառային իմաստն է դրսևորում (մո-
տիկ, մերձ): Մոտ կապի հետ ժամանականիշ բառի անհող
գործածության դեպքերը (լուսաբացի մոտ և այլն), որ խո-
սակցական լեզվում հանդիպում են հավանաբար նաև կողմ
հումանիշ կապի (առավոտվա կողմ և այլն) գործածության
համաբանությամբ, գրական լեզվի համար կանոնական չեն:
Տարածական նույն իմաստն արտահայտող կից, առընթեր
կապերի խնդիրներն արդեն կանոնավորապես պետք է
դրվեն տրականի որոշյալ տարբերակով³. սրանց անհող կի-
րառությունները գրական լեզվի նորմից շեղումներ են, ինչ-
պես Հուշարձանի կից տարածքը բարեկարգվում է, Գործկո-
մի առընթեր կառույցը լուծարվեց և այլն:

Մոտ կապով ձևավորվող որոշ կառույցներ էլ, բավակա-
նաչափ տարածված լինելով հատկապես չվերահսկվող բա-
նավոր խոսքում և նաև զանգվածային լրատվամիջոցներում,
այնուամենայնիվ խորթ են մնում գրական լեզվի կանոնին և
ընկալվում են որպես օտարաբանություններ: Սրանք ուղղա-
գիծ պատճենումներ են ռուսերեն «у» նախդրով կապակցու-
յունների՝ «Он у себя – Նա իր մոտ է», «У меня грипп – Ինձ
մոտ (մոտս) գրիպ է », «У тебя все получается – Քեզ մոտ ա-

³ Հմմտ. Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունք-
ները, Ե., 1974, էջ 434:

մեն ինչ ստացվում է» և այլն: Օտար այս կառույցներն առանց ճիգի կարող են փոխարինվել հայերեն համարժեքներով՝ «Նա իր սենյակում է», «Գրիպ եմ, Գրիպով հիվանդ եմ», «Քեզ ամեն ինչ հաջողվում է» և այլն:

Տարածական (երբեմն նաև այլ կարգի) հարաբերությունն արտահայտող ՎՐԱ կապի օտարաբան կիրառություններից կարելի է նշել, օրինակ, փողոցի վրա, հրապարակի վրա և նմանատիպ կառույցները, որոնք անհանձնարարելի են գրական խոսքում (կանոնական են փողոցում, հրապարակում և այլն): Մի շարք բայերի համար կանոնական է վրա կապով և զուգահեռաբար նաև տրական(ինչպես՝ հսկել, իշխել, ազդել, բռնանալ, թագավորել, ներգործել, ուշադրություն դարձնել և այլն) որոշ բայերի համար էլ՝ ուղղական հոլովով խնդիրներ առնելը (գրոհել, ողբալ, սգալ և այլն)⁴: Գրական նորմի շրջանակից դուրս՝ օտարաբան են որոշ բայերի՝ վրա կապով խնդիրները՝ սիրահարվել, ավանդել, կտակել, նվագե⁵ և այլն: Ընդհանրապես պետք է նշել, որ պատճենված կապային կառույցները անխտիր կերպով գրական լեզվի համար մերժելի և խոտելի համարելն էլ միակ ճիշտ մոտեցումը չէ (թեև տարածում գտած): Այս դեպքում նկատի ունենք, օրինակ, աշխատել բայի՝ վրա կապով խնդրառությունը՝ աշխատում է նոր վեպի (նկարի և այլն) վրա, որ հաճախ անթույլատրելի ռու-

⁴ Տե՛ս **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ. էջ 478:

⁵ Ավելորդ չէ նկատել, որ Մ. Աբրահամյանը *նվագել* բայի համար սովորական է համարում նաև *վրա* կապով խնդիրը. տե՛ս **Մ. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 315:

սաբանություն է դիտվում: Առաջարկվող թարգմանությունները (Նոր վեպ է գրում, նկար է նկարում և այլն) կարող են և ճշգրիտ չարտահայտել կապակցության իմաստը, ուստի կապի այդպիսի կիրառությունը գրական նորմի հանդեպ մեղանշում համարելու կարիք, կարծում ենք, չկա:

Հիմնականում տարածական հարաբերություն է արտահայտում SUԿ կապը, որի ոչ կանոնական կիրառությունները կապվում են օտար՝ հիմնականում թարգմանական տեքստերում հանդիպող կառույցների հետ: Առավել տարածվածը «մերձ» իմաստով կիրառությունն է որևէ տեղանվան (հիմնականում քաղաքի անվան) հետ՝ Մոսկվայի տակ, Կուրսկի տակ և այլն: Հատկանշական է, որ այս կառույցի կիրառության սովորական «միջավայրը» ռուսերենից թարգմանված բնագրերն են. ոչ ռուսական տեղանունների հետ (Երևանի տակ և այլն) այս կապը գրեթե չի հանդիպում, թարգմանություններում էլ այսօր առավել հաճախ նախապատիվ են համարում «մերձ» բաղադրիչով հայկազմությունները՝ под Москвой – Մոսկվայի մերձակայքում, подмосковный – մերձմոսկովյան, Подмосковье – Մոսկվայի մերձակայք և այլն (նույն «մերձ» բաղադրիչով են թարգմանվում ռուսերեն при- նախածանցով կազմությունները՝ Приамурье – Ամուրի մերձակայք, пригородный –բաղաքամերձ, իսկ նախածանցով կազմությունները՝ «անդր-» նախածանցով՝ Закавказье – Անդրկովկաս և այլն): Ուրեմն՝ «Մոսկվայի տակ» կարգի կապակցություններն այդպես էլ չեն մերվում արդի

հայերենի լեզվական կանոնին և գիտակցվում են որպես օտարաբանություններ: Տակ կապով մի շարք այլ կապակցություններ էլ, որոնք թերևս նույնպես օտար կաղապարների պատճենման արգասիք են, մեր պատկերացմամբ բոլորովին խորթ չեն հայերեն լեզվամտածողությանը՝ Երաժշտության տակ պարել, գտնվել տպավորության (ազդեցության) տակ, բառի տակ հասկանալ ինչ-որ բան և այլն:

ՇԵՏ կապը արտահայտում է միասնության՝ միասին լինելու, մի բան անելու հարաբերության իմաստ, որը «դրսևորվում է մեծ մասամբ տեղի ու ժամանակի ընդհանրության հողի վրա»⁶: Կապվող բառը, ստորադասվելով հանդերձ, տրամաբանական նույն հարաբերության մեջ է բայի հետ, ինչ որ ենթական, և այս հանգամանքը հաճախ պատճառ է դառնում ենթակայի և ստորոգյալի համաձայնության քերականական կանոնի խախտման «Մայրը դստեր հետ գնացին (փխ. գնաց) թատրոն» տիպի նախադասություններում: Այս կապի կիրառությունների հետ կապված՝ պետք է նկատի ունենալ, որ դրանք շատ հաճախ պայմանավորված են լինում լրացյալ բայի իմաստով կամ քերականական հատկանիշով, հարաբերվող եզրերի տրամաբանական առնչության բնույթով: Որոշ բայեր իրենց իմաստով ցույց են տալիս ենթակայի և կապվող բառի փոխադարձ գործողություններ, և դրանց խնդիրը միանշանակորեն ձևավորվում է հետ կապով՝ վիճել, կռվել, ամուսնանալ, հաշտվել, համբուրվել և այլն: Խընդ-

⁶ Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 338:

րառական տարբերակներ՝ կապով և առանց կապի՝ տրական հոլովով, առաջանում են այն դեպքերում, երբ բայի ցույց տված գործողությունը կա՛մ փոխադարձորեն վերաբերում է ենթակային և խնդրին, կա՛մ միակողմանիորեն ուղղված է ենթակայից խնդրին (սա կապված է նաև հարաբերվող եզրերի դասային պատկանելության և համատեքստի հետ): Տրամաբանական այս առնչությունը հաճախ պատշաճ ուշադրության չի արժանանում, սակայն կանոնավոր գրական խոսքում հարկ է նկատի ունենալ խնդրառական այս նրբությունը: Ս. Աբրահամյանն այս հայեցակետից հատուկ անդրադարձ է անում ծանոթանալ, հանդիպել, տեսնել բայերի խնդրառությանը. առաջին երկուսը, կախված տվյալ համատեքստում միակողմանի՞ թե՞ փոխադարձ հարաբերությունն արտահայտելուց, պահանջում են կա՛մ տրականով հանգման խնդիր (ծանոթանալ ձեռագրին, հանդիպել դժվարությունների), կա՛մ հետ կապով միասնության խնդիր (ծանոթանալ Արամի հետ, հանդիպել գրողների հետ), իսկ տեսնել բայը փոխադարձությունն արտահայտելու դեպքում փոխում է սեռը (տեսնել մեկին և տեսնվել մեկի հետ)⁷: Այս կարգի կրկնակ խնդրառություն ունեն նաև մի շարք այլ բայեր՝ հավասարվել, համագործակցել, հակադր(վ)ել, համարվել, զուգորդվել, ձայնակցել, միանալ, ձուլվել, համապատասխանել մեկին, մի բանի կամ մեկի, մի բանի հետ և այլն: Ասվածը կարող է վերաբերել նաև ածականների ու մակբայների խնդիր-

⁷ Տե՛ս Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 340:

ներին՝ մեկի, մի բանի կամ մեկի, մի բանի հետ զուգահեռ, համաչափ, ներդաշնակ, համաքայլ և այլն: Այս վերջին դեպքում կապվող բառերի դասային նշանակությունը՝ անձ կամ իր ցույց տալը, վճռորոշ դեր չունի. տարբերակների իմաստային տարբերությունը թերևս հանգում է հետևյալին. հետով կառույցների մեջ ընդգծվում է հարաբերվող եզրերի տրամաբանական համարժեքությունը, տրականաձև խնդիրների դեպքում էլ կարծես կախման հարաբերությունն է կարևորվում⁸:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ վերը ներկայացված կառույցների ճիշտ ընտրությունն ու կիրառությունը խոսքի հանդեպ որոշակի վերահսկում է ենթադրում: Մասնավորապես պետք է խուսափել հետ կապի ավելորդ գործածություններից՝ ծանոթանալ փաստաթղթերի հետ, բախվել դժվարությունների հետ և այլն: Այս հարցում ըստ երևույթին բացառված չէ նաև ռուսերենի ազդեցությունը, որտեղ հիշյալ կարգի բայերի խնդիրը միայն «с» նախդրով է ձևավորվում:

Միասնություն ցույց տվող մյուս կապը ՀԱՆԴԵՐՁ-ն է, որն իր այդ կիրառությամբ հնաբանությունների շարքն է անցել. ընտանյոք հանդերձ-ը փաստորեն քարացած ձև է: Հանդերձ կապի միասնության իմաստն արդի հայերենում, կարելի է ասել, լիովին տեղի է տվել զիջման (հակառակ հի-

⁸ Այս մասին տե՛ս նաև **Լ. Թեյլան**, «Շարահյուսական նորմ. զուգաձևեր և շեղումներ», Հայագիտության հարցեր, 2017, հ. 1, էջ 143:

մունքի) իմաստի առջև, որն էլ, որպես կանոն, դրսևորվում է կապի և անորոշ դերբայի գործիական հոլովի զուգորդումով. Վտանգը զգալով հանդերձ՝ մոտենում էր թշնամու դիրքին: Այս դեպքում էլ գրական նորմից շեղում պետք է համարել հանդերձ կապի այս զիջական իմաստի անտեսումը և ըստ էության հավելուրդային գործածումը հիմունքի պարագայի հետ: Ահա օրինակներ ԶԼՄ-ներից. Գյուլբենկյանը հասել է իր նպատակին, մենք էլ, նրա անվան դպրոցի սաներ լինելով հանդերձ, կհասնենք մեր նպատակին (Հ. 1), Դու, այդ երեխայի մայրը լինելով հանդերձ, պիտի ժամանակին մտածեիր նրա դաստիարակության մասին («Շանթ») և այլն:

Վերաբերության իմաստ արտահայտող ՄԱՄԻՆ, ՎԵՐԱԲԵՆԿՅԱՆ և նման կապերի գործածությունը նույնպես գրական կանոնին ներդաշնակելու առումով որոշակի շեղումներ է արձանագրում: Բանն այն է, որ նշված կապերով խնդիր կարող են պահանջել ասացական, մտածական՝ հաղորդման իմաստային դաշտին վերաբերող բայերը՝ ասել, հայտնել, խոսել, պատմել, մտածել, խորհել, ճառել և այլն, որոնցից ներգործականները, բնականաբար, ուղիղ խնդիր առնելու հատկություն ունեն: Սրանց մասին Գ. Ջահուկյանը գրում է. «Հաղորդում արտահայտող որոշ կարգի անցողական բայերի ուղիղ խնդիրը կարող է փոխարինվել մասին կապով խնդրով...՝ զեկուցել հարցը մեկին – զեկուցել մեկին հարցի մասին. այսպես նաև ասել, հաղորդել, հայտնել, տե-

ղեկացնել և այլն»⁹: Այսպիսով, իմաստային այս խումբը ներկայացնող շատ բայերի հատուկ է կրկնակ խնդրատություն՝ ուղղական հոլովով և «սեռական–տրական+մասին» կապային կառույցով՝ գրել, պատմել, հաղորդել, նշել, վկայել, գիտենալ (իմանալ) և այլն: Նույն իմաստային դաշտին վերաբերող զգալի թվով բայեր էլ կան, որոնց համար կանոնական է ուղղականով խնդիրը, և ոչ կանոնական՝ մասին կապով ձևավորվածը: Այդպիսի բայերից են քննել, ուսումնասիրել, բացատրել, ապացուցել, քննարկել, ներկայացնել և այլն: Մրանց խնդրատական բնույթի ոչ ճիշտ ընկալումն էլ ծնում է խոսքային վթարներ առօրյա հաղորդակցման մեջ, հաճախ նաև լրատվամիջոցների լեզվում: Ահա վերջինների մեջ հանդիպած մի քանի օրինակ. Սա ապացուցում է այն մասին, որ ես, իրոք, պատմական վայրում եմ (ATV, «Տնից հեռու»), Շատ հակիրճ կուզեի ներկայացնել մեր հիմնադրամի գործունեության մասին (Հանրային ռադիո), Ինչի՞ մասին է մեկնաբանում առողջապահության նախարարը (Համացանց), Մենք ևս կմասնակցենք երթին և կներկայացնենք նրա ընթացքի մասին («Շանթ»), Սա հենց ապացուցում է այն մասին, որ Արցախի հարցում ինչ-որ բան այն չէ (5-րդ ալիք), Խոսքը վերաբերում է կանանց ծաղիկներ նվիրելու մասին (ATV) և այլն:

ՓՈԽԱՐԵՆ, ՓՈԽԱՆԱԿ կապերի գործածության կանոնների մասին հաճախ գրվել է մասնագիտական և ուսում-

⁹ Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 474:

նական հրապարակումներում¹⁰, սակայն այսօրվա լրատվամիջոցներում և առօրյա հաղորդակցման մեջ սակավադեպ չեն դրանց կիրառության անճշտությունները: Փոխարենը գուտ կապային կիրառությունն ունի, մինչդեռ փոխանակ բառը և՛ կապ է, և՛ շաղկապ (չնայած, մինչև, նախքան բառերի նման): Սրանք տարբեր են նաև կապվող միավորի հանդեպ գրաված դիրքով. Փոխարենը հետադրություն է, փոխանակը՝ նախադրություն, հետևաբար և չեն կարող փոխարինել իրար միևնույն խոսքաշարում: Շարահյուսական նորմի ակնհայտ խախտման օրինակներ են այն նախադասությունները, որոնցում փոխարեն բառը որպես շաղկապ է կիրառվում՝ երբեմն էլ օժտվելով ը որոշիչ հոդով. Իմ գործընկեր լրագրողները, փոխարենը կանգնեն իմ կողքին, ոչ մի խոսք չասացին (Հ 3), Լավ է ժամանակ ծախսեն խոհանոցում, փոխարենը ուտեն այդ կուրիկները (Հ 1), Փոխարենը իրենք ընկնեն քո ոտքերը, դու ես իրենց հետևից քարշ գալիս (Հ 1), Փոխարենը պաշտպանի հաշմանդամին, մայրը մյուս որդուն է պաշտպանում (ATV, «Կիսաբաց լուսամուտներ») և այլն: Առայժմ թերևս միայն խոսակցական լեզվի մակարդակում նկատվում է փոխանակ շաղկապի գործառույթով գոնե վերաբերականի (ավելի հազվադեպ՝ քան (թե) կապի) կիրառումը. Ուղևորները գոնե իրար օգնեին, շուտ դուրս գային, ճամպրուկներն էին վերցնում («Շանթ»), Քան թե ասի «հայրիկ», ասում է «պապա» և այլն:

¹⁰ Տե՛ս, օրինակ, **Պ.Բեղիբյան**, Հայ լեզուն և մեր խոսքը, Ե., 1999, էջ 80-81:

ՀԱՆՁԻՆ(Ս), Ի ԴԵՄՍ - Գլխավորապես գրական լեզվին հատուկ այս կապերի գործածության կանոնը հետևյալն է. Հանձին-ը պահանջում է եզակի թվով խնդիր, հանձինս-ը՝ հոգնակի (ստուգաբանական իմաստը հաշվի առնելով՝ սրանց հետ բնական կլինի անձ ցույց տվող բառերի զուգորդումը), ի դեմս-ի դեպքում թվային կամ դասային սահմանափակում չկա: Առաջին երկուսի (սրանցից առավել գործածականը հանձինս-ն է) կիրառության սխալները թվային նշված համապատասխանության անտեսման հետևանք են, ինչպես՝ Հանձինս Գաբրիելի՝ ունենք բարձրակարգ շախմատիստ (ռադիո): Ավելորդ չենք համարում մի նկատում ևս ներկայացնել. խոսքի մեջ ստեպ-ստեպ հանդիպում է հանձինս բառի անհարկի՝ հավելուրդային գործածություն՝ հավանաբար խոսքին գրական երանգ հաղորդելու միտումով (գուցե և անձամբ մակբայի հետ շփոթելու հետևանքով): Սա սպրդում է երբեմն լրատվամիջոցների լեզու, օրինակ. Ես հանձինս չեմ հավատում աստղագուշակությանը (Հ1), Մենք՝ հայերս, շատ ենք սիրում Կուրան և կուրացի պարուհիներին. հանձինս ես («Արմենիա») և այլն.

Լրատվության միջոցների լեզվում կապերի կիրառության որոշ անկանոնություններ, ինչպես նշվել է, կապված են լինում կապերի, մանավանդ հնաբանությունների նախնական ստուգաբանական նշանակությունների անստույգ ընկալման հետ, ինչը պատճառ կարող է դառնալ, օրինակ, նույնիմաստ երկու կապերի համատեղ կիրառման, ինչպես՝ Ես

հաղորդումը պատրաստում եմ իմ մի քանի աշխատողների հետ հանդերձ (Հ 2), Ինձ ընդունիր ինչպես կամ՝ իմ կյանքի հետ հանդերձ (Արմենիա), 1990-ից մինչև առ այսօր նրանից ոչ մի տեղեկություն չունենք (Հ 1), Որտեղի՞ց գտաք այդ սերը դեպի թատրոնի նկատմամբ (Արմենյուզ), Միշտ էլ պայքարել է հանուն իր նպատակի իրագործման համար (5-րդ ալիք) և այլն: Երբեմն էլ նախդրիվ կազմությունների (ի դեմս, ի փառս, ի տրիտուր և այլն) համաբանական տպավորությամբ ստեղծվում և գործածվում են սխալ ձևեր (ի շնորհիվ, ի դեմ և այլն): Օրինակ՝ մենք հաղթեցինք ի շնորհիվ հայ զինվորի և Արցախի այցելած (՝)ազատամարտիկների (Հ 1), Մեր հարևան երկիրը ոչինչ չի խնայում ի դեմ Արցախի (Հ 2) և այլն: Հետևյալ օրինակն էլ (որի հեղինակն, ի դեպ, մշակույթի հայտնի պաշտոնյա է) կապի՝ սխալ նշանակությամբ կիրառելու ոլորտից է. Ի փառս նրա, որ մենք ունենք տաղանդավոր կոմպոզիտորներ, մենք կարողանում ենք համերգներ տալ արտերկրում (Հ 2):

Կապերի հարանունությունը (օր. մեջ – միջև) նույնպես առիթ կարող է լինել կիրառության անճշտության. Ոչ մի տարբերություն ՀՀՇ-ի, ՀՀԿ-ի, ՔՊ-ի մեջ (Հ2), Խմբագրի և լրագրողի մեջ վեճ է առաջացել (ռադիո), Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում ճամփորդություն տարվա եղանակների միջև (փխ.՝ միջով) («Շանթ») և այլն:

Հայերեն խոսքում այսօր ևս սակավադեպ չեն որոշ տարածված կապերի հոլովառության ընդունված կանոններից

կատարվող շեղումները: Այսպես, առանց կապի խնդիրը օրինաչափորեն պետք է ձևավորվի սեռական-տրական հոլովով (բացի այս, այդ, այն դերանուններից, որոնք չեն հոլովվում), սակայն բանավոր հաղորդակցման ընթացքում, նաև հեռուստահաղորդումներում այս կապի հետ հաճախ դնում են ուղղականով կապվող բառ, մի բան, որ «առհասարակ բնորոշ չէ հայերենին...., խիստ բարբառային է առանց կապի գործածությունը անորոշ դերբայի հայցականի հետ, ինչպես՝ Առանց կարդալ (փոխանակ առանց կարդալու) պատմեց դասը»¹¹: Նաև՝ Առանց բրինձ այստեղ՝ Վիետնամում, հնարավոր չէ (ATV), Այդ ու՞ր առանց ծաղիկ (գովազդ) և այլն: Առավել խոտելի են առանց կապի հետ գործիական հոլովի կիրառման դեպքերը, որոնք թերևս բացատրելի են գործիականով լրացումների հոգեբանական ազդեցությամբ. Ստեղծվել է մի ստեղնաշար, որ կարելի է դեկավարել առանց կապի ստեղծումներին (Հ 2), Կարո՞ղ եմ առանց դատարանի միջնորդությամբ ամուսնալուծվել (Հ 3), Արձանագրվել է հրազենային վնասվածք՝ առանց թոքի վնասումով («Շանթ»), Աննան խաղում է մենակ՝ առանց ամուսնու օգնությամբ (Հանրային ռադիո), և այլն: Նմանատիպ շեղումներ են նաև բացի կապի հետ ուղղական հոլովի (Բացի եղանակային պայմանները՝ շատ այլ պատճառներ էլ կան), առավել ևս՝ բացառականի փոխարեն տրականի կիրառումը՝ Գիտելիքների ի՞նչ պաշար պիտի ունենա երեխան՝ բացի անգլերենի իմացության («Ար-

¹¹ Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 353:

մենիա»), ըստ կապի հետ՝ տրականի փոխարեն գործիականով խնդիրը՝ Ամեն ինչ արված է ըստ օրենքի տառով («Շանթ»), Ըստ Փաշինյանի հայտարարությամբ՝ սահմանադրությունը կարված է Սերժ Սարգսյանի հագով («Կենտրոն»), Ըստ ճաշակով ավելացնում ենք համեմունքներ («Շանթ»), Չկարողանալով աշխատել ըստ մասնագիտությամբ՝ զբաղվում էր առևտրով (Հանրային ռադիո) և այլն:

Կապերի հոլովառության կանոնից շեղումները, ինչպես նշել ենք, կարող են կապված լինել նաև կապվող բառի առկայացական տարբերակի, մասնավորաբար դրա որոշյալ կամ անորոշ ձևի ճիշտ ընտրության հետ: Որոշիչ հոդը, ինչպես հայտնի է, հայերենում կցվում է ուղղական և տրական հոլովներին: Ուղղական հոլով պահանջող որոշ կապերի հետ կապվող բառը կարող է գործածվել և՛ որոշյալ, և՛ անորոշ առումներով՝ առանց հոլովական իմաստների տարբերակման՝ դեպի գյուղ(ը), մինչև ամառ(ը), ինչպես (որպես) արծիվ(ը) և այլն, դրանց մի մասն էլ պահանջում է կա՛մ միայն որոշյալ (նախքան գնալը, ձորն ի վար), կա՛մ անորոշ (օրեր անց, տարիներ հետո, ի գիտություն) առումներով խնդիրներ: Երբեմն էլ կապվող բառի առումը կախված է բառիմաստից՝ սարն ի վեր և տարիներ ի վեր: Մեռական-տրական հոլով պահանջող կապերի հետ որոշյալ կամ անորոշ առումով բառերի գործածության հարցն ըստ էության հանգում է առանձին սեռական և տրական հոլովների տարբերակման՝ ցայսօր բանավիճային համարվող խնդրին, որին անդրադառնալը,

բնականաբար, դուրս է մեր քննության շրջանակից: Նշենք միայն, որ այսպես կոչված բուն տրական հոլով պահանջող կապերի հետ գոյականները որպես կանոն կիրառվում են որոշյալ առումով՝ տոներին ընդառաջ, դասերին գուգրնթաց, կառավարությանն առընթեր, գետնին հավասար, պայմաններին համապատասխան և այլն. սրանց անորոշ առումը կարող է պայմանավորված լինել կապակցական այլ գործոններով՝ ինչ-որ տոնի ընդառաջ, որոշակի դասերի գուգրնթաց և այլն: Բուն տրական հոլով պահանջող որոշ կապերի խնդիրը կարող է նաև անորոշ առումով դրվել (համաձայն, հակառակ, նայած և այլն): Առկայացական տարբերությունները երբեմն պայմանավորում են կապվող բառի տարբեր գործառույթներ՝ որոշման(ը) դեմ, սեղանի(ն) մոտ և այլն: Պես կապը որոշյալ առումով խնդրի հետ ժամանակային նշանակություն է արտահայտում (տեսնելուն պես), անորոշ առումով խնդրի հետ՝ ձևի (չսիրելու պես):

Շարահյուսական նորմից յուրատեսակ շեղում է նաև կապի շարահյուսական դիրքում նույնանշանակ, սակայն կապային կիրառություն չունեցող շաղկապի գործածությունը: Վերջին շրջանում, օրինակ, հաճախ է այսպես կիրառվում թեև (թեպետ) շաղկապը՝ չնայած կապի փոխարեն. Թեև մարդաշատությանը՝ ուստիկանությունը հատուկ խստություն չի ցուցաբերում («Ազատություն»), Թեև արտասահմանյան հրավերներին՝ նա ցուցահանդեսներ է բացում Հայաստանում (Հ 1), Մեր շրջապատում կան երիտասարդներ, ո-

րոնք, թեպետ տարիքին, լուրջ բիզնեսներ ունեն (Հ1) և այլն: Նույն կերպ հանդիպում են մինչև, մինչդեռ, քանի դեռ շաղկապների անսովոր կիրառության դեպքեր՝ թերևս ոչ հայեցի լեզվամտածողությամբ պայմանավորված. Մինչև մենք հավատում ենք հրաշքներին, մենք ողջ ենք և առողջ («Շանթ»), Մինչև եվրադատարանը քննում է Լապշինի հարցը, նա որպես զբոսաշրջիկ գտնվում է Հայաստանում (Հ1), Քննարկումներ առայժմ չեն կարող լինել, մինչդեռ կառավարությունից նախագծեր չբերեն (Հ1), Մինչև Գլումովը ողջ-առողջ է, դուք պետք է խրթխրթաք («Շանթ») և այլն:

Ամփոփելով կարելի է արձանագրել, որ կենդանի խոսքում կապերի կիրառությունների դիտարկումը, դրանց՝ լեզվական նորմի հայեցակետից գնահատումներն ու տրվող հանձնարարականները որոշակի նպաստ կարող են բերել հայերենի կանոնարկման գործին:

ՈՐ ՇԱՂԿԱ՞Պ, ԹԵ՞ ԴԵՐԱՆՈՒՆ

Շարահյուսական հարաբերությունների արտահայտիչները, ինչպես հայտնի է, լեզվի համակարգում գործառող կապակցության միջոցներն են՝ բառահարաբերական թեքույթներ, սպասարկու բառեր (կապեր, շաղկապներ, նախդիրներ և այլն), շարադասություն, հնչերանգ և այլն: Հայերեն խոսքում սրանց գործառույթը հիմնականում կապակցության տարբեր եղանակների իրացումն է, շարահյուսական միավորների (բառերի, բառակապակցությունների (շարույթների), նախադասությունների և այլն) միջև կախումնային տարբեր հարաբերությունների՝ համադասության և ստորադասության (և սրանց զանազան համակցությունների) դրսևորումը¹:

Շարահյուսագիտական աշխատություններում երբեմն ոչ միանշանակ գնահատականների են արժանանում ինչպես կապակցության եղանակի, այնպես էլ կապակցող միջոցի որոշ դրսևորումներ: Կարելի է նշել, օրինակ, հատկացուցչի և հատկացյալի (նաև գոյական որոշչի և որոշյալի) կապակցությունը ամոթական կամ խնդրառական համարելը, որոշ կարգի բարդ նախադասությունների (օրինակ՝ **ուստի, ու-**

¹ Նորագույն որոշ ուսումնասիրություններում այս կարգի շարահյուսական հարաբերությունները կոչվում են **դրավորումներ** և բաժանվում են համադասական, միադասական, նույնադասական և տարադասական տիպերի. տե՛ս **Դ. Գյուլգաստյան**, Գրական արևելահայերենի քերականության հիմունքներ, Ե., 2016, էջ 194-201:

րեմն և այլ շաղկապներով կապակցված՝ ստորադասական կամ համադասական տիպին հասկացնելը, անշաղկապ կառույցների, բազմաբաղադրիչ բարդ նախադասությունների քննության տարբեր հայեցակերպերը և այլն:

Շարահյուսական իրողությունների անմիանշանակ մեկնաբանությունները, ըմբռնումների զուտ տեսական տարրընթերցումներից բացի, հաճախ դրանց գործնական կիրառության, նաև ուսուցման ոլորտներում (մասնավորաբար, ասենք, կետադրության) տարարժեք մոտեցումների պատճառ են դառնում՝ բնականաբար առաջ բերելով կանոնարկման և կողմնորոշիչ հանձնարարականների անհրաժեշտություն:

Այս նախնական դիտողություններից հետո փորձենք հանգամանորեն անդրադառնալ որպես վերնագիր ընտրված հարցադրմանը:

Հարցի պատասխանը, իհարկե, հանրահայտ է և միանշանակ. **ոք**-ը և՛ դերանուն է, և՛ շաղկապ. գործ ունենք համանունական գույգի հետ, որն առաջացել է հարաբերական դերանվան խոսքիմասային իմաստի մթագնման և նրանում կապակցական նշանակության գերակայության հաստատման ճանապարհով: Հանրահայտ ճշմարտություն է նաև, որ կապակցական բառերը՝ կապերն ու շաղկապները, համատարած կերպով հենց այդ ճանապարհով էլ առաջանում են՝ լեզվի բառապաշարում մշտապես և շարունակաբար տեղի ունեցող իմաստային տեղաշարժերի ընդհանուր տրամաբանության շրջանակում: Իմաստային փոփոխություններն ու

անցումները, սակայն, միևնույն ընթացքը չունեն և մանավանդ միատեսակ վերջնական արդյունքի չեն հանգում: Կապակցական բառերի մեջ այս տեսակետից տարբեր շերտեր կարելի է առանձնացնել: Դրանց մի մասը վաղուց անտի կորցրել է իմաստային կապը իրեն ծնունդ տված նյութական իմաստակիր միավորի հետ, և այդ կապը հնարավորության դեպքում կարող է բացահայտվել ստուգաբանական հատուկ քննությամբ (օրինակ՝ **առ, ի, ըստ, ընդ** և այլ կապերը, **և, ու, բայց** և այլ շաղկապները), մի այլ դեպքում էլ այդ միավորների ստուգաբանական առնչությունը բավական թափանցիկ է, սակայն համաժամանակյա դիտվածքում դրանք գիտակցվում են որպես լիովին ինքնուրույն, այսինքն՝ իմաստային կապը համանունական գույգի անդամների միջև ժամանակի ընթացքում իսպառ վերացել է. համեմատենք, օրինակ՝ «Ծանոթ եմ գրքերի մեծ **մասին**» և «Խոսում էինք նրանց **մասին**», «Թիվ ու **համար** չկար թշնամու գորքին» և «Քեզ **համար** նվեր գնեցի», «Ընտանյոք **հանդերձ** ներգաղթեց» և «Հարսնացուն շքեղ **հանդերձ** էր հագել» և այլն: Գրեթե այս կարգի են նաև բառաձևերից սերող այլ կապակցական բառեր՝ **շնորհիվ, առթիվ, հանձին(ս), վերաբերյալ, որովհետև, ուստի** և այլն: Կապակցական բառերի մի ստվար խումբ էլ կազմում են այսօր որպես լիիմաստ խոսքի մասեր լայնորեն գործածվող բառերի իմաստագործառական տարբերակները. սրանք թերևս կարող են գնահատվել ոչ թե որպես համանունական գույգի տարբեր եզրեր, այլ միևնույն բառի (բառույթի) գործառական

տարարժեքության դրսևորումներ: Ընդամին այսպիսի անցումները սովորական են նաև նյութական (օրինակ՝ անասնական – գոյական) և ոչ նյութական խոսքի մասերի ներսում (հմմտ. **մինչև** (կապ) – **մինչև** (շաղկապ), **չնայած** (կապ) – **չնայած** (շաղկապ), **էլ** (վերաբերական) – **էլ** (շաղկապ), **թեկուզ** (վերաբերական) – **թեկուզ** (շաղկապ) և այլն):

Գործառական տարարժեքության առանձնահատուկ դրսևորում պետք է համարել հարցական և հարաբերական կոչվող դերանունները: Սրանք միննույն բառային իմաստով օժտված բառերի (բառույթների) խումբ են և այս հիմունքով միավորվում են որպես դերանվան մեկ տեսակ², սակայն իրենց գործառական տարարժեքության հիմունքով էլ հաճախ առանձնացվում են որպես դերանվան առանձին տեսակներ՝ ըստ էության որպես բառային համանուններ³: Այս խմբի բառերն իրենց «հարաբերական» կապակցական կիրառությամբ հայտնվում են ստորադասական շաղկապների գործառական դաշտում, սակայն, ի տարբերություն վերջինների, պահպանում են դերանվան նյութական նշանակությունը՝ պաշտոնակիր անդամի դիրք զբաղեցնելով ստորադաս նախադասության կազմում: Այս խմբի բառերի այսպես կոչված «հարցական» և «հարաբերական» գործառական դրսևորումները դյուրավ ճանաչելի են, մանավանդ եթե իմաստային ո-

² Տե՛ս **Ս. Աբրահամյան**, Ժամանակակից գրական հայերեն, Ե., 1981,

էջ 183, **Ա. Մարգարյան**, Հայոց լեզվի քերականություն, Ե., 2004, էջ 297:

³ Տե՛ս **Ս. Ասատրյան**, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1983, էջ 192, 196:

րոշակիությամբ են օժտված (օրինակ՝ **ով** – անձ, **ինչ** – իր, **ինչպես** – ձև, **ինչքան** – քանակ և այլն):

Այս խմբի բառերի մեջ իր իմաստի ընդհանրականությամբ առանձնահատուկ տեղ է գրավում **որ**-ը. նյութական առումով սա արտահայտում է հատկանիշի, փոխանվանաբար նաև՝ առարկայի չտարբերակված հասկացություն, իսկ կապակցական դերով հաճախակի կիրառվելու հետևանքով զրկվելով նյութական իմաստից՝ շաղկապների կարգն է անցնում: Առաջանում է գործառական եռանդամ համանունություն՝ **հարցական դերանուն – հարաբերական դերանուն – շաղկապ** եզրերով: Թե՛ որպես հարաբերական դերանուն և թե՛ որպես շաղկապ **որ** բառը աներկբայորեն արդի հայերենի՝ ստորադասական կառույցներ ձևավորող ամենատարածված և ամենից արդյունավետ միջոցն է: Այն կարելի է բնութագրել որպես ստորադասություն արտահայտող բազմագործառույթ մի նշույթ, որը «կարող է հանդես գալ ստորադասական շաղկապների գրեթե բոլոր նշանակություններով ու երանգներով, բացառությամբ զիջականի»⁴: **Որ** շաղկապի կիրառության ամենից ավելի բնական ոլորտը, որտեղ նրա դերանվանական նախնական իմաստը այլևս չի գիտակցվում, հոգեմտավոր կամ կամային (ոչ ֆիզիկական) բնույթի գործողություններ արտահայտող բայերին (**զգայ, հասկանալ, իմանալ, տեսնել, լսել, հավատալ, կասկածել** և այլն) լրացնող

⁴ **Գ. Գարեգինյան**, Շաղկապները ժամանակակից հայերենում, Ե., 1963, էջ 187:

ստորադաս նախադասություններ կապակցելն է, սակավադեպ չեն նաև այս շաղկապով կապակցված՝ գոյականով կամ գոյականի արժեքով գործածված բառերին, ինչպես և **այն, այնպիսի, այնքան, այնպես** և այլ հարաբերյալներին փոխարինող երկրորդական նախադասություններով կառույցները: Այս երկրորդականները ըստ իրենց շարահյուսական պատճառների բազմազան են՝ ենթակա, ստորոգելի, որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ, խնդիր, պարագա: Կիրառական բազմազանության և հաճախականության տեսակետից **որ**-ի հետ կարող է համեմատվել **թե** շաղկապը. սրա կիրառության ոլորտը մի փոքր սահմանափակվում է լրացյալ գերադաս նախադասությունների երկբայական, հարցական կամ ժխտական նշանակությունների պատճառով (օրինակ՝ **Մտածում էին, թե նա լավ կովող չէ, Հարցրին, թե ինչ է ուզում և այլն**), սակայն իմաստային այդ սահմանափակումը չեզոքանում է ենթաստորադաս կառույցներում (օրինակ՝ **Ընկերը չէր ուզում, որ հրամանատարն իմանա, թե նա լավ կովող չէ**)⁵:

Որ բառի հարաբերական և շաղկապական գործառույթները, ինչպես նշեցինք, մեծավ մասամբ հեշտությամբ զանազանվում են, սակայն հայերեն խոսքում հանդիպում են այնպիսի «անցումային» բնույթի կառույցներ, որոնցում **որ** բառի դերանվանական իմաստը հայտնապես «նահանջել» է (որի նշաններն են այդ դիրքում սպասելի հողի կամ թվային վերջավորության բացակայությունը), սակայն, հետազոտողնե-

⁵ Հմմտ. նույն տեղում, էջ 192:

րից շատերի կարծիքով, լիովին չի վերացել: Խոսքը վերաբերում է բարդ նախադասության այն կառույցներին, որոնց ստորադաս բաղադրիչը գոյական անդամի լրացման (առավելապես՝ որոշչի) պաշտոն է կատարում, իսկ կապակցող **որ** միավորը հանդես է գալիս ուղիղ ձևով՝ առանց հոդի: Շարահյուսագիտական ավանդույթով այս միավորը գնահատվում է որպես հարաբերական դերանուն, որը ստորադաս նախադասության մեջ ենթակայի կամ ուղիղ խնդրի պաշտոն է կատարում (օրինակ՝ «Մարդը, **որ** մոռացել է անցյալը...», «Բաժակը, **որ** երեխան կոտրեց...» և այլն): Շարահյուսական այս դիրքերում ենթական կամ խնդիրը կանոնի պահանջով պետք է դրվեն որոշյալ առումով (ինչը սովորական է **որ** հարաբերական դերանվան համար և նրա գոյականական կիրառության հիմնական ցուցիչը), և **որ**-ի անհոդ կիրառությունն, ինչպես նշվեց, նրա դերանվանական արժեքի մթազրնման նշան է, սակայն հավանաբար բավարար հիմք չէ այն շաղկապ համարելու: Նյութական իմաստից հեռացած լինելն ավելի ակնհայտ է որոշչային այն նախադասություններում, որոնցում **որ** բառը ենթակայի դիրքում «անտարբեր» է մնում նաև ստորոգյալի հետ թվով համաձայնելու նորմի հանդեպ: Օրինակներ՝ «Եվ պոետներ, **որ** չեն պղծել իրենց շուրթերն անեծքով» (Հ. Թումանյան), «Մարդիկ, **որ** մարդ չեն, այլ ավելի շուտ մարդակերպ կապիկ» (Պ. Սևակ) և այլն: **Որ**-ի այս կարգի կիրառությունն էլ մասնագետները հիմնականում դերանվանական են համարում. գրեթե համընդհանուր այս գնահա-

տականը, այնուամենայնիվ, չի ընդունում պրոֆ. Ա. Պապոյանը: Ահա **որ**-ի վերոբերյալ գործառնությունների նրա մեկնաբանությունը. «**Որ** հարաբերականի եզակի թվի անհոդ ուղղականը արտաքուստ նույնանում է համանուն շաղկապի հետ: Պարզելու համար կապակցության հարաբերակա՛ն թե շաղկապակա՛ն լինելը՝ պետք է նկատի ունենալ հետևյալը: Բոլոր այն կառույցներում, որտեղ գերադաս բաղադրիչի որոշյալը **եզակի թվով** է կիրառված, կապակցությունը **հարաբերական** է, իմա՛ **որ** նշույթը հարաբերական դերանուն է և կատարում է երկու դեր. ա. նախադասության անդամ է (առավելապես՝ ենթակա կամ ուղիղ խնդիր), բ. կապակցում է գերադաս և ստորադաս նախադասությունները:Բոլոր այն կառույցներում, որտեղ գերադաս բաղադրիչի ստորոգյալը **հոգնակի թվով** է կիրառված, **որ**-ը շաղկապ է: Դա կարելի է դիտարկել հետևյալ օրինակում. Եվ **կույսեր, որոնց** ծոցի մեջ լուսե Լուսնի լույսն անգամ ծածուկ չէր հոսել, **Որ** երկչոտ էին, ինչպես եղջերուն, **Որ** աննյութ էին, ասես հորինված Մի հովվերգական վեպի էջերում (...), Օֆելյայի պես այժմ ցնորված՝ խելագարվածի իրենց ճիչերում Դարձյալ մոռանալ չէին կարենում այն դժոխքը սև (ՊՄ):

Այստեղ ունենք **կույսեր – որոնք (որոնց)** կաղապարը, որ հարաբերական կապակցություն է, քանի որ որոշյալը և հարաբերականը համաձայնեցված են թվով, իսկ շարունակության մեջ առկա են **կույսեր – որ** կաղապարով երկու կապակցություններ, **որտեղ որ**-ը շաղկապ է՝ որոշյալի հետ թվային

անհամաձայնության պատճառով, և կապակցությունը շաղկապական է»⁶ (ընդգծումները բնագրում են):

Գ. Գարեգինյանը որոշչային երկրորդական նախադասություններում **որ**-ի՝ հարաբերական դերանուն լինելը վերապահությամբ է ընդունում՝ հիմք ընդունելով նրա ուղիղ ձևի կիրառությունը սպասելի այլ հոլովական ձևի փոխարեն: Նա գրում է. «Հաճախ այս **որ** հարաբերականը թվով կամ հոլովով անհամաձայն մնալով, շփոթվում է **որ** շաղկապի հետ: Առավել դժվար է որոշել նրա ինքնությունը, երբ հոլովով է անհամաձայն մնում: ...Տարբեր մեկնությունների տեղիք կարող է տալ **որ** բառի հետևյալ կիրառությունը՝ Ինչո՞ւ է կյանքը հաճախ այնպիսի չար խաղեր խաղում, **Որ** մտածելիս մարդու սրտի մեջ արյունն է պաղում (ՊՄ)»: Այստեղ այն կարող է դիտվել որպես շաղկապ, կամ կարող է ըմբռնվել որպես հոլովով անհամաձայն մնացած հարաբերական դերանուն՝ «որի մասին» նշանակությամբ: Այլ օրինակ՝ Նա դա ասաց **այնպիսի** եղանակով, **որ** ասես ուզում էր մեղմել նրա վիշտը. այստեղ ևս այն կարելի է դիտել որպես շաղկապ կամ հոլովով անհամաձայն մնացած հարաբերական (**որով**): Նման երկդիմություն կարող է առաջանալ ոչ բոլոր կառույցներում: Պետք է սակայն նշել, որ հոլովով անհամաձայն մնացած **որ** հարաբերականը ճիշտ կլինի շաղկապ համարել»⁷:

⁶ Ա. Պապոյան, Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Ե., 2003, էջ 299:

⁷ Գ. Գարեգինյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1984, էջ 163:

(Ավելորդ չէ նշել, որ բերված երկու օրինակներում էլ զգալի է երկրորդականների հետևանքային նշանակությունը):

Որ հարաբերականի՝ որոշիչ երկրորդականներում անորոշ առումով (որոշյալի փոխարեն) և եզակի թվով (հոգնակիի փոխարեն) կիրառությունները «Ժամանակակից հայոց լեզու» աշխատության 3-րդ հատորում (բաժնի հեղինակ՝ Ն. Պատնասյան) նույնպես համարվում է նրանում դերանվանական նշանակության մթազնման վկայություն, միաժամանակ նշվում է, որ «Այս որոշիչ երկրորդական նախադասությունների ուսումնասիրությունը մեծ հետաքրքրություն է ներկայացնում որ շաղկապի առաջացման պատմության համար»⁸:

Խնդրո առարկա բառի՝ վերևում քննված կիրառության գնահատականն առավել անվերապահ է նորագույն ուսումնասիրություններից մեկում. «Տարածված մի մտայնություն կա, թե «որ» հարաբերիչը եթե հարաբերվում է գերադաս նախադասության գոյականին, անկախ այն բանից՝ հոլովաթվային համաձայնություն ունի նրա հետ թե ոչ, ոչ թե շաղկապ է, այլ հարաբերական դերանուն: Բերենք այսպիսի մի օրինակ՝ **Մեր երկրի տերերն ահա այս սխրագործ պատանիներն են, որ հայրենասիրության դաս են տալիս ավազներիս:** Թավ ընդգծված **որ** հարաբերիչը համարում են հարաբերական դերանուն, ինչ է թե տրամաբանորեն գոյականի հետ է կապված:

⁸ Ս. Աբրահամյան, Ն. Պատնասյան, Հ. Օհանյան, Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Ե., 1976, էջ 635:

Նկատենք, որ շաղկապները հենց այդպես էլ առաջացել են, ծագել են հարաբերական դերանուններից, և ընդգծված բառի շաղկապ լինելը այդ կիրառությամբ ավարտուն վիճակ է ներկայացնում⁹: Այս մոտեցումը **որ** բառի գործառական արժեքի գնահատության առումով մեզ համար առավել ընդունելին է:

Շարահյուսագիտական «դասական» աշխատություններում, սակայն, ինչպես վերը տեսանք, նշված կարգի կիրառություններում **որ**-ը առավելապես հարաբերական դերանուն է համարվում. որոշիչ երկրորդական նախադասության մեջ նրան վերագրվում է հիմնականում ենթակայի պաշտոն՝ հանդուրժելի համարելով առկայացման կամ (և) համաձայնության կարգերում շարահյուսական նորմից շեղումները: Այս մոտեցումը, սակայն, բավական երբեք է դառնում, երբ գործադրվում է բացահայտիչ երկրորդական նախադասություններով կառույցների նկատմամբ: Բանն այն է, որ սրանք առավել հաճախ լրացնում են գերադաս նախադասության՝ անձնական դերանվամբ արտահայտված բացահայտյալին, և քանի որ **որ**-ը իր այս կիրառությամբ զրկված է դիմորոշ հոդ ստանալու հատկությունից, ուստի խախտվում է նաև ստորադաս նախադասության ենթակայի և ստորոցյալի դիմային համաձայնության կանոնը: Օրինակներ՝ Ես, **որ** տրտմում եմ մի ծաղկի համար, Ես, **որ** դողում եմ, երբ վարդ են քաղում.... (Հ. Շիրազ), Ես քեզ ներե՞մ... Քեզ, **որ** սերս դագաղեցիր, Վըշ-

⁹ Դ. Գյուլզատյան, նշվ. աշխ., էջ 232:

տիս վրա ծիծաղեցիր.... (Հ. Շիրազ), Դու, **որ** մսեղեն դառն հաճույքով արևը հոգու դարձնում ես խավար (Ա. Իսահակյան) և այլն: Վերը հիշատակված «Ժամանակակից հայոց լեզու» (3-րդ հատոր) գրքում այս կիրառությամբ **որ**-ը միանշանակորեն շաղկապ է համարվում և նշվում է, որ այս դեպքում «ենթական սովորաբար զեղչված է լինում, ենթակայի պաշտոնը կատարում է բացահայտյալը»¹⁰: Գ. Գարեգինյանը, թեև որոշակի վերապահումով, **որ**-ի այս կիրառությունը ևս դերանվանական է համարում: «Քննարկվող կառույցներում, գրում է նա, - **որ**-ը յուրահատուկ փոխանցիչ է դառնում՝ անձնական դերանվամբ արտահայտված բացահայտյալի դեմքը և թիվը պարտադրելով բացահայտիչ երկրորդականի ստորոգյալին: Նկատելի է նաև, որ այս բարդ ստորադասական նախադասություններում բացահայտիչ երկրորդականի ենթական երբեք արտահայտված չի լինում, վերականգնման հնարավորություն չի ունենում հավանաբար այն պատճառով, որ այդ դիրքը գրավված է լինում հենց այդ **որ** բառով: Մնում է եզրակացնել, որ ուղիղ ձևով կիրառվող այս բառը ըստ էության դերանուն է, որը սակայն անհամաձայն մնալով շաղկապ է ընկալվում»¹¹: Հեղինակի այսպիսի մոտեցումը հիմնավորող փաստարկներից ամենաուշագրավը, թերևս, հետևյալն է. «Չպետք է աչքաթող անել նաև այն հանգամանքը, որ փոխակերպման դեպքում շաղկապական երկրորդա-

¹⁰ Ս. Աբրահամյան և ուրիշներ, նշվ. աշխ., էջ 647:

¹¹ Գ. Գարեգինյան, նշվ. աշխ., էջ 187:

կանների (անկախ նրանց բնույթից) ստորոգյալները վերածվում են **անորոշ** դերբայի, իսկ հարաբերական երկրորդականների ստորոգյալները՝ **հարակատար** կամ **ենթակայական** դերբայների (...): Մեր բերած բոլոր օրինակներում փոխակերպումը կատարվում է հարակատարով կամ ենթակայականով, որ խոսում է այդ բառի դերանուն լինելու մասին»¹²: Այստեղ, անշուշտ, շարահյուսական օրինաչափությունը ստույգ ներկայացված է, այնուամենայնիվ, կարծում ենք, այս վկայակոչումը չի հակասում վերը քննված կառույցներում **որ** բառի դերանվանական նշանակության խիստ թուլացման կամ կորստյան մասին եղած դիտարկումներին: Մեզ թվում է, որ փոխակերպման գործողության ժամանակ ըստ էության գործընթացի մեջ «ներքաշվում» է կառույցի նախնական, խորքային կաղապարը, որի փոխակերպն իր մեջ պահպանում է **որ**-ի դերանվանական իմաստի «հիշողությունը»:

Հարկ ենք համարում անդրադառնալ **որ**-ի մի յուրահատուկ կիրառության ևս, որտեղ թերևս իսպառ ջնջված է դրա դերանվանական նշանակությունը: Խոսքը հարաբերական դերանուններին որպես «թարմատար» շաղկապ կցվող **որ**-ի մասին է (**ինչ որ, երբ որ, ինչպես որ** և այլն): Ուսուցման ժամանակ, ի դեպ, **որ**-ի հետ զուգորդվելու հատկությունը հաճախ օգտագործվում է որպես պարզ մի միջոց հարցական և հարաբերական դերանունները գատորոշելու համար (**որ**-ը, բնականաբար, չի կարող զուգորդվել ոչ կապակցական դե-

¹² Նույն տեղում:

րով կիրառվող հարցական դերանուններին): **Որ** շաղկապի այս կիրառությունը նոր երևույթ չէ. այսօր այն բնական է խոսակցական լեզվում, որտեղից հաճախ թափանցում է գրական լեզու: Խրախուսելի չէ թարմատար շաղկապի կցումը **որ** հարաբերականին (**որը որ**), մի բան, որ, ցավոք, այսօրվա պաշտոնական ոճում բավական հաճախադեպ է (ի դեպ նշենք, որ այսպիսի կրկնաբանությունից զգուշացնում էր դեռևս Մ. Աբեղյանը)¹³:

Որ-ի որպես թարմատար կիրառությունների ընդհարականացման մեջ հավանաբար դեր է կատարել համաբանության գործոնը: Այս առնչությամբ հետաքրքիր դիտարկում է անում Վ. Առաքելյանը: **Ինչ** հարաբերականով կապակցվող ուղիղ խնդիր երկրորդականների առիթով նա գրում է. «...Օրինակներից պարզ երևում է, որ միայն **ինչ** հարաբերականն առանց **որ**-ի հազվագյուտ է: Հավանաբար **ինչ** նախապես մտել է գլխավոր նախադասության կազմը և հանդես է եկել իբրև հարաբերյալ, երբ դեռ ուներ **բան, մի բան** նշանակությունը: Համեմատիր՝ **Ամենայն ինչ, որ դիրաւ անկանի ի բռուն, ընդ արհամարհանս ունիմք**: Ամենահին այս նախադասությունը նույնպես կարելի է անդամահատել, ինչպես հիմա ենք անում. **ամենայն, ինչ որ...** և այլն»¹⁴:

Նախընթաց շարադրանքում արված վերլուծություններն ու վկայակոչված տեսակետները, այսպիսով, հետա-

¹³ **Տե՛ս Մ. Աբեղյան**, նշվ. աշխ., էջ 611:

¹⁴ **Վ. Առաքելյան**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 164-165:

քրքրություն են ներկայացնում այնքանով, որ մի բառի օրինակով տեսանելի են դարձնում լեզվական միավորի իմաստային կառուցվածքի մեջ կատարվող տեղաշարժերի, քերականական կարգային փոխանցումների աստիճանական ընթացքը, որոնք անմիջաբար պայմանավորված են տվյալ միավորի խոսքային գործառնությով: Արդեն նշել ենք, որ այս կարգի վերլուծությունը տեսական հետաքրքրություն ներկայացնելուց բացի պետք է անհրաժեշտաբար հաշվի առնվի այդ միավորների՝ բառերի, շարահյուսական կառույցների գործառնական արժեքի գնահատման և ուսուցման հարցերում: Խոսքը մասնավորելով մեր քննության առարկայի վրա՝ ուզում ենք նշել, որ մասնավորապես կետադրության կանոնները սահմանելիս վերևում դիտարկված այսպես կոչված «անցումային» կառույցների առնչությամբ հաճախ հանդես է բերվում որոշակիորեն ուղղագիծ մոտեցում՝ դրանք միանշանակորեն հարաբերական տիպին հատկացնելով. փաստորեն անտեսվում է դրանցում **որ** բառի գործառնական երկարժեքության հանգամանքը:

Այսպես, կետադրության գործող կանոններով սահմանվում է, որ բարդ նախադասության կազմում առկա տրոհվող դերբայական դարձվածները կետադրվում են ըստ բաղադրիչ պարզ նախադասության մեջ իրենց գրաված դիրքի: Սրանից հետևում է, որ երկրորդական նախադասության դերբայական դարձվածը, եթե անմիջապես հաջորդում է շաղկապին, համարվում է առաջադաս և տրոհվում է բութով (օրինակ՝

Պարզվեց, որ գյուղից վերադառնալով՝ աշխատանքի է անցել դպրոցում), իսկ եթե հաջորդում է հարաբերական դերանվանը, համարվում է միջադաս և տրոհվում է երկու կողմից ստորակետերով (Օանոթացանք այդ մարդու հետ, որը, գյուղից վերադառնալով, աշխատանքի է անցել դպրոցում): Վերջին տիպի նախադասություններում դարձվածի դիրքը միջադաս է համարվում՝ անկախ որ-ի՝ հոդով կամ անհոդ (նաև՝ հոգնակիի փոխարեն՝ եզակի) կիրառություններից, և դրա՝ բույծով տրոհումը համարվում է կետադրական սխալ: Պետք է նշել, որ այս կանոնին խստորեն հետևում են և՛ դպրոցական ուսուցման, և՛ հայոց լեզվից տարբեր մակարդակի ավարտական և ընդունելության քննությունների ժամանակ: Ահա մի երկու օրինակ կետադրության վերաբերյալ շտեմարանային առաջադրանքներից. **Նա աչքերը դարձրեց դեպի Սեդան, որ, ձեռքերը կրծքին խաչած, նայում էր հեռուն: Գետը, թվում է, կապույտ գոտի է՝ անադարտ ձյան վրա մոռացված, որ, ջրվեժ առ ջրվեժ խորանալով, գնում – կորչում է երկարաձիգ կիրճի մեջ: Հյուրերը, որ, պատշգամբից հեռանալով, մոտեցել էին սանդուղքին, հետաքրքրությամբ դիտում էին նորեկներին: Բարձունքի վրա ծերուկ հովիվն է, որ, կոթնած իր անբաժան ձեռնափայտին, հետևում է ոչխարների հոտին և այլն, և այլն:**

Ըստ արժանվույն գնահատելով և կարևորելով մեր կետադրության կանոնների մշակման և միօրինակացման հարցերում մասնագետների՝ մանավանդ վերջին շրջանում

ծավալած արդյունավետ ջանքերը, այնուամենայնիվ ուզում ենք առաջարկել, որ վերևում բերված կարգի նախադասություններում դերբայական դարձվածների՝ բույծով տրոհումը նույնպես թույլատրելի համարվի (**Հյուրերը, որ պատշգամբից հեռանալով՝ մոտեցել էին սանդուղքին...., Բարձունքին ծերուկ հովիվն է, որ կռթնած իր անբաժան ձեռնափայտին՝, և այլն**): Կետադրական այսպիսի երկակիությունը, կարծում ենք, նախ ունի քերականական հիմնավորում՝ համապատասխանում է **որ** բառի գործառական երկակի արժեքին, ապա և չի հակասում հայերենի կետադրության տրամաբանությանը՝ կառույցի առոգանական նկարագրի տեսակետից:

ՇԱՐԱՀՅՈՒՍԱԳԻՏԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ

Ժամանակակից հայերենի շարահյուսական կառուցվածքի ուսումնասիրությունը, հատկապես Մ.Աբեղյանի շարահյուսագիտական ժառանգության հրապարակ գալուն հաջորդած՝ մինչև մեր օրերը տևող շրջանում, ներկայանում է բավական հարուստ գիտական ավանդույթի տեսքով: Ստեղծված բազմաբնույթ գրականությունը՝ դասագրքեր, ձեռնարկներ, մենագրություններ, հոդվածներ և այլն, նվիրված են ինչպես հայերենի շարահյուսության համակարգված քննության, նորմավորման, ուսուցման մեթոդական խնդիրներին, այնպես էլ շարահյուսական առանձին միավորների գնահատման, շարահյուսագիտական տեսական հարցերի, հաճախ էլ տարատեսակ մեկնաբանությունների, բանավեճերի առիթ տվող իրողությունների լուսաբանմանը:

Այսօր շրջանառվող շարահյուսագիտական գրականության, մասնավորապես բուհական համակարգում գործառող դասագրքերի ու ձեռնարկների, ինչպես նաև գիտական պարբերականներում հրատարակված նյութերի դիտարկումն ու համադրումը երևան են հանում այս կարգի որոշակի տարբերումներ, նույն քերականական իրողության ոչ միանշանակ մեկնաբանություններ, որոնք երբեմն շարահյուսության առանցքային հիմնախնդիրներ են շոշափում, հաճախ էլ առնչվում են մասնավոր, նախադասության վերլուծության հետ կապված և այլ կարգի խնդիրներին: Մենք

նպատակ չունենք այստեղ դրանց քննական վերլուծությունը ներկայացնելու. մեր մի քանի դիտարկումները, կարելի է ասել, առավելապես տերմինաբանական ուղղվածություն ունեն. կփորձենք մեր նկատառումները ներկայացնել որոշ շարահյուսական միավորների ու երևույթների տերմինավորման, տերմինների ոչ հետևողական կիրառությունների, տերմինների բովանդակության ոչ միանշանակ ընկալումների առնչությամբ:

1. ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ: ՍՏՈՐՈԳՈՒՄ: Շարահյուսության հիմնական միավորի սահմանման խնդիրը միանշանակ լուծում չի ստացել լեզվաբանության մեջ, հայերենագիտության մեջ նույնպես **նախադասություն** տերմինով անվանվող միավորը ոչ միասնական, երբեմն տարամիտվող ընկալումների առիթ է տվել: Մանրամասների մեջ չխորանալով՝ նշենք, որ մեր քերականություններում նախադասության՝ որպես շարահյուսական միավորի, և **ստորոգում** հասկացության պատկերացումները սերտորեն փոխկապակցված են, և այս երկու տերմինների բովանդակային ընդգրկման սահմանները բնականորեն պայմանավորված են մեկը մյուսով:

Ստորոգում տերմինը, ինչպես հայտնի է, կապվում է Մ. Աբեղյանի անվան հետ. այն սահմանվում է որպես հասկանիշի վերագրումն առարկային և նշվում է, որ «Ստորոգումն արտահայտվում է մի առանձին խմբի կամ տեսակի բառերով, որոնք կոչվում են բայ: Խոսք կազմում են միայն

բայերը»¹: (Աբեղյանի համակարգում «խոսք» նշանակում է «նախադասություն», իսկ «բայ»՝ «բայի դիմավոր ձև»):

Հետագա քերականների կողմից նախադասությունը սահմանվում է որպես ստորոգում ունեցող (կամ էլ «ամփոփ միտք արտահայտող», որ խորքային մակարդակում նույն նշանակությունն ունի) միավոր: Բնական է, որ **ստորոգում** հասկացության ու տերմինի արեղյանական մեկնաբանության դեպքում առկախ են մնում դիմավոր բայ չպարունակող հաղորդակցային միավորների (Աշուն: Կանգնե՛լ): գնահատման ու անվանման հարցերը. նախադասություն^օ են սրանք, թե՞ ոչ (կամ՝ ստորոգում ունե՞ն արդյոք դիմավոր բայով կազմված այն միավորները, որոնք զուրկ են ենթակայից (Մթնեց: Ցրտում է:). այս դեպքում ինչի՞ն կամ ու՞մ է վերագրվում դիմավոր բայով արտահայտված հատկանիշը): Այս հարցերը հետագա քերականություններում երկակի լուծում են ստանում:

Ա. Ձևավորվում և ապա լայն տարածում է ստանում այն մոտեցումը, ըստ որի նշված կարգի՝ դիմավոր բայ չպարունակող հաղորդակցային միավորները նույնպես նախադասություններ են: Ստորոգման հատկանիշն էլ որոշ իմաստով հարմարեցվում է սրանց. ընդունվում է, որ այս կարգի նախադասություններին հատուկ է այսպես կոչված հնչերանգային ստորոգում, և այսպիսով հնչերանգի դերը նախադասության մեջ հավասարեցվում է դիմավոր բայի դերին:

¹ Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965, էջ 361:

Բ. Ըստ այս տեսակետի, որ մեզանում առաջ է քաշել և հիմնավորել ակադեմիկոս Է. Աղայանը, նախադասություն են համարվում և այդ տերմինով կոչվում են միայն բառիս արեղյանական ըմբռնմամբ ստորոգում ունեցող, այսինքն միայն դիմավոր բայով ձևավորվող հաղորդակցային միավորները: Ստորոգումից զուրկ միավորները, որոնք բավական գործածական են հայերեն խոսքում (քերականությունների մեջ միակզման անդամ անվանական, անդամ բայական և բառնախադասություն կոչվածները) Աղայանի կողմից անվանվում են **ասություն** տերմինով: Աղայանը քննադատում է հնչերանգին ստորոգման գործառույթ վերագրող լեզվաբաններին. այլ լեզուներում հնչերանգը (նաև շարահատությունը) կարող են ստանձնել այդ դերը, հայերենում ստորոգում արտահայտելու «մենաշնորհը» պատկանում է դիմավոր բային²:

Այն, որ Է. Աղայանը խիստ սկզբունքային մոտեցում ունի լեզվական միավորների, կոնկրետ դեպքում՝ նախադասության ոչ միայն գնահատման, այլև դրանց տարբերակների ստույգ տերմինավորման հարցերին, երևում է նրա մի այլ հոդվածից, որը բանավիճային բնույթ ունի: Բանն այն է, որ մեր շարահյուսագետներից Ռ. Իշխանյանը փորձել է զարգացնել Մ. Աբեղյանի «բայակենտրոն» ուսմունքը՝ առաջարկելով նախադասության՝ որպես շարահյուսական միավորի նոր մեկնաբանություն: Ըստ այսմ, նախադասությունն ունի

² Տե՛ս Է. Աղայան, Նախադասություն և ասություն, Բանբեր Երևանի համալսարանի, 1987, հ. 1, էջ 121-135:

միայն մեկ գիտավոր անդամ՝ դիմավոր բայը, ենթական դրա լրացումներից մեկն է, և, որպես հետևանք, ավելորդ են դառնում ստորոգման հասկանիչը, ստորոգյալը. բոլոր նախադասությունները, բնականաբար, համարվում են միակազմ, սակայն դրանց բոլոր դրսևորումների համար Ռ. Իշխանյանը պահում է **նախադասություն** տերմինը՝ անվանման հարցը համարելով ոչ սկզբունքային: «Որոշ լեզվաբաններ, - գրում է նա, - առաջարկում են անդեմներիին նախադասություն անունը չտալ: Սա գուտ անվանման հարց է: Եթե չեն ուզում, թող չտան, բայց փաստ է, որ անդեմ (կամ առանց դիմավոր բայ) հաղորդակցական միավորներ հայերենում կան, թեև համեմատաբար քիչ. մենք հարմար ենք համարում դրանց ևս տալ **նախադասություն** անունը՝ **անդեմ** մականունով»³: Է. Աղայանը բավական կտրուկ է արձագանքում այս դատողությանը. «Նա (Ռ. Իշխանյանը- Լ. Թ.) ուզում է այդ կարգի ասությունները նախադասություն անվանել և անվանում է, որովհետև, ինչպես երևում է նրա գրածից, անվանման համար լոկ ցանկություն է հարկավոր, իսկ թե անվանումը արտահայտում է հասկացություն, և այդ հասկացությունն էլ համապատասխանում է օբյեկտիվ իրականությանը, - դա նրա համար ոչ մի նշանակություն չունի»⁴:

³ Ռ. Իշխանյան, Դիմավոր բայը որպես շարահյուսական միավոր, Բանբեր Երևանի համալսարանի, 1988, հ.1, էջ 47:

⁴ Է. Աղայան, Նախադասության մասին, Բանբեր Երևանի համալսարանի, 1988, հ. 1, էջ 67:

Բանավեճի բուն առարկայի էությունն այստեղ մեր խնդիրը չէ անշուշտ, ուստի վերադառնանք մեզ հետաքրքրող հասկացությունների ու տերմինների հարաբերության հարցերին:

Ստորոգում հասկացության՝ լեզվաբանական գրականության մեջ ընդունված լայն մեկնաբանությունը մեր շարահյուսագիտության մեջ շրջանառվում է համեմատաբար ուշ շրջանում: Դասագրքերում ու ձեռնարկներում հաճախ է վկայաբերվում ստորոգման այդ սահմանումը, որը համապատասխանաբար պիտի նոր բովանդակություն հաղորդի նաև **նախադասություն** հասկացությանն ու տերմինին: Հ. Պետրոսյանի «Հայերենագիտական բառարանում» ստորոգումը արդեն սահմանվում է որպես «շարահյուսական կարգ, որով նախադասության բովանդակությունը վերագրվում, հատկացվում է իրականությանը և որը, դրանով իսկ, ընկած է նախադասության կազմավորման հիմքում՝ նրան դարձնելով հաղորդակցական արժեք ունեցող միավոր (կառույց).... Առաջ տարածված էր այն կարծիքը, որ ստորոգումը հատկանիշի վերագրումն է ենթակային»⁵:

Ստորոգման դասական (աբեղյանական) ըմբռնումից էապես տարբերվող ժամանակակից մեկնաբանությունների շարքում⁶, մեր կարծիքով, և՛ տեսական, և՛ մեթոդական ա-

⁵ **Հ. Չ. Պետրոսյան**, Հայերենագիտական բառարան, Ե., 1987, էջ 549:

⁶ Տե՛ս **Է. Աթայան**, Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը, Ե., 1981, **Դ. Գյուլզատյան**, Գրական արևելահայերենի քերականության հիմունքներ, Ե., 2016 և այլն:

ռումներով առանձնանում է ակադ. Գ. Ջահուկյանի «Ստորոգումը և նրա արտահայտության միջոցները» հոդվածը: Ըստ Ջահուկյանի՝ ստորոգումը քերականական (շարահյուսական) կարգ է՝ բովանդակության պլանի երեք հակադրվող եզրերով («ընկալական կամ կրական», «վերագրական» և «եղելական»), որոնք արտահայտության պլանում դրսևորվում են համապատասխանաբար հնչերանգով (Երևան: Չկրակե՛լ:), է էական բայով (Խավար է: Մարդը մահկանացու է:) և բայական վերջավորություններով (Մթնեց: Հակոբը սովորում է: Մարդը քնեց:)⁷: Այս մոտեցումով արդի հայերենում գործառող հաղորդակցային բոլոր կարգի միավորները, այսինքն՝ երկկազմ, միակազմ, դիմավոր և անդեմ կոչվող նախադասությունները, ներկայացվում են որպես ստորոգման կարգով օժտված, ընդամին հնչերանգը ներկայացվում է ոչ թե որպես ստորոգում արտահայտող ինքնակա միջոց, այլ որպես տվյալ քերականական կարգի արտահայտության պլանի եզրերից մեկը («ընկալական կամ կրական» անվանվող):

Ինչպես արդեն նշեցինք, նախադասության ըմբռնման քննական վերլուծությունը չէ այստեղ մեր խնդիրը, մեզ թվում է, սակայն, որ շարահյուսության այս առանցքային հարցերը քննելիս շատ կարևոր է տեսական հստակ դիրքորոշում որդեգրել մասնավորապես **նախադասություն, ստորոգում** տերմինների ընկալման և կիրառման հարցում: Եթե

⁷ Տե՛ս Գ. Ջահուկյան, Ստորոգումը և նրա արտահայտության միջոցները, Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում, 1985, հ. 1:

մենք սկզբունքորեն հետևում ենք ստորոգման ավանդական ըմբռնմանը, ապա հետևողական լինելու համար, կարծում ենք, պետք է ընդունենք Է. Աղայանի տեսակետը և **նախադասություն** տերմինը հատկացնենք միայն դիմավոր բայով միավորներին, իսկ եթե հաղորդակցային բոլոր կարգի միավորներին **նախադասություն** անունն ենք տալիս, ապա բնական կլինի, հետևելով Գ. Ջահուկյանի տեսակետին, դրանց բոլորին էլ վերագրել ստորոգման հատկանիշ (մանավանդ որ ստորոգման «լայն» և «նեղ» ըմբռնումները ոչ թե միմյանց բացառող, այլ համադրելի իրողություններ են): Նման մոտեցման դեպքում, օրինակ, լիովին ընդունելի կարելի է համարել Գ. Գարեգինյանի բնորոշումը, թե «...պարզ նախադասությունը **մենաստորոգումային** կառույց է, բարդ նախադասությունը՝ **բազմաստորոգումային**»⁸, մինչդեռ այս ձևակերպումը քննադատվում է Ա. Պապոյանի դասագրքում, որտեղ բարդ նախադասության կազմում առկա՝ միակազմ պարզ նախադասությամբ արտահայտված բաղադրիչները ստորոգումային միավորներ չեն համարվում⁹: Գործ ունենք, այսպիսով, **նախադասություն – ստորոգումային միավոր** հասկացությունների իմաստային հարաբերության տարբեր գնահատումների հետ:

⁸ Գ. Գարեգինյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1984, էջ 5:

⁹ Տե՛ս Ա. Պապոյան, Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Ե., 2003, էջ 213-214

2. Այժմ մի երկու նկատառում շարահյուսական այլ տերմինների կիրառության մասին:

Տերմինի՝ որպես բառի իմաստային առանձնահատկությունն այն է, որ այն պետք է ըստ հնարավորին համարժեք, առանց հուզաարտահայտչական երանգների, արտահայտի տվյալ գիտական հասկացության բովանդակությունը: Տերմինային բազմիմաստությունը և հոմանիշությունը, ինչպես հայտնի է, գիտական տվյալ համակարգում ցանկալի չեն, սակայն փաստ է նաև, որ հոմանիշ տերմինները սակավադեպ չեն գիտության լեզվում, դրանք որոշ ժամանակ, (հաճախ տասնամյակներ) կարող են համագոյակցել, մինչև որ դրանցից մեկը ամրակայվում է տվյալ նշանակությամբ, մյուսը սովորաբար դուրս է մղվում կամ այլ գործառույթ է ստանձնում (հմմտ., օրինակ, խնդրառություն-հոլովառություն - կառավարում, գլխավոր նախադասություն – գերադաս նախադասություն, երկրորդական նախադասության կրճատում – բարդ նախադասության փոխակերպում պարզի, հակառակ հիմունքի պարագա – զիջման պարագա և այլն): Այնուհետև, տերմինի ներքին ձևը (հատկապես նոր ստեղծվող տերմինների դեպքում) շատ հաճախ ակնարկում է իր նշանակած հասկացությունը, սակայն սա պարտադիր իրողություն չէ, և հետևաբար ճիշտ չէ տերմինի նշանակած հասկացությունը հարմարեցնել նրա ստուգաբանական իմաստին: Ակադ. Ս. Աբրահամյանը մի առիթով այսպիսի դիտարկում է արել. «Լեզվաբանության մեջ տերմինների փոփոխու-

մը չի խրախուսվում, և դա առհասարակ ճիշտ է ու պատճառաբանված: Դա պատճառաբանված է հատկապես այնպիսի տերմինների վերաբերմամբ, որոնք դարերի կյանք ունեն, իրենց ստուգաբանական իմաստով վաղուց չեն համապատասխանում տվյալ քերականական իրակությանը և պարզապես դարձել են պայմանական անուններ. ինչպես՝ ենթակա, ստորոգյալ, դերբայ և այլն»¹⁰: Այս առումով հազիվ թե ընդունելի համարվեն հետևյալ բնույթի ձևակերպումները. «...չի կարող գլխավոր անդամ լինել մի բան, որի անունը **ենթակա** է:նախադասության գլխավոր անդամը, ի հակադրություն ենթակայի, վերանվանում ենք **գերակա** (բայ-ստորոգյալ՝ ըստ Մ. Աբեղյանի)»¹¹: (Ի դեպ, արևմտահայերենի քերականություններում ենթակայի համար գործածում են ստուգաբանորեն հակադիր իմաստ ունեցող **տեր բայի** անվանումը, ստորոգյալի համար էլ՝ **ստորոգիչ, որ** արևելահայերենում հոմանիշ է **հանգույց** տերմինին)¹²: Ահա նույն կարգի ևս մի օրինակ: Բարդ նախադասության բաղադրիչների՝ առանց բառային միջոցների կապակցությունը անվանելու համար մեր քերականագիտության մեջ գործածվում են **շարահարություն, շարահարական կապակցություն** (Մ. Աբեղյա-

¹⁰ Մ. Աբրահամյան, Հայոց լեզու: Շարահյուսություն: Բուհական ձեռնարկ, Ե., 2004, էջ 62:

¹¹ Դ. Գյուլգասյան, նշվ. աշխ., էջ 205-206:

¹² Տե՛ս Ա. Գալստյան, Արևելահայերենի և արևմտահայերենի լեզվաբանական տերմինների զուգադրական քննություն, Արևելահայերենի և արևմտահայերենի տերմինային համակարգերի զուգադրական քննություն, Ե., 2014, էջ 83-104:

նի հետևողությամբ) և **անշաղկապություն, անշաղկապ կապակցություն** (հավանաբար ռուս քերականների ազդեցությամբ) տերմինները: Ձեռնպահ մնալով սրանցից որևէ մեկը նախընտրելի համարելուց՝ արձանագրենք միայն, որ այս հոմանիշ տերմինները շարահյուսական աշխատություններում կիրառվել են ճիշտ միևնույն նշանակությամբ: Այս առումով էլ տեղին չեն թվում պրոֆ. Ա. Պապոյանի քննադատական դիտողությունները՝ ուղղված մասնավորապես Ն. Պառնասյանին և Գ. Գարեգինյանին: Նա գրում է. «Եթե **անշաղկապ** գիտաբառը կարող է քիչ թե շատ արդարացվել համադասական կապակցության եղանակը բնութագրելիս, ապա այն բնավ արդարացված չէ ստորադասական հարաբերության ճիշտ գնահատման տեսակետից: Խնդիրն այն է, որ ստորադասական հարաբերության դրսևորման միջոցներ են ո՛չ միայն շաղկապները (հասկանալի է՝ ստորադասական), այլև հարաբերական դերանունները: Ստորադասական շաղկապների բացակայության դեպքում կապակցությունը թերևս նույնպես կարելի է կոչել **անշաղկապ**: Հետևողական լինելու պարագայում հարաբերական դերանունների բացակայությամբ նախադասությունն էլ պետք է կոչվեր **անհարաբերական**»¹³: Այսինքն, դրվում է տերմինի բառացի իմաստի և նրա նշանակած քերականական իրակության ճշգրիտ համապատասխանության պահանջ, որը, հատկապես շարահյուսական տերմինների դեպքում, ոչ միշտ է արդարացված: Սրան

¹³ Ա. Պապոյան, Խ. Բաղիկյան, նշվ. աշխ., էջ 228:

հակառակ՝ կարևոր է շարահյուսական (և ընդհանրապես՝ գիտական) տերմինի՝ տրամաբանորեն ճշգրիտ ու անհակասական լինելու պահանջը: Այս տեսակետից, թվում է, օրինակ, որ «կախյալ շարահարություն», «անկախ շարահարություն» տերմիններն արդեն իսկ տրամաբանորեն անխոցելի չեն. բանն այն է, որ «շարահարությունը» հարաբերություն է, իսկ «կախյալ» կարող է լինել ոչ թե հարաբերությունը, այլ նրա եզրերից մեկը՝ ստորադասը: Ի դեպ, նույն կարգի հակասություն նկատում է Դ. Գյուլգաստյանը լեզվաբանության մեջ մեծ տարածում ստացած «ստորադասական կապակցություն» անվանման մեջ. այստեղ էլ, ըստ նրա, կապակցությունը անվանելիս նկատի է առնվում «ո՛չ լրացում – լրացյալի, այլ մի՛միայն լրացման հարաբերությունը լրացյալի նկատմամբ¹⁴: Հարաբերությունն անվանելու համար լեզվաբանն առաջարկում է «տարադասություն» տերմինը (ի հակադրություն «համադասության»), որը, թեև առայժմ անսովոր, տրամաբանական առումով առավել հաջողված պետք է համարել: Ավելորդ չենք համարում նշել նաև, որ Դ. Գյուլգաստյանի այս աշխատությունը պարունակում է մեր լեզվի շարահյուսական շատ իրողությունների նորովի մեկնաբանություններ, նոր հասկացություններ ու տերմիններ (տե՛ս գրքին կցված «Տերմինարանը»), որոնց գոնե մի մասը կարող է հաջողությամբ կիրառվել նաև ավանդական շարահյուսագիտական աշխատանքներում:

¹⁴ Դ. Գյուլգաստյան, նշվ. աշխ., էջ 196:

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԼԵԶՎԱԿԱՆ ՆՈՐՄԸ ԵՎ ՀԵՌՈՒՍՏՍԵՍՈՒԹՅԱՆ ԼԵԶՈՒՆ

Լեզվական նորմը, ինչպես հայտնի է մասնագիտական գրականությունից, տվյալ լեզվի համակարգը ներկայացնող միավորների իրացումն է հանրային հաղորդակցման գործընթացում՝ ըստ այդ լեզվի մեջ գործող կանոնների ու օրինաչափությունների, որոնք հանրորեն ընդունված են և մասնագիտորեն ամրագրված: Լեզվի յուրացման առաջին քայլերից սկսած՝ մարդն արդեն իսկ գիտակցում է մայրենի լեզվի նորմը. դրա վրա էլ խարսխվում է հաղորդակցումը: Հանրահայտ է նաև, որ լեզվական նորմը մեկընդմիջտ տրված ու անփոփոխելի իրողությունն չէ. լեզուն անընդհատ զարգացող մարմին է, և նրանում կատարվող փոփոխությունները, մշտապես կրկնվելով, կարող են հանրության կողմից ընդունվել և ամրագրվել նորմի մեջ: Ժամանակի տվյալ հատվածում լեզվի մեջ գործող կանոնների գիտակցումն ու ճիշտ գործադրումն էլ դառնում է տվյալ լեզվով հաղորդակցվողների լեզվական որակի ու խոսքի մշակույթի գնահատման չափանիշը:

Բնական է, որ ճիշտ և ճշգրիտ (ինչու չէ, նաև գեղեցիկ) խոսելու, ասելիքը տրամաբանորեն ստույգ ձևակերպելու համար որոշակի լեզվական գիտելիք, ասել է թե լեզվական նորմի որոշակի իմացություն է անհրաժեշտ: Դե, անշուշտ, ձեռք է բերվում նախ և առաջ մայրենի լեզվի դասերին, բայց

նան բազմազան այլ աղբյուրներից՝ ընթերցանությամբ, թատերական ներկայացումներ ու շարժանկարներ դիտելով, հանրային հեղինակություն վայելող մտավորականների ու գործիչների խոսքին հետևելով և այլն: Այս հարցում ամենից ավելի վճռական ու ներգործուն դերը թերևս պատկանում է զանգվածային լրատվության միջոցներին, որոնք մեծ չափով ձևավորում են հանրային գիտակցությունը, երկրորդաբար նաև՝ հանրության լեզվական մշակույթը: Մեր օրերում շարունակաբար կատարելագործվող այդ միջոցների շարքում, համացանցի ազդեցության ոլորտի ընդարձակման պայմաններում նույնիսկ, հեռուստատեսությունն անվիճելիորեն առաջին դիրքերում է: Որքանո՞վ են գիտակցում հեռուստատեսային գործիչներն ու այդ գործի կազմակերպիչներն իրենց պատասխանատվությունն այս առումով (մի կողմ թողնենք խնդրին առնչվող օրենսդրական կարգավորումների անհրաժեշտության հարցը): Հնարավո՞ր է արդյոք լեզվական յուրատեսակ «գրաքննության» ենթարկել գոնե տեսագրվող (ոչ ուղիղ) հաղորդումները: Այս հարցերը երևի քննարկման այլ հարթակ են ենթադրում:

Հեռուստատեթերից հնչող հայերեն խոսքի որակն ընդհանուր գծերով գնահատելու համար պետք է հաշվի առնել մի շարք հանգամանքներ: Նախ այն, որ հեռուստահաղորդումները բովանդակային տեսակետից շատ մեծ տարածք են ընդգրկում՝ տարբեր բնույթի շարժանկարներ, ներկայացումներ, հումորային, մարզական և այլ կարգի հաղորդումներ,

քաղաքական միջոցառումների, նիստերի հեռարձակումներ (ի դեպ, սրանց լեզվական որակի խնդիրը առանձին քննության առարկա կարող է լինել) և այլն: Բովանդակային և ժանրային այսպիսի տարատեսակության պարագայում հեռուստատեսության լեզուն փաստորեն պատկերացում է տալիս հանրային հաղորդակցման տվյալ փուլում հանրության լեզվական մշակույթի որակի մասին ընդհանրապես, և ստորև բերվող նկատառումները հենց այդ որակը գնահատելու նպատակ նույնպես ունեն:

Խոսքը մտքի նյութական թաղանթն է, այն բնութագրում է մարդուն, ուստի այն անձանց, ովքեր առիթ են ունենում հեռուստատեսությանից բազմահազարանոց լսարանին խոսք ուղղելու, տեղին կլինի հիշեցնել Մոկրատեսին վերագրվող ասույթը՝ «Խոսի՛ր, որ ճանաչեմ քեզ»: Հանրային հեղինակություն վայելող ճշմարիտ մտավորականներից շատերի խոսքն, իրոք, ուսուցողական է և՛ բովանդակության, և՛ խոսքի մշակույթի կատարելության (որոնք, ինչ խոսք, փոխապամանավորված իրողություններ են) առումներով: Չի կարելի ասել, որ մեր հեռուստատեսությանից հայերեն կատարյալ խոսք ընդհանրապես չի հնչում. այլ բան է, որ այն հաճախ աննկատ է մնում լեզվական ընդհանուր ոչ շատ մխիթարական համապատկերի վրա: Մտահոգիչն այն է, որ հաճախ, մեղմ ասած, օրինակելի չէ հենց հեռուստալրագրողների, հաղորդավարների, մեկնաբանների խոսքը: Այս փաստն այլ կերպ որակել չի կարելի, քան լրագրողներ թողարկող ուսումնա-

կան հաստատությունների ոչ բարձր որակի, ապա և հեռուստատեսային գործը, հատկապես մասնավոր հեռուստաալիքները տնօրինողների մասնագիտական ապիկարության և անպատասխանատվության դրսևորում:

Ստորև ներկայացնելու ենք հիմնականում հեռուստատեսության լեզվի դիտարկման արդյունքում մեր արձանագրած կոնկրետ սխալներ, լեզվական նորմի խաթարումներ՝ որոշակի խմբավորմամբ և ըստ հարկի մասնագիտական մեկնաբանություններով: (Երևի ավելորդ է ասել, որ այս հրապարակումը հեռուստատեկրանից հնչող խոսքի որակն ըստ հնարավորին բարելավված տեսնելու մտահոգությամբ է թելադրված):

1. ԲԱՌԱԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՍԽԱԼՆԵՐ - Սխալների ու շեղումների զգալի մասը բառապաշարի, բառագործածության ոլորտին է վերաբերում: Դրանք զարմանալիորեն հանդիպում են նույնիսկ հանրայնորեն ճանաչված և իրենց կոչումով խոսքի մշակույթ ուսուցանելու հավակնություն ունեցող հեռուստագործիչների խոսքում: Ահա թե ինչ բառապաշարով է տիտղոսակիր հեռուստառադիոգործիչը հանրային հեռուստատեսությամբ դաս վարում լրագրության ասպարեզ մուտք գործել պատրաստվող երիտասարդների համար. «**Թիվի** դաշտում մնալու համար պետք է **բագած** ունենաս, **ռուչնոյ կլաձով** չես կարող մնալ այդ դաշտում, պետք է **բագած** ունենաս՝ 28 կգ»: Իսկ քիչ անց՝ «Հիմա **հազվադեպ** են **հանդիպում** ճիշտ **խոսացող** հաղորդավարներ» (այս նախա-

դասության մեջ երկու անճշտություն կա. **հազվադեպ** և **հանդիպել** կրկնաբանություն է, իսկ **խոսացող**՝ սխալակազմություն. ճիշտ ձևը՝ **խոսող**) կամ՝ «Հաղորդավարը երբեմն արտասանում է **ֆրազեր**» (փխ. **ֆրազներ**) և այլն: Իսկ սա էլ հայտնի երգչուհու խոսքից է. «Իմ այս կապույտ **սապոժկիները համահունջ են սարոչեչկայիս** հետ»: Դերասանուհու հարցազրույցից. «Ես ունեմ մի եղբայր, որը ինձ համար շատ **ավտորիտարնի** (ուզում է ասել՝ «авторитетный») անձնավորություն է», «Դա իմը չէր, դա իմ **ամպուլան** չէր (ուզում է ասել՝ ампула)»:

Այս կարգի օրինակները, ցավոք, այնքան էլ հազվադեպ չեն:

Բառագործածության սխալների պատճառները տարբեր են՝ բառիմաստի ոչ ճիշտ ընկալում, համանուն կամ հնչյունական կազմի նմանություն ունեցող բառերի շփոթում, բառի սխալ կազմություն, ավելորդաբանություն, ոճական անհամապատասխանություն համատեքստին և այլն: Այս ամենը դժվար չէ գտնել ստորև թվարկվող օրինակներում, որոնք ընտրել ենք հիմնականում հաղորդավարների և հանրությանը ոչ անհայտ որոշ գործիչների խոսքից: Այսպես. «Բյուջեն ուղղված է **ընչաքաղց** խավի կարիքների բավարարմանը» (երևի նկատի ունի ընչագուրկ կամ չունևոր խավը), «Այս ճաշատեսակը պատրաստում ենք ոչ թե գազի վրա, այլ **ջեռուցման սիստեմով**» (նկարչի խոսքից. պետք է ասվեր՝ **ջեռոցում**), «Մաքսային միություն մտնելով՝ չեմ կարծում, թե

Եվրոպայի հետ մեր հույսերը **ի թերևս կլինեն**» (հայերեն խոսելու դեպքում ասում են **ի դերև կելնեն**), «Պլաստիկ վիրահատվածները հիմա **ամոթանքի** զգացում չեն ապրում» (հաղորդավարուհի. պետք է ասեր՝ **ամոթի**), «Դա կամքի և արիության **հավատաքննություն** էր» («Երկիր մեդիա». հավատաքննությունը ինկվիզիցիան է, որն այստեղ գործ չունի. երևի **քննություն** կամ **փորձություն** պիտի ասվեր), «Մեր օդաչուները լավ ծանոթ էին տեղանքին. նրանք խփվել են թշնամու **դավանանքի** արդյունքում» (Հ. 1. պաշտպանության նախարարության պաշտոնյան երևի չի կողմնորոշվել **դավանանք, խարդավանք, դավադրություն** բառերի իմաստների մեջ), «Իսկ ինչպե՞ս չընկնել էքստրասենսերի (ճիշտ ձևը՝ էքստրասենսների – Լ. Թ.) **թիրախը**» («Երկիր մեդիայի» հաղորդավարի սխալն արդյունք է **ծուղակն ընկնել** և **թիրախ դառնալ** դարձվածների բաղարկության), «Երգչուհի Ադելը բոլորովին չի կոմպլեքսավորվում իր **ոչ բարեկեցիկ** կազմվածքից» («Շանթ». երևի՝ **ոչ բարեկազմ տեսքից**), «Կիլիմանջարոյի գագաթին Նուռը **սասանում է** մեր եռագույնը» (փոխանակ՝ **ծածանում է**), «Տեղի կունենա **ոգեշնչման** հոգեհանգստի կարգ» (փխ. **ոգեկոչման**), «Կամուրջի բետոնյա **ծածկասայլերը** արդեն մաշվել են, հեռացել իրարից» (ճիշտ է՝ **ծածկասալերը**), «Նկատի է առնվում Արթուր Վանեցյանը, որը վաղն արդեն **կբեմի** որպես քաղաքական գործիչ» (**բեմել** բառը սխալմամբ ընկալվել է որպես բայ, մինչդեռ այն գոյական է՝ կազմված **բեմ** և **ել** (ելնել բայի արմատը) բաղադրիչ-

ներից), «Մեր քաղաքական դաշտը հիմա **վակման** մեջ է» (այստեղ էլ մեկնաբանը **վակուում** օտար բառն է ընկալել որպես հայերեն –ում ածանցով կազմություն), «AREAL-ը անգլերեն տառերից կազմված **ապահովություն** է» (ուզում է ասել՝ **հապավում**), «Թող պոպովներն ու լավրովները խոսեն, ժամանակ առ ժամանակ թող **հորջորջա** Ալիևը» (այս հաղորդավարուհին էլ շփոթել է **հոխորտալը** և **հորջորջելը**), «Մենք գնացել էինք հանգուցյալի ընտանիքին մեր ցավակցությունը **ավետելու**» (քաղաքական այս գործչին էլ պետք է հիշեցնել, որ **ավետել** բառը նշանակում է **բարի լուր հաղորդել**), «Հանրապետականը միշտ էլ ծանրակշիռ ու **մտածածին** որոշումներ է ընդունել» (նախ **մտացածին** («սուտ, հնարովի») բառի ձևն է աղավաղվել, ապա և գործածվել է հակադիր նշանակությամբ), «Աղցանը պատրաստում ենք **հազարաթերթիկով**» (երևի նկատի ունի **հազարը**), «Մենք անցյալ տարի անցանք համապետական ընտրությունների **բոհով**» (ճիշտ է՝ **բովով**), «Այդ օրը նա որոշել էր վառարանը դնել, որի համար իջել էր **ձեղնահարկ**» (իջնել կարելի է **նկուղ** կամ **ներքնահարկ**, ձեղնահարկ բարձրանում են), «Այսօրվա երիտասարդները չեն գնահատում ժամանակը և ամեն ինչ թողնում են ճակատագրի **հեգնանքին**» (գուցե **քմահաճույքի՞ն**), «Բռնության հետևանքով **մահացվածության** դեպք կա» (բառակազմական այս «գյուտի» հեղինակը Հ.1-ի հաղորդավարն է), «Որքանո՞վ է Ձեր կազմակերպությունը նպաստում, որ մարդիկ զգուշանան և իրենց **զեղչ** պահեն» (՝), «Դահլիճից մի ուրիշ կարգի

ջերմություն է գալիս, գալիս ու **պարունակում է քեզ**» (Ժողովրդական դերասանը մոռացել է **պարուրել** բառը), «Էստեղ փողոցն անցնելը սեփական կյանքը **մահապատժի** ենթարկելու նման մի բան է»: «Ես հողվածներ եմ գրում **տոչորելու** մարդկանց հայրենասիրության ոգով» (փիլ.՝ **տոգորելու**), «Կոչ ենք անում դադարեցնել մարտական գործողությունները և **զոջում ենք** մարդկային կորուստների համար» (փիլ. **ցավում ենք**), «Սարդարապատում **հաղթանակելով** թուրքական բանակին՝ դրեցին Հայաստանի Հանրապետության հիմքը» (պետք է լիներ՝ **հաղթելով. հաղթանակելը** չեզոք սեռի է և ուղիղ խնդիր չի առնում): «Պատահու՞մ է, որ բռնելուց հետո նորից **խայտը** կուլ տա» (փիլ.՝ **խայծը**): Հաղորդավարներից ոմանց էլ պետք է հիշեցնել (կամ տեղեկացնել), որ **ոմն** դերասունը և դրա հոգնակին՝ **ոմանք**, գործածվում են անձ ցույց տվող գոյականների փոխարեն , ուստի հետևյալ կիրառությունները շեղվում են հայերենի նորմից. «Ահազանգերից ոմանք կանխվել են, ոմանք ընթացքի մեջ են» (Արմնյուզ), «Ուզում ենք տուգանքներից ոմանց փոխարինել նախազգուշացմամբ» (Հ. 1), կամ՝ «Հարությունը վնասվածքների **հովանուներքո** է հանդես եկել ամբողջ այս տարվա ընթացքում» (կարելի էր ավելի հաջող ձևակերպել, ասենք՝ «վնասվածքներն ուղեկցել են Հարությունին»), «Տատիկս դերասան Շամիրխանյանի մասին այսպիսի մի **պատրվակ** է հիշում» (երևի՝ **դրվագ**), «Տոնը նշել են՝ ցուցադրելով զինվորների **կամայական** և պրոֆեսիոնալ հմտությունները» (Հ. 1. պետք է լիներ՝

կամային), «Ռուսաստանի հավաքականը ճարահաստյալ տեսք ունի» (փխ. հուսահատ, հուսալքված) և այլն:

Բառագործածության ոչ կանոնական դրսևորումներից հետաքրքիր են իմաստային կրկնաբանություններն ու բառերի հավելուրդային գործածությունը. սրանք նույնպես հետևանք են բառային իմաստների ոչ ստույգ ընկալման կամ խոսքի ճշգրտության պահանջի անտեսման: Ահա օրինակներ. «Մենք հետևում ենք դեպքերին և կհաղորդենք բոլոր **նոր նորությունները**» (Շանթ, հաղորդավարուհի), «Կոնֆերանսին մասնակցում էին **հայտնի հեղինակություններ**» (Հ. 2, հաղորդավար), «Ես առաջին անգամ և **լիիրավ իրավունքով** կարող եմ մեր Ամերիկայի հայրենակիցներին ասել «Երևանն է խոսում»» (Արմնյուզ), «Լուրի **իսկությունը ճիշտ էր**» (TV-5. պետք էր ասել «Լուրը ճիշտ էր» կամ «Լուրի իսկությունը հաստատվել էր»), **Մեկնարկը կսկսվի** 11-ին, քաղաքապետարանի մոտից (Հ. 1. ճիշտ կլիներ՝ «մեկնարկը կտրվի» կամ «երթը կսկսվի», «երթը կմեկնարկի»), «Մենք ունենք հստակ առաջատար՝ Հովսեփի Հովսեփյանի գլխավորությամբ» (հաշվի առնենք, որ առաջատարը և գլխավորողը նույն Հովսեփի Հովսեփյանն է) և այլն:

Լեզվական ոչ բարձր մշակույթի առավել ակներև արտահայտություններ են բառերի հնչյունական կազմի աղավաղումները, ինչպես՝ «Խոսենք Ձեր ծրագրերից՝ **շրջակայություններ**, համերգներ» (փխ. **շրջագայություններ**), «Ինձ համար **հանելուքային** մնաց...» (փխ.՝ **հանելուկային**), «Տա-

րիների ընթացքում կինը **իմաստանում է**», (փխ. **իմաստանում**), «Ադրբեջանական գորքը կրերվի բարձր մարտական պատրաստականության» (փխ. պատրաստության), «Գումարներ **մխսելու** համար դատվել է նախարար» (փխ. **մսխելու**), «Չի կարելի նվաստացնել մարդուն՝ օգտվելով նրա **ոչ օգնական վիճակից**» (փխ. **անօգնական**) և այլն (բերված բոլոր նախադասությունները հաղորդավարների խոսքի նմուշներ են), «Մենք անցնում էինք **նկուղիով**» (Հ. 1. երևի՝ **նկուղով**. սա մարզահամերգայինի տնօրենի խոսքից է), «Կարևորը պատճառները չեն, կարևորը **եղելիությունն է**» (Երևանի ավագանու անդամի խոսքից), «Ես առաջիններից մեկն էի, որ ստիպեցի հարգեն բեմի մարդկանց **ըստ արժավույնս**» (փխ. **ըստ արժանվույն**. երգչի խոսքից է), «Նկարեցինք մի **գույնավոր** տեսահոլովակ» (երգչուհու խոսքից) և այլն:

Երբեմն էլ աղավաղված են ներկայացվում հին հայերենով ավանդված խոսքային կաղապարներ, որոնք սովորաբար գործածվում են ոճավորման նպատակով: Ահա. «Մենք պարտավոր ենք սիրել **միմյանցս**», «Բայց ասված է, որ սիրել **զմիմյանց**» (Հ. 1) (երկու դեպքում էլ աղավաղվել է սուրբգրային սիրեց՛ք զմիմեանս պատգամը), կամ՝ «**Ձայն բարբառո, ձայն անապատի**» (փխ. **ձայն բարբառոյ յանապատի**) և այլն:

Բառագործածական անձշտությունների մի զգալի մասն էլ հետևանք է հարանուն կամ էլ հոմանիշ բառերի իմաստային նրբերանգների չիմացության կամ շփոթության: Ահա մի քանի բնորոշ օրինակներ. **Հասկացություն – հասկացողութ**

յուն. «Մեր օրերում պարտաճանաչություն հասկացողությունը կորցրել է իր ակտուալությունը» (Արմնյուզ), **ուսանել – ուսուցանել.** «Բայց Ձեր հայրը ուսուցանել է Մարտիրոս Սարյանի մոտ» (Կենտրոն), «Կա՞ այդպիսի ուսումնական հաստատություն, որտեղ երիտասարդը կարող է գնալ և ուսուցանել աստղձագործություն» (ATV), **տեղի տալ – տեղիք տալ.** «Նյարդերը տեղիք են տվել և ինքնասպանության փորձ է արել» (Արմնյուզ), **որակ(վ)ել – որակավոր(վ)ել.** ««Դժբախտ պատահար». այսպես է որակավորվել դեպքը» (Արմնյուզ), **սանձագերծել – սանձահարել.** Ապրիլին ադրբեջանական կողմը սանձահարեց ռազմական գործողություններ (Հ. 1), **հաճախել - այցելել.** «Ուրախ եմ, որ հաճախել եք մեզ մոտ՝ Ամերիկա» (Արմենիա), «Մենք հաղթեցինք շնորհիվ մեր զինվորի և Արցախ այցելած ազատամարտիկների» (Հ. 1) և այլն:

Բառագործածության որոշ դեպքեր էլ, այս փուլում տակավին հակասելով լեզվական նորմին, այնքան տարածված են (և ոչ միայն լրատվամիջոցներում), որ թերևս հիմք են տալիս այդ բառերի մեջ իմաստային որոշակի տեղաշարժ նկատելու: Այսպես, **հավաքագրել** բառը, որն իր բառարանային իմաստով նշանակում է «շատերին վարձով հավաքել մի բանի համար, ներգրավել» (անձերի մասին), այսօր ավելի շատ կիրառվում է «մի բան գրանցելով, գրավոր ձևով հավաքել, ժողովել» իմաստով. օրինակ՝ «Ինֆորմացիան հավաքագրվում

է մեր կողմից» (Արմնյուզ) և այլն¹: Կամ **հավուր պատշաճի** դարձվածը, որ Է. Աղայանի բառարանում բացատրվում է որպես «օրվա պահանջներին, տվյալ հանգամանքներին համապատասխան» և հիմնականում բացասական կամ չեզոք կոննոտացիա ունի, այսօր կարծես թե ձեռք է բերում դրական գնահատողական նշանակություն՝ «պատշաճ կերպով, արժանի, վայելուչ ձևով», օր. «Մենք ստիպված ենք հրապարակել նախագահի և Բաֆֆի Հովհաննիսյանի հանդիպման մանրամասները, թեև համոզված ենք, որ դա հավուր պատշաճի կանի Բաֆֆի Հովհաննիսյանը» (Հ. 1) և այլն: Վերջերս նույն ձևով **օրհասական** բառը (կազմված է **օրհաս**՝ «կյանքի վերջին օր, պահ, վախճան» հիմքից և նշանակում է «մահաբեր, սպանիչ, ճակատագրական, կյանքի ու մահու խնդիր հանդիսացող») ավելի ու ավելի հաճախ է հանդիպում **օրախնդիր** («արդիական, հրատապ, օրվա համար կարևորություն ներկայացնող») նշանակությամբ: Օրինակներ. «Այս մաքսակետի արդիականացումը արդեն օրհասական է դարձել» (Արմենիա), «Ջրային ռեսուրսների ղեկավարումը օրհասական խնդիր է» (Հ. 1), «Արժևորել պարը՝ սա առավել քան օրհասական խնդիր է» (Հ. 2) և այլն:

Հարկ ենք համարում կրկին արձանագրել, որ այս և նրման կարգի այլ օրինակները, որքան էլ տարածված կամ տա-

¹ Այս կիրառությամբ բառը հայտնվել է նույնիսկ պետական հիմնարկների ցուցանակներին. «Հարկերի հավաքագրման բաժին» (Աջափնյակի թաղապետարանում) և այլն:

րածվելու միտված, այնուամենայնիվ շեղվում են արդի հայերենի նորմից և չեն ներդաշնակում խոսքի ճշգրտության պահանջին:

2. ԽՈՍՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՍԽԱԼՆԵՐ – Խոսքի մշակույթի որակական բնութագիրը, բառընտրության ու բառագործածության հմտությունից բացի, ենթադրում է նաև բառերի կապակցման եղանակների ու միջոցների կիրարկման կանոնների, այսինքն՝ քերականական նորմի իմացություն: Այս վերջինը լեզվական նորմի կարևոր բաղադրատարրն է և առանձին քննություն է պահանջում:

Այստեղ առանց մասնավոր մեկնաբանությունների կներկայացնենք մեր արձանագրած այնպիսի խոսքային վթարներ, որոնք արդյունք են մտքի ձևավորման տրամաբանական անհստակության: Ավելորդ է ասել, որ բառագործածության, քերականական, տրամաբանական սխալները փոխալայմանավորված են, հաճախ միաձույլ են հանդես գալիս (պատճառներից մեկն էլ էլ օտար լեզվամտածողության չհաղթահարված ազդեցությունն է):

Բերենք մի քանի բնորոշ օրինակներ:

«Շանթ» հեռուստաալիքով հեռարձակվող երգի մրցույթի ժյուրիի անդամի գնահատականից. «Ձեր ձայնի տեմբրը մեր «X ֆակտորի» ամենահարուստ տեմբրն է, մանավանդ ներքևի չիստոտաներում շատ փափուկ է, պարզապես որպես լսողին շոյող ականջներ»: Ռեժիսորի հարցազրույցից. «Կյանքը կապված է սիմպատիաների վրա.... Ես հիմա աշ-

խատում եմ Տոլստոյի «Խոլստումերի» հետ կապված մոտիվով» (Արմենիա): Մրցանակ ստանալու առիթով երգչուհու շնորհակալական խոսքից. «Աշխատանքի, չարչարանքների արդյունքը քաղելու մի հաճելի պտուղ էր» (Հ. 1): Անկապակցության մի նմուշ էլ բերենք Բարձրաստիճան սպայի խոսքից. «Բանակի ուտելիքը պետք է համապատասխանեցվի այնպես, որ մարդ երբ ուտի, իրեն զգա ինչպես տան ճաշ» (Հ. 1): ՀՀ վաստակավոր դերասանի հարցազրույցից. «Կան դերեր, որը ես կուզենայի, որ իմ պարագայով, ինձնով դուրս գա» (Հ. 1): Լեզվական կատարելությամբ չի փայլում նաև վաստակավոր արտիստուհու «խոստովանությունը». «Կինը իր գավակի համար կքերթի ոհմակ, եթե դա կսպառնի նրան» (Հ. 1): «Եթե ունեք նման ինֆորմացիա, տրամադրվեք, և ձեր նշված մարդիկ նույնպես կկալանավորվեն» (Հ. 1, ՊԵԿ նախագահի խոսքից):

Իհարկե, սրանք օրինակներ են հիմնականում հրավիրյալ անձանց խոսքից, որը թերևս դժվար վերահսկելի է, սակայն պետք է նշել, որ հաղորդավարների խոսքի մեջ ևս երբեմն խաթարվում են հայերենի տրամաբանությունն ու քերականությունը: «Կիսաբաց լուսամուտների» հաղորդավարի խոսքից. «-Տիկի՛ն Սիլվա, եկեք Ձեր խոսքի մեջ համոզվենք կամ հակառակում ապացուցվենք դադարից հետո»: «Տնից հեռու» հաղորդման վարողն էլ անտեսում է շարահյուսական կանոնը. «Ես շտապում եմ տեսնել իմ կողմից շատ կարոտած Սյուզիին»: Խոսքի տրամաբանության այլ խախտում-

ների օրինակներ. «Սկեսուրի նկատմամբ բացակայող հարգանքն ակնհայտ էր», «Մա՛մ ջան, ինձ քո օգնության կարիքն ա պետք» («Կյանքի կարուսել»), «Այդ երեխաներին պետք է անուշադրության կենտրոնում չթողնել» (Հ. 1) և այլն:

Իհարկե, դիտարկումների այս շարքը կարելի է շարունակել, անդրադառնալ նաև զանգվածային լրատվության այլ միջոցների, լեզվակիրառության այլ ոլորտների լեզվական խնդիրներին ու նաև ձեռքբերումներին, որոնք, կարծում ենք, մասնագիտական առավել սևեռուն ուշադրության պետք է արժանանան: Ամփոփելով կրկին ընդգծենք, որ հեռուստատեսությամբ և այլ լրատվամիջոցներով հնչող հրապարակային խոսքի որակը հասարակության մշակութային զարգացման ընդհանուր մակարդակի գնահատության կարևոր չափանիշներից է:

ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՄԻԱԿՈՐՆԵՐԻ ԵՎ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ

Կապակցությունը որպես լեզվաբանական իրակություն հատուկ է բաղադրվելու հատկությամբ օժտված բոլոր միավորներին՝ հնչյուններ, ձևույթներ, բառեր, նախադասության, բառակապակցության ու դարձվածքների անդամներ, նախադասություններ՝ որպես դրանց «գծային հաջորդականության, շարակարգային հարաբերակցության, իմաստային (իմաստային-կառուցվածքային) փոխհարաբերակցության արտահայտություն...»¹: Շարահյուսական մակարդակում կապակցությունը բառերի (լայն առումով՝ բառակապակցության ու նախադասության անդամների), նախադասությունների (բարդ նախադասության կազմիչների) բաղադրման ու հարաբերակցման դրսևորումների ամբողջությունն է:

Շարահյուսության ոլորտում գործառող միավորների կապակցելիական հնարավորություններն ու դրանց կապակցման օրինաչափությունները փոխալայնականավորված են այդ միավորների իմաստային, քերականական ու կառուցվածքային բնութագրիչներով, ուստի և դրանց ամբողջական քննությունը շարահյուսության հիմնական առարկան է կազմում. շարահյուսությունը բառի բուն իմաստով ուսմունք է կապակցության մասին: «Կառուցել նախադասությունը նշա-

¹ **Հ.Զ. Պետրոսյան**, Հայերենագիտական բառարան, Ե., «Հայաստան», 1987, էջ 295:

նակում է կյանք ներարկել բառերի ամորֆ զանգվածին՝ հաստատելով դրանց միջև շարահյուսական կապերի համակցություն, և հակառակը, հասկանալ նախադասությունը նշանակում է քեզ համար պարզել այդ կապերի համակցությունը, որոնք միավորում են նրա մեջ մտնող բառերը»²:

Բնականաբար, արդի հայերենի շարահյուսական ավանդույթի մեջ նույնպես կարևոր տեղ են զբաղեցնում կապակցության եղանակների ու միջոցների, դրանց դրսևորումների ու փոխառնչությունների հարցերը: Եվ որոշ առումով բնական է նաև, որ շարահյուսության դասագրքերում, ձեռնարկներում զանազան աշխատություններում շարահյուսական որոշ իրողությունների ու միավորների տարբեր մեկնաբանություններն ու գնահատումները տարբերություններ են ծնում նաև կապակցության եղանակների ու միջոցների ընդգրկման սահմանների և գործողության ոլորտների գնահատման հարցերում: Այդ տարբերությունները որպես կանոն պայմանավորված են լինում քննության տարբեր հայեցակարգերով, ուսումնասիրողների տեսական տարբեր, երբեմն էլ անհրաժեշտ չափով չհիմնավորված պատկերացումներով, իսկ սրանք հաճախ բավարար հստակությամբ չեն լուսաբանվում վերը նշված աշխատանքներում: Ստորև ներկայացվող դիտարկումները փորձ են անդրադառնալու հենց այդ կարգի շարահյուսական մի քանի իրողությունների:

² Люсьен Теньер, Основы структурного синтаксиса, М., «Прогресс», 1988, էջ 23:

Շարահյուսագիտության, նաև հայ շարահյուսագիտության մեջ ավանդաբար առանձնացնում են կապակցության չորս կարգի դրսևորում (որ նշանակում է կապակցության ուսումնասիրության չորս հայեցակետ)՝ կապակցության տեսակ (համադասական, ստորադասական, ստորոգումային), կապակցության բնույթ (ենթակայական, ստորոգելիական, որոշչային կամ վերադրային, խնդրային, պարագայական), կապակցության եղանակ (համաձայնություն, խնդրառություն կամ կառավարում, առդրություն), կապակցության միջոցներ (քերականական ձևեր, հարաբերիչ բառեր, շարադասություն և հնչերանգ)³: Առայժմ մի կողմ թողնելով կապակցության միջոցները՝ փորձենք անդրադառնալ տարբեր տեսակի և բնույթի կապակցությունների և դրանց իրացմանը ծառայող կապակցության եղանակների հարաբերակցությանը:

Նախ՝ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ մասին:

Ժամանակակից հայերենի քերականություններում ընդունված է, որ համաձայնության եղանակով կապակցվում են ենթական ու ստորոգյալը և բացահայտիչն ու բացահայտյալը («կախում» պայմանական տերմինով անվանվող հարաբերության մասին խոսք կլինի ստորև): Ընդամին լեզվաբանական գրականության մեջ համաձայնությունը համարվում է ստորադասական կապի եղանակ: Ռուսաց լեզվի քերակա-

³ Հմմտ. **Հ. Հարությունյան**, Կառավարումը ժամանակակից հայերենում, Ե., 1983, էջ 50-61:

նության հեղինակները համաձայնությունը սահմանում են հետևյալ կերպ. «Համաձայնությունը ստորադասական կապակցություն է, որն արտահայտվում է ստորադաս բառերի ձևերի նմանեցմամբ (уподоблением) գերադաս բառի ձևերին՝ սեռով, թվով և հոլովով կամ հոլովով և թվով կամ էլ միայն հոլովով և արտահայտում է բուն որոշչային հարաբերություններ՝ *новый дом, кто-то чужой, дом – башня, ясли – новостройка*»⁴: Պետք է նկատել, որ ենթակայի և ստորոգյալի կապը ռուսագիտության մեջ կա՛մ համաձայնություն չի համարվում, կա՛մ այդպիսին է դիտվում վերապահությամբ: «Երբեմն որպես համաձայնություն է որակվում (ռուսերենում և այլ լեզուներում) երկկազմ նախադասության գլխավոր անդամների ձևային նմանեցումը: Սակայն համաձայնության հետ նույնացնելն այստեղ օրինաչափ չէ. քանի որ ենթակայի և ստորոգյալի կապը ստորադասական չէ, այդպիսի կապակցությունը կոչվում է համապատասխանեցում (координация)»⁵:

Հայերենագիտության մեջ համաձայնության՝ որպես կապակցության եղանակի գործողության ոլորտի հստակեցումը անմիջաբար պայմանավորված է ենթակայի և ստորոգյալի, ինչպես նաև բացահայտչի և բացահայտյալի կապակցության տեսակի գնահատումով: Երկու դեպքում էլ առկա են տարբերումներ: Նախ մի փոքր հանգամանորեն՝ են-

⁴ Русская грамматика, М., 1980, էջ 20:

⁵ Лингвистический энциклопедический словарь, М., 1990, էջ 479.

թակայի և ստորոգյալի կապակցության մեկնաբանությունների մասին:

Թեև շարահյուսության բոլոր գործող դասագրքերում և ուսումնական ձեռնարկներում երկկազմ նախադասության կառուցվածքը ներկայացվում է որպես կառուցվածքային երկու կենտրոնների, այլ կերպ ասած՝ երկու հավասարաթեք գլխավոր անդամների և դրանց շուրջը համախմբված լրացական անդամների կապակցություն, այնուամենայնիվ այս պատկերացումը մեր շարահյուսագիտության մեջ միակ ընդունվածը չէր: Հանրահայտ է Մ. Աբեղյանի տեսությունը, որի համաձայն նախադասություն կամ խոսք կազմում են դիմավոր բայերը, իսկ մյուս անդամները (կամ խոսքի մասերը), ներառյալ ենթական, դիմավոր բայի լրացումներ են, այսինքն՝ գտնվում են նրա կառավարման տիրույթում: Աբեղյանի համակարգում կախման կամ ստորադասության հարաբերությունը ենթակայի և ստորոգյալի, ինչպես նաև բացահայտչի և բացահայտյալի հարաբերության դեպքում անվանվում է ներունակություն, և սա էլ, կարծում ենք, հետագայում հիմք է դառնում Աբեղյանին վերագրելու ենթակայի ոչ լրացական՝ գլխավոր անդամ համարելու տեսակետ, որն այնուամենայնիվ քերականական հայեցակետով այնքան էլ համոզիչ չի թվում: Այս առումով բավական հատկանշական են 1988-ին «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի էջերում տպագրված՝ Ռ. Իշխանյանի և Է. Աղայանի բանավիճալին հոդվածները, որոնցում հեղինակները, երկուսն էլ հիմնը-

վելով Աբեղյանի շարահյուսական ուսմունքի վրա, հանգում են նախադասության կառուցվածքի վերլուծության հակադիր պատկերացումների: Ռ. Իշխանյանը փորձում է հիմնավորել, որ Աբեղյանի տեսության մեջ նախադասությունը ներկայացվում է որպես «միակենտրոն» միավոր՝ դիմավոր բայով արտահայտված միակ գլխավոր անդամով, մինչդեռ Է. Աղայանը նույն գրքից բերված քաղվածքներից եզրակացնում է, որ «... նա (Աբեղյանը – Լ. Թ.) նախադասությունն ընդունում էր ո՛չ թե որպես միակենտրոն, այլ որպես երկկենտրոն և նույնիսկ եռակենտրոն համակարգ (ենթակա, ստորոգյալ և ստորոգում)»⁶:

Ընդունելով հանդերձ, որ ժամանակակից հայերենի քերականություններում (գոնե ուսումնակրթական ոլորտում) այժմ գերիշխողը ենթակայի և ստորոգյալի քերականական համարժեքության գաղափարն է, կարծում ենք նաև, որ հանիրավի անտեսվում կամ էլ հպանցիկ է ներկայացվում ենթակայի՝ բայի քերականական լրացում համարելու տեսակետը, որ, սովորական լինելով ընդհանուր լեզվաբանության մեջ և այսօր մեզանում էլ բավական արձագանքներ ունենալով⁷, հիմնականում շարունակում է ընկալվել որպես անընդունելի ավանդախախտություն: Սա բացատրվում է, կար-

⁶ Է. Աղայան, Նախադասության մասին, Բանբեր Երևանի համալսարանի, 1988, հ.1, էջ 62:

⁷ Տե՛ս, օրինակ, Յ.Ք. Առայն, Предмет и основные понятия структурального синтаксиса, Е., 1968, Ղ. Գյուլզատյան, Գրական արևելահայերենի քերականության հիմունքներ և այլն:

ծում ենք, մեր շարահյուսագիտության մեջ տասնամյակներ շարունակ իմացաբանական-տրամաբանական սկզբունքի գերակայության հանգամանքով:

Խնդիրը, ինչպես արդեն նշել ենք, նախադասության՝ որպես լեզվական հաղորդակցության հիմնական միավորի ընկալման ելակետն է և դրանով պայմանավորված՝ վերլուծության սկզբունքը: Մոտեցումների այս կարգի տարբերությունը հստակորեն ներկայացվել է դեռևս Լյուսիեն Տենիերի կողմից: «Ավանդական քերականությունը,-գրում է նա,- հենվելով տրամաբանական սկզբունքների վրա, ձգտում է բացատրել նախադասության մեջ սուբյեկտի և պրեդիկատի տրամաբանական հակադրությունը. սուբյեկտն այն է, որի մասին ինչ-որ բան է հաղորդվում, պրեդիկատը՝ այն, ինչ որ հաղորդվում է սուբյեկտի մասին...: Այս պատկերացման մեջ պետք է տեսնել ոչ այլ բան, քան այն ժամանակների՝ Արիստոտելից մինչև Պոր Ռոյալ, վերապրուկը, երբ ամբողջ քերականությունը հիմնված էր տրամաբանության վրա»⁸: Նախադասության կառուցվածքային կենտրոնը, ըստ Տենիերի, բայական հանգույցն է, և ենթական մեկն է կառուցվածքային առումով բայից կախման մեջ գտնվող գործորդներից (ակտանտներից): Ենթական և ստորոգյալը կառուցվածքային համարժեք կենտրոններ համարելը, ըստ Տենիերի, «նշանակում է, որ նախադասության անդամներից մեկին տրվում է **անհամաչափ կարևորություն**, որը չի արդարացվում գուտ

⁸ Л. Теньер, նշվ. աշխ., էջ 118:

լեզվաբանական որևէ փաստարկով (ընդգծումը բնագրում է –Լ. Թ. »⁹:

Մեր քերականագիտության մեջ ենթակայի և ստորոգյալի ըմբռնման, և ընդհանրապես նախադասության տեսության հարցերում քննության հայեցակետի կարևորությունն ընդգծվում է մասնավորապես Գ. Ջահուկյանի կողմից: Նախադասության անդամների փոխհարաբերությունները քննելիս նա անհրաժեշտ է համարում տարբերել օբյեկտիվ և սուբյեկտիվ, այլ տերմինով՝ հաղորդային և հաղորդակցային մակարդակները: Առաջին դեպքում «բայ-ստորոգյալը օբյեկտիվորեն հանդես է գալիս որպես առարկաների հարաբերության դրսևորում, և քանի որ առարկաները տվյալ նախադասության մեջ հանդես են գալիս հենց տվյալ հարաբերությամբ, ուստի և բայ-ստորոգյալը դառնում է յուրատեսակ կենտրոն...»: Երկրորդ դեպքում որպես նախադասության կենտրոն հանդես է գալիս այսպես կոչված ենթական՝ մտքի այն առարկան, որը խոսողի ուշադրության կենտրոնում է, և որին վերագրվում է որևէ հատկանիշ (լայն առումով) իբրև ստորոգյալ»¹⁰: Այսինքն՝ «...ենթական հաղորդակցային առումով կենտրոնական անդամ է, հաղորդային առումով՝ դիմավոր բայով արտահայտված հարաբերության կողմերից մեկը, այսինքն՝ բայական արժույթի մի դրսևորումը, հետևա-

⁹ Նույն տեղում, էջ 119-120:

¹⁰ Գ. Բ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974, էջ 333:

բար դիմավոր բայի համեմատությամբ լրացական անդամ»¹¹: Այսուհանդերձ, նախադասության կաղապարային բնութագիրը ներկայացնելիս Գ. Ջահուկյանը կարծես թե միաժամանակ հաշվի է առնում այս երկու՝ օբյեկտիվ լեզվակառուցվածքային և սուբյեկտիվ (հաղորդակցային) մակարդակները և անհրաժեշտ է համարում միացնել «ենթակայի և ստորոգյալի քննությունը՝ նկատի առնելով, որ նրանք իրար նկատմամբ գրավում են երկակի դիրք, և չի կարելի մեկը համարել գլխավոր, մյուսը՝ լրացական անդամ»¹²:

Ստացվում է այնպես, որ ավանդական քերականություններում կապակցության ստորոգումային անվանվող տեսակը կապակցման եղանակի առումով երկակի դրսևորում ունի. եթե հաշվի ենք առնում ենթակայի և ստորոգյալի հարաբերության լեզվա-կառուցվածքային հայեցակետը, ապա ենթական պետք է համարվի դիմավոր բայի կողմից քերականորեն կառավարվող անդամ, սակայն դրանց միջև առկա կախման յուրահատուկ բնույթը (Աբեղյանի կողմից «ներունակություն» կոչվող), որն արտահայտվում է դիմաթվային համապատասխանության ձևով, հատուկ է համաձայնությանը: Այս առումով ընդունելի պիտի համարել Հ. Հարությունյանի այն եզրահանգումը, թե «Ենթակայի և ստորոգյալի կապակցությունը այլ բնույթի կապակցություններից տարբերվում է նրանով, որ այստեղ միաժամանակ գործում են

¹¹ Նույն տեղում, էջ 340:

¹² Նույն տեղում:

կապակցության երկու եղանակ՝ համաձայնություն և կառավարում (միայն հոլովական)»¹³:

Համաձայնության գործողության ոլորտում դիտարկվող մյուս հարաբերությունը բացահայտիչ-բացահայտյալ կապն է, որի մեկնաբանությունը ևս տարակարծությունների առիթ է տվել: Մանրամասների մեջ չխորանալով՝ նշենք, որ որոշ քերականներ բացահայտիչը նախադասության ինքնուրույն լրացական անդամ չեն համարում կամ այդպիսին են համարում որոշակի վերապահումներով, իսկ բացահայտչի և բացահայտյալի՝ միննույն քերականական հատկանիշներով օժտված լինելը դիտում են ոչ թե որպես համաձայնության, այլ նույն գերադասի կողմից թելադրված խնդրառական կապի դրսևորում¹⁴:

Համաձայնության եղանակով անխառն ստորադասական հարաբերություն, ինչպես և ընդունված է լեզվաբանական գրականության մեջ, արտահայտվում է հատկապես որոշչային (լայն առումով՝ մականվանական) հարաբերությամբ կապված եզրերի միջև: Այս իրողությունը, ինչպես հայտնի է, գործում էր հին հայերենում (թեև զգալի շեղումներով) և բնորոշ չէ արդի հայերենի համար (որոշ կայուն կամ քարացած ձևեր կարելի է մատնանշել՝ *մեծավ մասամբ, մեծավ ուրախությամբ, միով բանիվ, մեծի տանն* և այլն): Մեր-

¹³ **Հ. Հարությունյան**, նշվ. աշխ., էջ 102:

¹⁴ Տե՛ս **Ա. Խաչատրյան**, Բացահայտչի գնահատման շուրջը, Բանբեր Երևանի համալսարանի, 1979, հ. 1, էջ 125-135, **Ս. Գյուլբուդադյան**, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1988, էջ 159-172:

օրյա քերականական աշխատանքներում գոյականի և նրա մականուն լրացումների (որոշչի և հատկացուցչի) կապակցությունը նույնպես միանշանակ չի գնահատվում: Այս մասին խոսք կլինի ստորև, իսկ այստեղ հարկ ենք համարում անդրադառնալ ժամանակակից հայերենում որոշչի և որոշյալի կապակցության մի առանձնահատուկ դրսևորման, որը հետազոտողների կողմից սովորաբար ընդունվել է որպես համաձայնության մի տեսակ (Մ. Աբեղյան, Վ. Առաքելյան, Մ. Ասատրյան և այլք), Ռ. Իշխանյանի կողմից՝ առողրության մի դրսևորում, իսկ Արտաշես Սարգսյանը մեր կարծիքով բավական հիմնավորված առաջարկ է անում այն որպես կապակցության ինքնուրույն եղանակ առանձնացնելու¹⁵: Խոսքը վերաբերում է քերականական այնպիսի կապակցությանը, որի դեպքում իմաստակառուցվածքային որոշակի դասերի մեջ խմբավորվող որոշիչները կապակցվում են հոգնակի (բազմազան, մեծ-մեծ, հարյուրավոր, տասնյակ, բոլոր և այլն) կամ եզակի (ամեն, յուրաքանչյուր, ամեն մի, որևէ, ամբողջ և այլն) որոշյալների հետ: Կապակցման այս տեսակը մի կողմից իրապես առնչվում է համաձայնությանը, քանի որ կապակցվող եզրերը ակներևաբար համապատասխանում են թվի քերականական կարգի շրջանակում, մյուս կողմից էլ առկա է կառավարման եղանակին բնորոշ՝ եզրերից մեկի թելադրանքով մյուսի որոշակի ձևավորում (տվյալ դեպքում՝ ե-

¹⁵ **Ա. Սարգսյան**, Ժամանակակից հայերենի շարահյուսական կապակցման մի եղանակի մասին, Լեզու և լեզվաբանություն, 2015, հ. 1-2, էջ 35-45:

զակի կամ հոգնակի թվով): Միայն թե այս դեպքում, ի տարբերություն կառավարման, թելադրող եզրը ոչ թե քերականորեն գերադասն է (որոշյալը), այլ ստորադասը (որոշիչը): Այնպես որ «կախում» անվանումը, որ, հետևելով Ռ.Իշխանյանի տերմինաբանությանը, կապակցման այս եղանակի համար առաջարկում է Ա.Սարգսյանը, պետք է հասկանալ «հակառակ նշանով»: Այս նկատառումով, կարծում ենք, արժե մտածել երևույթի առավել հաջող տերմինավորման մասին:

ԽՆԴԴԱՌՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԴՐՈՒԹՅՈՒՆ: Շարահյուսական կապակցության եղանակներից խնդրառությունը (կառավարումը) մեզանում կարծես թե ավելի մեծ ուշադրության է արժանացել. այն համակողմանիորեն և բավականաչափ հիմնավոր կերպով ուսումնասիրվել է Հ. Հարությունյանի վերը հիշատակված աշխատության մեջ: Խնդիրը տեսական բավական լայն ընդգրկում ունի. մեզ հետաքրքրում են, սակայն, մի քանի մասնավոր հարցեր, որոնք առնչվում են խնդրառության և առդրության գործողության ոլորտների՝ արդի քերականական աշխատանքներում և դասագրքերում ներկայացված տարբեր պատկերացումներին:

Կարծում ենք, որ կապակցման խնդրառության եղանակի գործողության ոլորտը հանիրավի ընդարձակվում է, եթե նրանում դիտարկվում են գոյականով և կապային կառույցներով արտահայտվող բոլոր կարգի լրացումների հարաբերությունները գերադաս (լրացյալ) անդամի հետ: Մեզանում այսօր առավել տարածված այս մոտեցմամբ գոյականական

անդամի լրացումներից հատկացուցչի և գոյականով արտահայտված որոշչի կապը գերադաս անդամի հետ բոլոր դեպքերում համարվում է խնդրառական (Մ. Ասատրյան, Ռ. Իշխանյան, Ս. Գյուլբուդադյան և այլք): Որոշիչ-որոշյալ կապակցությունը առդրությանն է հատկացվում միայն ածականով, ածականական դերանվամբ, թվականով, դերբայով, մակբայով արտահայտված որոշիչների դեպքում, իսկ հատկացուցիչ-հատկացյալի առդրական կապն ընդհանրապես մերժվում է:

Մեզ թվում է, որ կապակցության եղանակներից մեկի՝ խնդրառության այս կարգի լայն մեկնաբանությունը արդարացված չէ և որոշակիորեն հակասում է հենց խնդրառության կամ կառավարման բուն գաղափարին: Դժվար է, օրինակ, կապակցական տարբերություն տեսնել *ոսկի մատանի* և *ոսկյա մատանի* բառակապակցությունների միջև: Եթե խնդրառության էությունը լրացական անդամի՝ գերադասի իմաստային կամ քերականական հատկանիշներով թելադրված ձևավորումն է, ապա խնդրառական կապ կարող է առկա լինել միայն բայանուն կամ ընթացային իմաստ արտահայտող գոյականների և դրանց հոլովական կամ կապային լրացումների միջև, ինչպես՝ *խոնարհում հերոսներին, այցելություն ծնողներին, փախուստ իրականությունից, մահ թշնամուն, հավատ մարդու նկատմամբ* և այլն: Իմաստային այսպիսի սահմանափակում չունեցող լրացյալ գոյականի և դրա գոյական լրացման կապը, անկախ վերջինիս հոլովա-

կան կամ կապային արտահայտությունից, առդրական է, ինչպես՝ *ուսուցիչ Հակոբյան, ոսկի մատանի, քար սիրտ, պատի ժամացույց, բրդից վերարկու, սկով մատանի* և այլն: Հարցն այդպես է ներկայացնում նաև Հ. Հարությունյանը. «Այսպիսով, կառավարումն իբրև կապակցության եղանակ գործում է ենթակայական, ստորոգելիական, խնդրային և պարագայական բնույթի հարաբերություններում, կառավարում առկա չէ որոշչային բնույթի հարաբերություններում, և գոյականի հոլովաձևերով կամ կապով և հոլովաձևով արտահայտված որոշիչները լրացյալին կապվում են հոլովական կամ հոլովակապային առդրությամբ»¹⁶: Հարկ է ընդգծել, որ «որոշչային բնույթի» հարաբերություններն ընդգրկում են նաև հատկացուցիչ-հատկացյալ հարաբերությունը. հատկացուցիչը, ունենալով կայուն հոլովական ձևավորում (անհոդ տրական), թելադրված է լինում ոչ թե գերադաս գոյականի քերականական կամ իմաստային հատկությամբ, այլ գոյականի ընդհանուր խոսքիմասային նշանակությամբ, և բոլոր գոյականները (նաև գոյականաբար գործածված բառերը) կարող են ստանալ հատկացուցիչ լրացում: Վերջինս իր իմաստով հաճախ չի էլ տարբերակվում որոշչից, և հնարավոր են լինում փոխադարձ փոխակերպումներ՝ *աշակերտի տետր-աշակերտական տետր, ամռան արև-ամառային արև* և այլն: Գ. Ջահուկյանը հատկացուցիչ-հատկացյալ կապակցությունը համարում է գոյականական շարույթի տարասեռ կաղա-

¹⁶ Հ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 102:

պարի դրսևորում, «համամակարդակային միջկադապարման տիպական օրինակ...., որ հանդես է գալիս սովորական որոշիչ-որոշյալ կապակցության փոխարեն»¹⁷: Հիշենք, որ Մ. Աբեղյանի համակարգում ևս այդ լրացումները չեն տարբերակվում և կոչվում են ընդհանուր մականուն անվամբ:

Հատկացուցչի և հատկացյալի կապակցման եղանակը երկակի մեկնաբանության առարկա կարող է դառնալ այն դեպքում, երբ այդ կապակցությունը սերում է «անցողական բայ+տրական հոլովով լրացում» կադապարից, այսինքն հատկացյալը բայանուն գոյականների իմաստային խմբին է պատկանում, ինչպես՝ *շենքի կառուցում, գրքի ընթերցում, հարցի լուծում* և այլն: Այս կարգի կապակցությունները, ըստ Հ. Հարությունյանի, կարելի է վերլուծել տարբեր տեսանկյուններից. գուտ ձևային մոտեցումով (մակերեսային կառուցվածք) դրանց բաղադրիչների միջև առկա է որոշչային հարաբերություն, և կապակցության եղանակն էլ հոլովական առդրությունն է, մինչդեռ, խորքային կառուցվածքի հաշվառումով, «...անցողական բայերին համապատասխան բայանուն գոյականները իրենց իմաստի պահանջով ենթադրում են գոյականով լրացում և առնում են միայն այնպիսի գոյականներով արտահայտված լրացումներ, որոնք բնորոշ են նաև համապատասխան բայերին, այսինքն՝ առկա է բառերի իմաստների կապակցելիությամբ պայմանավորված սահմա-

¹⁷ **Գ. Զահուկյան**, Շարահյուսական ուսումնասիրություններ, Ե., 2003, էջ 22:

նափակություն»¹⁸, ուստի և կապակցության եղանակն այս դեպքում կարելի է համարել կառավարումը:

Այսպիսով, որոշ վերապահումներով հանդերձ, կարելի է ընդունել, որ որոշչային (ներառյալ հատկացուցիչը) հարաբերությամբ կապված լրացում-լրացյալների կապակցության բնորոշ եղանակը առդրությունն է:

Վերադառնալով խնդրառության եղանակին, կարևոր ենք համարում անդրադառնալ դրա շրջանակում գործառողմեկ այլ՝ կապի և կապվող բառի (կապի խնդրի) կապակցության մեկնաբանություններին: Կապակցության եղանակի հարցն այստեղ կարծես թե առարկություններ չի հարուցում, սակայն լիակատար համաձայնություն չկա ստորադասական կապի ուղղվածության մեկնաբանության խնդրում: Գերիշխող տեսակետն այն է, որ կապային կապակցության գերադաս՝ կառավարող (խնդրառու) եզրը կապն է, իսկ կապվող բառը (կապի խնդիրը) ստորադաս եզրն է: Գ. Ջահուկյանն այս մասին գրում է. «Ընդհանուր առմամբ կապի խնդրի հոլովածնը պայմանավորված է կապի խնդրառությամբ, կապի գործածությունը՝ նրա խնդրի՝ նախադասության մեջ ունեցած դերով կամ այլ բառերի խնդրառությամբ, այսինքն՝ խնդրի հոլովն այս դեպքում ունի ներքին, կապը՝ արտաքին պայմանավորվածություն»¹⁹: Հ. Հարությունյանի կարծիքով էլ

¹⁸ Հ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 240:

¹⁹ Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, էջ 324:

«Կապվող բառի քերականական ձևը պայմանավորվում է կապի պահանջով, և գոյական+կապ վերլուծական շարահյուսությամբ կապը հանդես է գալիս որպես քերականորեն գերադաս բառ»²⁰:

Կապային լրացումների ձևավորման և կիրառության նման մեկնաբանությունը, կարծում ենք, առավել ընդունելի է, սակայն լեզվաբանության մեջ արտահայտվել է նաև այն տեսակետը, ըստ որի նյութական իմաստից զուրկ խոսքի մասը՝ կապը, չի կարող քերականական գերիշխանություն ունենալ նյութական իմաստով օժտված խոսքի մասի նկատմամբ: Այս մոտեցումը մեզանում առավել հետևողականորեն ներկայացվել է Ս. Աբրահամյանի կողմից: «Այն հանգամանքը, -գրում է նա, -որ կապն առանց կապվող բառի չի գործածվում, և դրանք միշտ հանդես են գալիս միաժամանակ, ոչ թե կապի գերադաս լինելու և նրա խնդրառության ապացույց է, այլ ճիշտ հակառակը, կապի ստորադաս, սպասարկու դերի արտահայտություն է, պայմանավորված է այն բանով, որ կապը կարող է գործածվել միայն այն դեպքում, երբ անհրաժեշտ է այս կամ այն բառի քերականական հարաբերությունն արտահայտել գերադաս անդամի (մեծ մասամբ ստորոգյալի, մասամբ այլ անդամների) նկատմամբ»²¹: Այս հիմնավորմամբ

²⁰ **Հ.հարությունյան**, նշվ. աշխ., էջ 288:

²¹ **Ս.Աբրահամյան**, Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Ե., 1965, էջ 343:

Էլ նա փաստորեն մերժում է «կապի խնդրառություն», «կապի խնդիր» հասկացությունները (թեև որոշ վերապահությամբ ընդունում է «կապի հոլովառությունը»):

Այս դիտարկումներն, անշուշտ, կարելի է շարունակել: Մասնագիտական տարբեր մեկնաբանություններ ու գնահատումներ բնականորեն առկա են առհասարակ հայերենի շարահյուսական կառուցվածքի նկարագրության, մասնավորապես, ինչպես վերևում էլ փորձեցինք ներկայացնել, շարահյուսական միավորների կապակցական առանձնահատկությունների, դրանց կապակցման տեսակների, բնույթի ու եղանակների փոխառնչությունների հարցերում, և դրանց լուսաբանումը, կարծում ենք, օգտակար կարող է լինել ն՛ գիտական, և՛ հատկապես ուսումնամեթոդական նկատառումներով:

ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒՅԹԻ ՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Արդի հայ շարահյուսագիտության մեջ գոյականական անդամի երեք տեսակ լրացումներ են առանձնացվում՝ որոշիչ, հատկացուցիչ և բացահայտիչ: Գործնական վերլուծությունների ընթացքում սրանք դյուրությամբ ճանաչելի միավորներ են, ձևաբանական մակարդակում էլ սրանց արտահայտության միջոցները հիմնականում հստակորեն տարրոշվում են: Մակայն այս լրացումների շարահյուսական բնութագրերի առավել խորքային վերլուծությունը, դրանց և գոյական գերադաս անդամի կապակցության, ընդհանրապես գոյականական բառակապակցության կազմի ու կառուցվածքի գնահատումների հարցերը բավական հետաքրքիր տեսական դիտարկումների առիթ են տալիս, մանավանդ ավանդականից տարբերվող դիտանկյունով քննելիս:

ՈՐՈՇԻՉ ԵՎ ՀԱՏԿԱՑՈՒՑԻՉ- Գոյական անդամի այս լրացումները, ինչպես հայտնի է, Մ. Աբեղյանի շարահյուսական համակարգում միմյանցից զատորոշված չեն և միասին «մականուն» տերմինով են կոչվում: Մականուն վերադիրը¹, ըստ Մ. Աբեղյանի, արտահայտվում է կա՛մ ածականով (այդ թվում՝ թվական և դերանուն ածականներով՝ բարձր լեռներ, երեք մարդ, այս տունը), կա՛մ գոյականով (խնձորի ծառ, հա-

¹ Աբեղյանը գոյականի «վրա դրվող» լրացումները կոչում է վերադիր, սրանք էլ բաժանում է երկու խմբի՝ մականուն և բացահայտիչ: Տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, Զ հատոր, Ե., 2016, էջ 320:

յոց գորքերի սպարապետ, մի բաժակ ջուր), կա՛մ էլ մակբայով (վերստին հանդիպում, հիմնովին նորոգություն). հատուկ արձանագրենք, որ, ըստ Աբեղյանի, մակբայներն այս կիրառությամբ «այլևս մակբայ չեն կարող համարվել, այլ ածական»²: Այս ձևակերպումն արդեն վկայում է, որ Աբեղյանը գոյական անդամի լրացումների, ընդհանրապես նախադասության անդամների («խոսքի մասերի») առանձնացման ելակետ է համարում դրանց շարահյուսական կիրառության հատկանիշը: Ըստ այսմ էլ գոյականի վրա դրվող (մակադրվող) բառերը, (հոլովված գոյականները նույնպես) անկախ իրենց կարգային արժեքից, համարվում են լրացյալ գոյականի ցույց տված առարկայի որակային, քանակական և այլ կարգի (վերաբերություն, պատկանելություն և այլն) հատկանիշ արտահայտող լրացումներ, լայն իմաստով՝ ածականներ: Ածական տերմինն, այսպիսով, իր այս կիրառությամբ չի նույնանում դրա մաքուր ձևաբանական ընկալման հետ: Այս մոտեցումը ընդունված է նաև հետագա շրջանի այսպես կոչված կառուցվածքային շարահյուսագիտության մեջ: Մեզանում այս սկզբունքի հետևողական կիրառությունը կարելի է գտնել Է. Աթայանի «Կառուցվածքային շարահյուսության առարկան և հիմնական հասկացությունները» աշխատության մեջ: Խնդրո առարկայի մասին նա գրում է. «Որոշի (օր. *հովվի* տունը) կամ պարագայի (մարդիկ դուրս եկան *հրապա-*

² Նույն տեղում, էջ 321:

րակ) գործառույթյամբ հանդես եկող գոյականը բառի բուն իմաստով գոյական չէ, այլ համապատասխանաբար ածական կամ մակբայ: Նշանակության և գործառույթյան թվացյալ անհամապատասխանությունը, երբ գոյականը գործածվում է որպես որոշիչ կամ պարագա, բայը (անդեմ ձևով)՝ որպես ենթակա կամ խնդիր, որպես որոշիչ կամ պարագա (դերբայները), երկրորդական նախադասությունը՝ որպես որոշիչ, խնդիր կամ պարագա և այլն, պատրանք է՝ պայմանավորված բառային և քերականական մակարդակների շփոթմամբ: Որոշչի գործառույթուն կատարող գոյականը իրականում գոյական է միայն հիմքի բառային նշանակությամբ, հնարավոր է՝ նաև ձևով (եթե պահում է հոլովական կամ կապային ձևավորումը). այսպես, «հովվի» ձևը ունի առարկայնության բառային իմաստ, հանդես է գալիս հոլովական ձևավորմամբ, որն ընդհանրապես հատուկ է գոյականին: Բայց **շարահյուսորեն** (ընդգծումը բնագրում է-Լ.Թ.) այն արդեն ածական է, և ոչ միայն գործառույթյամբ (որոշչային), այլև կարգային նշանակությամբ («հովվի» ձևը քերականորեն ցույց է տալիս գոյականի հատկանիշ)»³:

Մեր նպատակն այստեղ խոսքի մասերի դասակարգման սկզբունքների գնահատումը չէ, այլ թերևս այն փաստի արձանագրումը, որ գոյականին լրացնող բառերը, տվյալ դեպքում՝ ավանդաբար առանձնացվող որոշիչ և հատկացու-

³ Э. Р. Атаян, Предмет и основные понятия структурального синтаксиса, Ереван, 1968, էջ 172-173:

ցիչ լրացումները երկուսն էլ գոյականով արտահայտված առարկայի (հասկացության) հատկանիշ են ցույց տալիս և իրարից տարբերվում են ոչ թե շարահյուսական գործառույթյամբ, այլ ձևաբանական-կարգային արժեքով: Բառիմաստային ընդհանրության պարագայում կարգային այդ տարբերություններն էլ կարող են չեզոքանալ, ինչպես՝ *աշակերտի տետր-աշակերտական տետր, մարդու գանգ-մարդկային գանգ* և այլն, հաճախ էլ որոշիչ-հատկացուցիչ տարբերակումը զուտ համատեքստային պայմանավորվածություն ունի, ինչպես՝ *տղամարդու վերարկու, դռան բռնակ* և այլն:

Ըստ Գ. Ջահուկյանի՝ գոյականական համասեռ շարույթի (այսինքն՝ գոյականական բառակապակցության) առմիջուկային անդամները որոշիչներ են, որոնք ձևաբանորեն արտահայտված են ածականով, թվականով, դերանվանական ածականով և սովորական շարադասության դեպքում նախորդում են լրացյալ գոյականին որոշակի կայուն շարադասությամբ (*այս երկու գեղեցիկ տները*): Լրացումներն իրենց հերթին կարող են արտահայտվել շարույթներով, այսինքն՝ հանդես գալ որպես բառակապակցության գերադասանդամ (*քաղաքում իր գործունեությամբ բոլորին հայտնի (այդ) մարդը*): Ավելորդ չէ նշել, որ գոյականական շարույթը կազմող որոշիչների շարահյուսական կապը համադասական չէ. Ջահուկյանն այդ հարաբերությունն անվանում է

միադասություն⁴: Եթե գոյականական բառակապակցության (շարույթի) կախյալ անդամի դերում նույնպես գոյական է, ապա կադապարը տարասեռ է՝ ստացված համասեռ գոյականական շարույթի փոխկադապարմամբ: Հատկացուցիչ-հասկացյալ կապակցությունը Գ. Ջահուկյանը համարում է գոյականական համասեռ շարույթի «համամակարդակային միջկադապարման տիպական օրինակ, որ հանդես է գալիս սովորական որոշիչ-որոշյալ կապակցության փոխարեն»⁵: Այնուամենայնիվ, այս և այլ դեպքերում կառուցվող շարահյուսական բնութագիրը պայմանավորված է գերադաս անդամի դասային (խոսքիմասային) արժեքով. գոյականին լրացնող բառը նրան ինչ-որ առումով բնորոշող, այսինքն լայն առումով ածականական կիրառություն ունի: «Քանի որ խոսքը գոյականին լրացնող բառի **շարահյուսական** բնույթին է վերաբերում, ուստի նրա՝ ածականից տարբեր իմաստաձևաբանական որևէ դասի պատկանելը էական դեր չի կատարում»⁶: Կարծում ենք, որ ավանդական սկզբունքով շարահյուսական

⁴ Տե՛ս Գ. Ջահուկյան, Շարահյուսական ուսումնասիրություններ, Ե., 2003, էջ 14: Վերջին շրջանի քերականագիտական աշխատություններում կիրառվում են համադասություն, միադասություն, նույնադասություն (բացահայտյի և բացահայտյալի, ենթակայի և ստորոգելիի միջև) անվանումները, ընդամին ստորադասություն տերմինի փոխարեն առաջարկվում է տարադասություն տերմինը, որ թերևս կարելի է հաջողված համարել (Տե՛ս, օր., Դ. Գյուլգասոյան, Գրական արևելահայերենի քերականության հիմունքներ, Ե., 2016, էջ 196, 197):

⁵ Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 22:

⁶ Ե. Առայն, նշվ. աշխ., էջ 250:

վերլուծություններում էլ առաջին հերթին պետք է գնահատել գոյական անդամի նշված լրացումների շարահյուսական արժեքի նույնականությունը՝ դրանց ձևաբանական արտահայտության տարբերությունները թողնելով վերլուծության հաջորդ աստիճանին: Իբրև ընդհանուր անվանում էլ կարելի է կանոնավորապես գործածել արեղյանական **մականուն** տերմինը:

Տեսական այս դրույթը, մեր կարծիքով, պետք է հաշվի առնել նաև լրացյալ գոյականի և նրան ստորադասվող լրացումների **շարահյուսական կապակցության եղանակը** գնահատելու հարցում: Նախ արձանագրենք, որ այս խնդիրը մեր շարահյուսագիտության մեջ միասնական լուծում չի ստացել: Գոյական անդամի լրացումների և ընդհանրապես նախադասության անդամների շարահյուսական կապակցության եղանակների տարբերակման հարցում առավելապես հաշվի են առնվում կապակցվող միավորների **ձևաբանական** կարգային հատկանիշները: Ըստ այսմ՝ գոյականով կամ դերանվամբ (դրանց հոլովական ձևերով), ինչպես նաև կապային կապակցություններով արտահայտված լրացումների և դրանց գերադաս անդամների կապակցության եղանակը բոլոր դեպքերում համարվում է խնդրառությունը (կառավարումը), իսկ այսպես կոչված հատկանշանիշ՝ հոլովի քերականական կարգից գուրկ խոսքի մասերով (ածական, ածականական դերանուն, թվական, որոշ դերբայներ, մակբայ) արտահայտված լրացումներինը՝ առդրությունը: Այս մոտե-

ցումով հատկացուցչի և գոյականով արտահայտված որոշչի, այսինքն՝ հոլովված կամ էլ հոլովման կարգային հատկանիշով օժտված լրացումների և դրանց գերադաս անդամի շարահյուսական կապակցման եղանակը բոլոր դեպքերում համարվում է խնդրառությունը (Մ. Ասատրյան, Ռ. Իշխանյան, Խ. Բաղիկյան և այլք): Կարծում ենք, որ այս կերպ կապակցության եղանակներից մեկի՝ խնդրառության (կառավարման) գործողության ոլորտը հանիրավի ընդարձակվում է⁷: Ինչպես արդեն նշել ենք, որոշիչ և հատկացուցիչ լրացումներն իրենց շարահյուսական արժեքով էապես չեն տարբերվում իրարից, հաճախ էլ գոյական որոշիչը կամ հատկացուցիչը, ձևաբանորեն տարբերվելով հանդերձ, իմաստային տեսակետից նույնանում է ածական որոշչի հետ (օր. *ոսկի ժամացույց-ոսկյա ժամացույց, գարնան անձրև-գարնանային անձրև* և այլն), և երկու դեպքում էլ, կարծում ենք, գործում է կապակցության առդրության եղանակը⁸: Գոյական անդամի լրացումների կապակցական առանձնահատկությունների շարահյուսական բնութագիրը ամբողջացնելու համար անհրաժեշտ է անդրադառնալ նաև դրանց **շարադասությանը**: Վերևում նշվեց, որ գոյականական շարույթի կաղապարում

⁷ Այս մասին տե՛ս նաև **Լ. Թեյլան**, «Շարահյուսական միավորների և կապակցության եղանակների հարաբերակցության շուրջ», «Լեզու և լեզվաբանություն», 2022, հ. 1, էջ 63-77:

⁸ Հմմտ. նաև **Ս.Գ. Աբրահամյան, Ն.Ա. Պառնասյան, Հ.Ա. Օհանյան, Խ.Գ. Բաղիկյան**, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Ե., 1976, էջ 406-417, **Հ.Ա. Հարությունյան**, Կառավարումը ժամանակակից հայերենում, Ե., 1983, էջ 102:

որոշիչ լրացումները սովորական շարադասության դեպքում նախորդում են որոշյալին՝ պահելով իրենց կարգային արտահայտությանը համապատասխան կայուն հաջորդականություն: Հատկացուցիչ լրացումը որպես կանոն նախորդում է որոշիչին: Ընդհանրապես պետք է նշել, որ գոյականական լրացումների գծային հաջորդականությունը և դրանց շարահյուսական կապակցության եղանակը միմյանց փոխապամանավորող իրողություններ են: Հին հայերենում, օրինակ, գոյականին հետադասվող որոշիչները նրա հետ սովորաբար համաձայնությամբ էին կապակցվում, նախադաս դիրքում համաձայնությունը սակավադեպ էր, սակայն երկու դիրքերն էլ գրաբարի համար կանոնավոր են⁹: Արդի հայերենում կանոնավոր է համարվում որոշիչ նախադաս դիրքը (հետադաս (շրջուն) շարադասությունը ոճական արժեք ունի), իսկ համաձայնությունը լիովին վերացել է՝ իր տեղը զիջելով առողրությանը: Հայտնի է, որ շարադասությունը որոշ լեզուներում քերականական կամ իմաստային առավել նշանակալից դեր կարող է ստանձնել: Ռուսերենում, օրինակ, շարադասության փոփոխության շնորհիվ գոյականական բառակապակցությունը կարող է օժտվել ստորոգումով և վերածվել նախադասության (художник Арам-Арам-художник, хорошая погода-погода хорошая):

⁹ Այս մասին առավել հանգամանորեն՝ **Հ.Մ. Ավետիսյան**, Որոշիչ-որոշյալի կապակցությունը գրաբարում, Ե., 1972, էջ 23-24: Այս գրքի հեղինակի հավաստմամբ՝ գրաբարում գերակշռում էր որոշիչ նախադաս կիրառությունը:

Ընդհանրապես լրացում-լրացյալի և հատկապես գոյականի և նրա լրացումների շարադասման հատկանիշը լեզվի շարահյուսական կարևոր բնութագրիչ է համարվում: Ըստ Դ. Գյուլգասոյանի՝ տարբեր լեզուների (համենայն դեպս հնդեվրոպական լեզուների) շարահյուսական կառուցվածքների տարբերությունը զուտ շարադասական պայմանավորվածություն ունի, և «լեզուների պատմական փոփոխությունը սկսվում է այստեղից՝ շարույթների ու նրանց բաղադրիչների գծարկային տեղաշարժ-փոխատեղումներից...»¹⁰: Հեղինակի համոզմամբ՝ որոշիչ-որոշյալի շարադասության փոփոխությունն «ի վերջո հանգեցրել է ամբողջ մի ձևաբանական հարացույցի՝ ածականի (ներառյալ թվականը) հոլովական համակարգի վերացմանը հայերենում»¹¹: Գոյականի նկատմամբ իր լրացումների շարադասական դիրքը կարող է հիմք դառնալ նաև լեզուների յուրատեսակ տիպաբանական դասակարգման: Կառուցվածքային շարահյուսագիտության մեջ, օրինակ, ըստ այս հատկանիշի առանձնացնում են **կենտրոնախույս** և **կենտրոնամետ** լեզուներ. առաջին տիպի լեզուներում լրացումը գծային հաջորդականության մեջ որպես կանոն հետադասվում է լրացյալին (ինչպես իտալերենում, իսպաներենում, արաբերենում, ֆրանսերենում և այլն), երկրորդ տիպի լեզուներում՝ նախադասվում (անգլերեն, գերմա-

¹⁰ Դ. Գյուլգասոյան, նշվ. աշխ., էջ 200:

¹¹ Նույն տեղում:

ներեն, վրացերեն, ռուսերեն, հայերեն և այլն)¹²: Լ. Տենիերը, նկատի ունենալով կառուցվածքային գծապատկերի (իր տերմինով՝ **ստեմմա**) մեջ լրացյալի և լրացման գրաված դիրքը, առաջին տիպի լեզուներն անվանում է **վայրընթաց**, իսկ երկրորդները՝ **վերընթաց**՝ նկատի առնելով, որ ստեմմայի մեջ գերադաս անդամը պատկերվում է վերին, իսկ լրացական (կախյալ) անդամը՝ ստորին դիրքում: Հետաքրքիր է նաև, որ լեզվի շարահյուսական տիպը որոշ իմաստով կարող է ազդել է նաև բառակազմական իրողությունների վրա: Այսպես, նշվում է, որ անդամների կենտրոնամետ դասավորության դեպքում նախադաս լրացումը (լայն առումով՝ ածականը) առավել կամ պակաս չափով ձգտում է միանալ հաջորդող գոյականին և կազմել նոր՝ բարդ գոյական¹³: Նկատենք, որ արդի հայերենում՝ որպես կենտրոնամետ կառուցվածք ունեցող լեզվում, նշված բառակազմական կաղապարը նույնպես գործուն է: Ըստ Գ. Ջահուկյանի՝ գոյականի և նրան նախադասվող որոշի միացումից կարող են առաջանալ այսպես կոչված համակաղապարային (համագործառական) բարդ բառեր, որոնցում ամբողջ բարդությունը և հիմքային գոյականը խոսքիմասային պատկանելությամբ համընկնում են (ածական+գոյական=գոյական), ինչպես՝ *աջակողմ, աղվամագ, բարձրավանդակ, բթամատ, գաղտնագիր, հնադար, միջնաշերտ, միջնապատ, միջնորմ, ներքնագգեստ, մոլախոտ,*

¹² Տե՛ս Լ. **Теньер**, Основы структурного синтаксиса, М, 1988, էջ 159-160:

¹³ Նույն տեղում, էջ 161:

վերնաշապիկ, կիսագունդ, կիսաշրջան և այլն: Ինչ վերաբերում է հատկացուցիչ-հատկացյալ բառակապակցությունից սերված բարդ բառերին, ապա Գ. Ջահուկյանը դրանք համարում է գոյականական տարասեռ կադապարի փոխկադապարման արդյունք, ինչպես՝ *հորաքույր, հորեղբայր, տանտեր, ատամնաշար, քերքահավաք, դիմանկար, գինեգործարան, լեռնալանջ, հողամաս, ճաշասեղան, նանս՝ գրելաձև, պատմելառճ, վարվելակերպ* և այլն¹⁴:

ԲԱՑԱՀԱՅՏԻՉ-Շարահյուսագիտական գրեթե բոլոր հանրահայտ աշխատություններում որպես գոյականական անդամի առանձին լրացում ներկայացվող այս անդամը այնուամենայնիվ միատեսակ մեկնաբանության ու գնահատման չի արժանացել: Մ. Աբեղյանի սահմանմամբ «բացահայտիչը կանոնավորապես դրվում է բացահայտյալի հետևից»¹⁵, ի տարբերություն մականուն լրացումների, որոնք «դրվում են անվան վրա առաջից»¹⁶: Շարահյուսական կայունության այս հատկանիշը, որով ըստ էության առանձնանում է բացահայտիչը գոյականական մյուս լրացումներից, միշտ չէ, որ պարտադրական է համարվում: Այսպես, Գ. Ջահուկյանը տարբերում է բացահայտչի երեք տեսակ՝ սովորական, որ նախորդում է բացահայտյալին և չի հոլովվում (Տիգրան թագավորը), սորոհված, որ հաջորդում է բացահայտյալին և համաձայնում

¹⁴ Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բանականություն, Ե., 1989, էջ 121-122:

¹⁵ Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 418:

¹⁶ Նույն տեղում, էջ 320:

է նրա հետ հոլովով և դեմքով (Հայոց թագավորը՝ Տիգրանը), և մասնական, որ կարող է հաջորդել կամ նախորդել բացահայտյալին և ուղեկցվում է *որպես, իբրև, ինչպես* կապերով (Ես, որպես դպրոցի ուսուցիչ... , որպես դպրոցի ուսուցիչ, Գևորգյանը...)¹⁷: Ս. Աբրահամյանը ևս բացահայտչի երեք տեսակ է ընդունում՝ բուն, մասնական և մասնավորող պարագայական, ընդ որում բուն բացահայտչի համար նշանային է համարվում բացահայտյալին հետադասվող դիրքը. «...բացահայտչի և բացահայտյալի տեղերը փոխելիս փոխվում է նաև դրանց հարաբերությունը. բացահայտիչը դառնում է բացահայտյալ, և հակառակը»¹⁸: Նշելի է, որ շարահյուսության այլ դասագրքերում բացահայտչի մասնական կամ մասնավորող պարագայական տեսակները որպես այդպիսիք չեն առանձնացվում: Որոշ դասագրքերում էլ նաև բուն բացահայտիչը որպես նախադասության առանձին և ինքնուրույն անդամ չի ընդունվում կամ ընդունվում է վերապահությամբ¹⁹: Այսպիսի մոտեցման համար, անշուշտ, հիմքեր կան, և դրանք, մեր կարծիքով, ավելի լուրջ ուշադրության են արժանի: Այս առիթով նպատակահարմար ենք համարում

¹⁷ Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974, էջ 557-558:

¹⁸ Ս. Աբրահամյան, Հայոց լեզու. Շարահյուսություն. Բուհական ձեռնարկ, Ե., 2004, էջ 35: Այնուամենայնիվ, հեղինակը հետագա շարադրանքում ընդունում է, որ «գոյություն ունի նաև նախադաս բուն բացահայտիչ» (էջ 37) («Աշխատանք և հայ ժողովուրդ՝ ահա իմ դավանանքը» և այլն):

¹⁹ Տե՛ս, օրինակ, Պ. Պողոսյան, Հայոց լեզու, Ե., 1976, Ս. Գյուլբուղայան, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1988:

անդրադառնալ Ա. Խաչատրյանի՝ այս խնդրին վերաբերող հոդվածի հիմնական մի քանի դրույթներին: Այս հոդվածի հեղինակի համոզումն այն է, որ հայերենում բացահայտչի՝ որպես նախադասության ինքնուրույն անդամի առանձնացման համար քերականների բերած փաստարկները խոցելի են: Նախ, հիմնավոր չէ բացահայտչի՝ գոյականական անդամի լրացում լինելու փաստարկը: Բերվում են տարբեր խոսքի մասերով, ամբողջական կապակցություններով, նույնիսկ նախադասություններով արտահայտված՝ բացահայտիչ և բացահայտյալ համարվող միավորների օրինակներ (*բազմամյա՝ մոտ հարյուր տարի տևող (պատերազմ), վերջին՝ ամենանվիրական (ցանկություն), ձեռքերն առաջ է պարզում՝ աղերսում է* և այլն): Հեղինակն անհամոզիչ է համարում բացահայտչի սահմանումը՝ որպես լրացյալի ով կամ ինչ լինելը ցույց տվող լրացումի. այդպիսի բնութագրումը կարող է վերաբերել նաև գոյական որոշչին, բաղադրյալ (անվանական) ստորոգյալին և այլն: Այնուհետև, ըստ հեղինակի, խախտու են նաև բացահայտչի և բացահայտյալի միջև ստորադասական հարաբերության առկայության և դրանց՝ համաձայնության եղանակով կապակցված լինելու մասին փաստարկները: Իրոք, դժվար է որևէ կերպ հիմնավորել բացահայտչի և բացահայտյալի կապը որպես լրացման և լրացյալի հարաբերություն: Դրանց միջև առկա քերականական առնչությունը հեղինակը համարում է համադասությունը (լայն առումով)²⁰.

²⁰ Այդ հարաբերությունը, ինչպես նշել ենք, առավել համարժեք արտա-

ստորադասական կայն այստեղ հնարավոր չէ այն պատճառով, որ դրանցից որևէ մեկի բացթողումը նախադասության կառուցվածքը չի խաթարում (օր. *Սարգիսը՝ ընկերս եկավ* և *Ընկերս եկավ կամ Սարգիսը եկավ*), մի բան, որ անխուսափելի է լրացյալ անդամը բաց թողնելու դեպքում (օր. *Իմ ընկերը եկավ* և *Իմ եկավ*): Քերականական կախման բացակայության նշան է համարվում նաև բացահայտչի միշտ տրոհված լինելու, այսինքն՝ արտաբերական ինքնուրույնություն ունենալու հանգամանքը: «Հենց միայն այն փաստը,- գրում է Ա. Խաչատրյանը,-որ բացահայտիչը չունի իրեն հատուկ հարց և միշտ պատասխանում է իր բացահայտյալի հարցին, բավական է, որպեսզի այն մերժվի որպես նախադասության առանձին անդամ.....»²¹: Բացահայտիչ-բացահայտյալ միավորները նախադասության համազոր անդամներից տարբերվում են նրանով, որ բովանդակության պլանում կապվում են միևնույն նշանակելիի հետ: Ի վերջո, դրանք հոդվածում սահմանվում են հետևյալ կերպ. «**Բացահայտիչ և բացահայտյալ կոչվում են լեզվական տարբեր նշանակումներ և արտաբերական ինքնուրույնություն ունեցող այնպիսի համադաս գուգորդական միավորներ, որոնք խոսքի մեջ հանդես են գալիս միևնույն նշանակելին արտահայտելու համար**»²²: Ինչ վերաբերում է այդ միավորների հոլովական և դիմային կար-

հայտում է **նույնադասություն** տերմինը:

²¹ Ա. Խաչատրյան, Բացահայտչի գնահատման շուրջը, Բանբեր Երևանի համալսարանի, 1979, հ. 1, էջ 129:

²² Նույն տեղում, էջ 130:

գերի համընկմանը, ապա դա ոչ թե համաձայնության եղանակով կապակցվելու, այլ միննույն գերադասից քերականական կախվածության, այսինքն դրանից խնդրատության եղանակով կառավարվելու նշան է:

Գոյական անդամի առանձին բացահայտիչ անդամ ընդունելու հիմքերը, ինչպես երևաց, բավականաչափ խախուտ են: Ավանդական շարահյուսագիտությունը ըստ էության լռելյայն ընդունում է այս իրողությունը՝ գոյականական բառակապակցության կազմից բացառելով բացահայտիչ լրացումը: Այնուամենայնիվ, պարզ նախադասության շարահյուսությանը նվիրված գրեթե բոլոր աշխատություններում շարահյուսական այս միավորը ներկայացվում է գոյականական լրացումների շարքում: Ռ. Իշխանյանն այս առիթով գրում է. «Լեզվաբանների մի մասն այն կարծիքին է, որ սովորական բացահայտիչը լրացում չէ և նախադասության առանձին անդամ էլ չէ, այլ բացահայտյալի հետ լինում է նախադասության մեկ անդամ: Այս պատկերացումը որևէ ճշտում չի մտցնում բացահայտիչի ըմբռնման հարցում»²³: Համաձայն չենք. այդ պատկերացումը հենց բացահայտչի ըմբռնման ճշտմանն է ծառայում: Միաժամանակ, սակայն, ընդունելի ենք համարում արգո լեզվաբանի հետագա դիտարկումը. «Այսպիսով, բացահայտիչի էությունն ըմբռնելու համար էլ կարևոր է շարահյուսական վերլուծությունը մինչև վերջ հասցնելը, իսկ թե բացահայտիչն ու բացահայտյալը միասին

²³ Ռ. Իշխանյան, Արդի հայերենի շարահյուսություն, Ե., 1986, էջ 167:

նախադասության մեկ անդամ կհամարվեն, թե յուրաքանչ-յուրը առանձին անդամ, պայմանավորվելու հարց է»²⁴: Խընդիրն, ըստ էության, հանգում է ոչ այնքան շարահյուսական իրողության ըմբռնմանը (այս հարցում, կարծում ենք, վերոնշյալ հողվածի փաստարկները համոզիչ են), որքան շարահյուսական վերլուծության ընթացքում բացահայտչի՝ որպես նախադասության կազմում հանդես եկող միավորի տերմինային համապատասխան «հանդերձավորմանը»: Ա. Խաչատրյանն առաջարկում է բացահայտիչն ու բացահայտյալը, որպես յուրատեսակ (միննույն դենոտատն արտահայտող) բազմակի անդամներ, կոչել «բացահայտական բազմակի անդամներ» (բացահայտական ենթականեր, բացահայտական խնդիրներ, որոշիչներ և այլն): Թերևս նույն նպատակով կարելի է գործածել «նույնադաս անդամներ» կամ այլ՝ ավելի հարմար անվանումներ:

Այսպիսով, սույն հողվածում մենք փորձեցինք ներկայացնել արդի հայերենի նախադասության կառուցվածքային մի կարևոր բաղադրատարրի՝ գոյականական բառակապակցության, մասնավորապես դրա լրացական անդամների բնույթին, կազմին ու կապակցությանն առնչվող խնդիրների վերաբերյալ մի քանի նկատառումներ, որոնք, կարծում ենք, կարելի է հաշվի առնել տեսական և գործնական վերլուծություններում:

²⁴ Նույն տեղում, էջ 168:

ԲԱՌԱՊԱՏՃԵՆՈՒՄՆԵՐՆ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՊԱՇԱՐՈՒՄ

Բառապաշարը, ինչպես հայտնի է, լեզվի կառուցվածքի ամենից հարափոփոխ բաղադրատարրն է. այն անմիջաբար արձագանքում է արտալեզվական աշխարհի, մասնավորապես հասարակական կյանքի տարաբնույթ գործընթացներին: «Բառապաշարի զարգացումը ամբողջությունն է լեզվի բառային կազմում տեղի ունեցող այն բոլոր փոփոխությունների, որոնք ուղղված են բառային կազմի մակարդակի արդիականացմանը, նրա համապատասխանեցմանը մի կողմից հասարակական կեցության ու գիտակցության առավել զարգացած աստիճանին, մյուս կողմից՝ լեզվի տվյալ փուլի կառուցվածքին ու համակարգին»¹, - գրել է Է. Աղայանը: Նա նշել է նաև, որ զարգացման այս ընդհանուր գործընթացը իրացվում է բառապաշարի հարստացման, բառապաշարի իմաստաբանական զարգացման և բառապաշարի կատարելագործման ուղիներով: Բառապաշարի զարգացումը, պարզասաձ, հանգում է դրա համալրմանը նոր բառերով, ինչը, բնականաբար, նոր հասկացություններ նշանակելու անհրաժեշտությամբ է թելադրված: Եվ քանի որ «հայերենի բառաշինական արվեստը շատ կողմերով թարգմանական արվեստ է»², ուստի նոր հասկացություններ նշանակող բառերի կերտումն ըստ էության որևէ հասկացություն արտահայտող օ-

¹ Է. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984, էջ 167:

² Ռ. Բշխանյան, Ակնարկ հայերենի տերմինաշինության, Ե., 1981, էջ 111:

տար բառի առավել համարժեք (հաջողված) հայերեն թարգմանությունն է, իսկ հաջողվածության չափանիշն էլ տվյալ փուլում լեզվի կանոնին ու կիրարկմանը ներդաշնակելն է ու դրանում ամրանալու հեռանկարը: Հարկ ենք համարում նշել, որ ինչպես իր զարգացման ողջ ընթացքում, արդի շրջանում նույնպես հայոց լեզուն արժանավորապես կատարում է համաշխարհային գիտատեխնիկական առաջընթացին համարժեք արձագանքելու իր առաքելությունը՝ ամենից առաջ իր բառաստեղծական բացառիկ ներուժի, ապա և լեզվաշինության ու լեզվաքաղաքականության հարցերով զբաղվող հաստատությունների ու անձանց նպատակադիր ջանքերի շնորհիվ: Օտարալեզու տերմինների ու բառերի հայերեն համարժեքներն ստեղծելու գործընթացում հայոց լեզուն միշտ էլ օգտագործել է իր հարուստ զինանոցի բոլոր գործիքները՝ բառաբարդում, ածանցում, վերաիմաստավորում և այլն, հաճախ դիմել է բարբառների, գրաբարի, միջին հայերենի, արևմտահայերենի օգնությանը, ի վերջո հայերենը երբեք չի խուսափել նաև փոխառություններ գործածելուց, թեև մասնագետները շարունակել են դրանք ևս հաջողված (լեզվական կանոնի համար ընդունելի) հայերեն տարբերակներով փոխարինելուն միտված ջանքերը: Մասնավորելով մեր խոսքն արդի շրջանի բառաստեղծման միտումների վրա՝ ուզում ենք հատուկ անդրադարձնալ փոխառություններին սերտորեն առնչվող բառակազմության մի տեսակին՝ բառապատճենմանը: «Եթե փոխառությունների դեպքում ուղղա-

կիորեն վերցվում է տվյալ լեզվի (փոխաստու լեզվի) պատ-
րաստի բառը, ապա պատճենումների ժամանակ վերցվում
են բառի արտահայտած հասկացությունն ու ներքին ձևը, այլ
կերպ ասած՝ պատճենման դեպքում օտար բառը պարզապես
թարգմանվում է փոխաստու լեզվի բառերով կամ բաղադրու-
թյունների բաղադրիչներով...: Պատճենումները, առանձնա-
պես բառերի պատճենումները (բառապատճենումները) մեծ
դեր են խաղում լեզվի բառապաշարի, մանավանդ գիտութ-
յան ու տեխնիկայի տարբեր բնագավառների տերմինահա-
մակարգերի համալրման գործում³: Արդի շրջանի նորակազ-
մությունների ոլորտում ևս խիստ արտադրողական այս մի-
ջոցը՝ բառապատճենումը, սակայն, նոր իրողություն չէ. այն
ուղեկցել է հայոց գրավոր լեզվին իր սկզբնավորման շրջա-
նից: Պատճենման միջոցով էր, որ հունաբան դպրոցի երախ-
տավորներն ստեղծեցին հայերեն նախածանցների մի ողջ
համակարգ՝ դյուրացնելու համար հունարեն բառերի հա-
մարժեք հայերեն թարգմանությունները (ենթ-, փոխ-, ստոր-,
ընդ-, ներ- և այլն): Արհեստական այդ միավորները՝ կերտ-
ված հայերենի համապատասխան արմատներից, հետագա-
յում սերտաճեցին մեր լեզվի համակարգին և անփոխարինե-
լի միջոցներ են հատկապես օտար նախածանցավոր կազ-
մությունները հայերեն թարգմանելիս (օր. ենթատեսակ,

³ Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 176-177:

գերհզոր, ներդնել, արտահանել, փոխնախագահ և այլն⁴: Խորհրդային շրջանում ռուսերենից պատճենված շատ ու շատ բառեր այսօրվա մեր բառապաշարի կողմից յուրացված սովորական կազմություններ են՝ ինքնաթափ, ինքնաթիռ, օդանավ, շոգեքարշ, կիսահաղորդիչ, հակագագ, պահեստամաս, ընդհատակ, տուն-թանգարան, ցուցահանդես-վաճառք և այլն: Մեր օրերում ստեղծվող նորաբանությունների բառարաններում արձանագրված նորակազմ տերմինների ու բառերի զգալի մասը նույնպես պատճենման արդյունք է, ինչպես՝ գերաստղ, գերարժեգրկում, հեռուստախանութ, համացանց, տեսահարցազրույց, տեսահոլովակ, ինքնիրացում, դիմագիր (facebook) և այլն: Պատճենման մի տեսակն էլ կիսապատճենումն է կամ այսպես կոչված մասնակի փոխառությունը. այս դեպքում հայերեն թարգմանվում է փոխառյալ բառի բաղադրիչներից մեկը: Ընդհանրապես պատճենումն ու կիսապատճենումը կարող են նաև ժամանակի ընթացքում փոփոխություն կրել կամ էլ միջակա օղակ լինել սեփական բաղադրիչներով նոր բառ ստեղծելու ճանապարհին (фигурное катание- ձևավոր չմշկասահք – գեղասահք, военный контингент - ռազմական կոնտինգենտ – ռազմակազմ, автореферат - ինքնառեֆերատ – սեղմագիր և այլն): Օտար տերմինային տարրերի հայերենացման պատմական ընթացքի դի-

⁴ Այս մասին տե՛ս նաև **Ն. Պառնասյան**, Պատճենումը և նրա դերը հայոց լեզվի զարգացման գործընթացում, «Տերմինաբանության և խոսքի մշակույթի հարցեր», 3, Ե., 1988, էջ 20-25:

տարկումը կարող է հետաքրքիր օրինաչափություններ ի հայտ բերել և թարգմանական որոշ ընդհանուր միտումներ արձանագրել:

Ա. Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ միևնույն օտար բաղադրիչը տարբեր բաղադրությունների կազմում կարող է հայերեն տարբեր համարժեքներով թարգմանվել, ինչը հայերենի բառակազմական ճկունության մի լրացուցիչ վկայություն է: Բերենք մի քանի օրինակներ: *Հունարեն դիս-* բաղադրիչը հայերեն թարգմանվում է 1. *ան-* նախածանցով (*дисгармония* - աններդաշնակություն), 2. *զուրկ-* արմատով (*дисбулия* - կամազրկություն), 3. *դժ-* նախածանցով (*дисстрипния* - դժքնություն), լատիներենից փոխառյալ նույնանուն *դիս-* ածանցը՝ 1. *ապ(ա)-* նախածանցով (*дисквалификация* - ապաքակում), 2. *-բեկ-* արմատով (*дискредитация* - վարկաբեկում), 3. *տար-* նախածանցով (*дисперсия* - տարաբաժանում), կամ լատիներեն *ուն(ի)-* բաղադրիչը՝ հայերեն *մի-* (*унифлярный* - միալար(տեխն.)), *միաս(ի)ն-* (*унификация* - միասնականացում), *համ(ա)-* (*униформа* - համազգեստ) և այլն⁵: Այս կարգի օտար տերմինատարրերի մի մասը, որ արդյունավետ ու կենսունակ է նաև արդի շրջանում, նույնպես հայերեն տարբեր համարժեքներով է արտահայտվում՝ բաղադրության ներքին ձևով պայմանավորված: Այսպես, *ալլոտ* (*հուն.*) բաղադրիչը հայերեն ավանդված է կա՛մ

⁵ Տե՛ս Ջ. Ա. Հացագործյան, Ս. Ա. Ասլանյան, Միջազգային տերմինային տարրերի ռուս – հայերեն բառարան, Ե, 1989:

լրիվ պատճենմամբ՝ **ինքն(ա)**- բաղադրիչով (ինքնաձիգ, ինքնագիր, ինքնանկար, ինքնակենսագրություն) (սակավադեպ՝ ինքնուրույն կազմությամբ՝ *автородепарат* – սեղմագիր), կա՛մ կիսապատճենումով: Այս երկրորդ դեպքում հունարեն բաղադրիչը հայերեն ինքնաշարժ (ավտոմոբիլ) նշանակությամբ է մտնում բազմաթիվ բաղադրությունների մեջ, և քանի որ այն արդեն իսկ բաղադրյալ է, նոր բարդությունների մեջ նախապատվությունը տրվում է օտար արմատին՝ ավտոմեքենա, ավտովարորդ, ավտոդոդ, ավտոկայան, ավտոպահեստամաս և այլն: Նորաբանությունների մերօրյա բառարաններում արձանագրված (նախկին բառարաններում բացակայող)՝ **ավտո** բաղադրիչով բառերի մեծ քանակը վկայում է, որ կիսապատճենման այս կաղապարը այսօր էլ գործուն է. Մ. Էլոյանի նորաբանությունների բառարանում և ԳԱԱ լեզվի ինստիտուտի հրատարակած «Նոր բառերի» չորս պրակներում այդ բառերի քանակն անցնում է յոթ տասնյակից՝ ավտոաշխարհ, ավտոհեն, ավտոգոդություն, ավտոհյուրատուն, ավտոցուցահանդես, ավտոերթ, ավտոարշավարան, ավտոապահովագրող, ավտոլրտես, ավտոներկրող, ավտոխցանում, ավտոփորձագետ, ավտոսանդուղք , ավտոներկ, ավտովարկ և այլն: Նույն ձևով **ագրո**(հուն.)- բաղադրիչը հայերեն կազմություններում ավանդված է երկակի թարգմանությամբ՝ 1. **գյուղ** (*агроном* - գյուղատնտես) և 2. **հող** (*аграрный* - հողային): Արդի նորաբանությունների մեջ **ագրո**-ն առայժմ նույնությամբ հանդես է գալիս որպես կիսապատճենումների

բաղադրիչ՝ ագրոգյուղացիական, ագրոգիտասփյուռ, ագրոկենսաբազմազանություն, ագրոհատված (Ս.Էլոյան), ագրոշուկա, ագրոլրատու (լրագիր է), ագրովերամշակող («Նոր բառեր») և այլն:

Բ. Արդի շրջանի նորակազմությունների մեջ հանդիպող օտար բաղադրիչների մի մասը՝ ավանդված նախորդ շրջանից, այսօր հանդես է գալիս հիմնականում կիսապատճենումների (նաև փոխառությունների) կազմում: Դրանցից են **կինո-** («Նոր բառերում»՝ մոտ 80 բառ՝ *կինոայցեքարտ, կինոանուն, կինոգովազդ, կինոոլորտ, կինոդրոշմ, կինոդեդենսպատում, կինոկտավ, կինոպուրակ, կինոթանգարան, կինոտարր, կինոտարբերակ* և այլն), **ֆոտո-** (մոտ 40 բառ՝ *ֆոտոարվեստ, ֆոտոգովազդ, ֆոտոլուր, ֆոտոնախագիծ, ֆոտոտարեզրություն, ֆոտոտարր, ֆոտոդիտակ, ֆոտոպատմություն, ֆոտոպահոց, ֆոտոամրագրում, ֆոտոհաշվետվություն, ֆոտոուսուցում, ֆոտոզեղարվեստ* և այլն), **ռադիո-** (մոտ 20 բառ՝ *ռադիոժամ, ռադիոծածկույթ, ռադիոփորձարկում, ռադիոհամակարգ, ռադիոլրագրող, ռադիոշարք, ռադիոգովազդ, ռադիոմրցույթ, ռադիոհեռուստալեզու* և այլն), **էթնո-** (15 բառ՝ *էթնոհիշողություն, էթնոհոգեբանական, էթնոմշակութային, էթնոերաժշտագետ, էթնոմաքրում, էթնոքաղաքական, էթնոավազան, էթնոպարագետ* և այլն), **էկո-** (20 բառ՝ *էկոգյուղ, էկոբանտ, էկոերթուղի, էկոզբոսաշրջություն, էկոլուր, էկոկրթություն, էկոաշխարհ, էկոգրիչ, էկոշենք, էկոտնակ, էկոակումբ* և այլն), **ավիա-** (20 բառ՝ *ավիացուցահան-*

դես, ավիափոխադրող, ավիագործակալություն, ավիալից-
քավորիչ, ավիամիջադեպ, ավիաշուկա, ավիապատահար և
այլն), **էներգ(ա)-** (էներգահարց, էներգաարդյունավետու-
թյուն, էներգահամագործակցություն և այլն), **ֆիլմ-**(ֆիլմա-
գրություն, ֆիլմարտադրող, ֆիլմարդյունաբերություն, ֆիլ-
մաշխարհ, ֆիլմարվեստ և այլն) և այլն:

Գ. Կիսապատճենումների մի զգալի մասն էլ կազմված է նորագույն օտար բաղադրիչներով, որոնք առնչվում են հիմնականում տեխնոլոգիական նոր իրողությունների հետ և դեռևս չունեն հայերեն համարժեքներ: Սրանցից էլ կարելի է նշել՝ **կիբեո-** (կիբեոահաբեկիչ, կիբեոգրոհ, կիբեոխաղ, կիբեոհանցագործություն, կիբեոպատերազմ, կիբեոպաշտպանվածություն, կիբեոլրտեսություն, կիբեոլորտ, կիբեոհարթակ, կիբեոտարածք, կիբեոտիրույթ, կիբեոսադրանք, կիբեոստիկանություն, կիբեոանվտանգություն և այլն), **մեդիա-** (մեդիադաշտ, մեդիալորտ, մեդիամիջավայր, մեդիապատկեր, մեդիափորձագետ, մեդիաաշխարհ, մեդիահարթակ, մեդիագործընթաց, մեդիագրագիտություն, մեդիասպառող և այլն), **կրիպտո-** (կրիպտոարժույթ, կրիպտոբորսա, կրիպտոխանութ, կրիպտոներդրող, կրիպտոշուկա և այլն), **վիքի-** (վիքիակումբ, վիքիբառարան, վիքիդարան) և այլն: Արդեն նշվել է, որ լեզվական համակարգի ներսում գործող ինքնամաքրման շարունակական գործընթացի շնորհիվ և նորմավորողների միջնորդությամբ բառապաշարը աստիճանաբար զտվում է օտարաբանություններից, իսկ փոխառություն-

ներն ու կիսապատճենումների ոչ հայերեն բաղադրիչները ժամանակի ընթացքում կարող են տեղի տալ հայերեն առավել հաջողված տարբերակների առջև: Այս միտումի հաստատում կարող են լինել նախկին կիսապատճենումների՝ այսօր արդեն մաքուր պատճենումներով փոխարինվելու օրինակները: **Վիդեո-, նարկո-, բիո-** բաղադրիչները, օրինակ, որ հանդիպում էին կիսապատճենումներում (*վիդեոբոց, նարկոմիջնորդ, բիոխթանիչ* և այլն), այսօր արդեն հիմնականում փոխարինվել են հայերեն **տեսա-, թմրա-, կենսա-** բաղադրիչներով՝ *տեսահարցազրույց, տեսագովազդ, տեսադաս, տեսադիմում, տեսաթարգմանություն, տեսագանգ, տեսաբացիկ, տեսականուրջ, տեսաուղերձ, տեսահավելված, թմրափաթեթ, թմրաշրջանառություն, թմրապատերազմ, թմրասրճարան, թմրագլանակ, թմրասուրհանդակ, կենսադաշտ, կենսահամակարգ, կենսահավելուրդ, կենսավառարան, կենսապատճեն* (կլոն), *կենսաչափական* և այլն: Ինչպես կարելի է նկատել, կիսապատճենումների կաղապարում օտար բաղադրիչը գերազանցապես նախադաս դիրք է գրավում, հետադաս կիրառությունները սակավադեպ են՝ *բազմավեկտոր, բազմավիտամին, թերֆունկցիա, ծիծաղաթերապիա, թմրադիլեր, թմրակարտել, կիսաեսե, հակաթրենդ* այլն: Այսպիսով, նորագույն բառարանների նյութի դիտարկումը ցույց է տալիս, որ բառապատճենումն այսօր էլ մնում է հայերենի բառապաշարի համալրման արդյունավետ միջոցներից մեկը:

ՀԱՅԵՐԵՆԻ ՏԵՐՄԻՆԱՅԻՆ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Որևէ լեզվի հարստության, նրա զարգացման աստիճանի մասին խոսելիս առաջին հերթին թերևս նկատի են առնում այդ լեզվի բառապաշարը, և այդ չափանիշով էլ գնահատվում է լեզվի՝ հանրային կյանքի զարգացման տվյալ փուլի պահանջներին համապատասխանելու, այն համարժեքորեն արտացոլելու կարողությունն ու ներուժը: Բառապաշարի հարստացման ուղիները հանրահայտ են՝ լեզվի բառաստեղծական ներքին կարողություններ և արտաքին աղբյուր՝ փոխառություններ այլ լեզուներից: Հանրահայտ են նաև հայոց լեզվի բառաստեղծական հնարավորությունները, որոնցով շարունակաբար համալրվում է նրա բառապաշարը իր զարգացման բոլոր շրջաններում: Հասարակական կյանքի աննախադեպ առաջընթացը առավել ևս մեր օրերում նոր պահանջներ է առաջադրում, և հենց սկզբից պետք է արձանագրենք, որ մեր լեզուն արժանավորապես հաղթահարում է այդ մարտահրավերները՝ առաջին հերթին բառակազմական իր հարուստ հնարավորությունների շնորհիվ, հաճախ նաև, ըստ պահանջել հար կին, դիմելով օտար փոխառությունների: Երկու դեպքում էլ գործ ունենք լեզվի համակարգի ներսում տեղի ունեցող բնական գործընթացների հետ, որոնք, պետք է ասել, ինքնակարգավորում է նույն այդ համակարգը: Այս արձանագրումը, սակայն, բնավ նպատակ չունի նսե-

մացնելու լեզվի, մասնավորապես նրա բառապաշարի զարգացման հարցում մասնագիտական ձեռնհաս միջամտությունների և ուղղորդումների, ինչպես նաև լեզվագործածության և լեզվաքաղաքականության կարգավորումն իրականացնող հաստատությունների գործունեության կարևորությունը: Այս առումով հարկ է նշել, որ մեր լեզվի բառապաշարի, հատկապես տերմինաբանության մշակման ու զարգացման հարցերը երբեք չեն անտեսվել համապատասխան ոլորտների մասնագետ լեզվաբանների և լեզվաքաղաքականություն իրականացնող պետական և հասարակական մարմինների կողմից: Կարևոր է նկատի առնել նաև, որ տերմինային բառապաշարի ստեղծման ու զարգացման խնդիրները գիտության տարբեր բնագավառների ներկայացուցիչների մտահոգության առարկան են նաև. լեզվաբանության խնդիրը այդ գործընթացի ընդհանուր սկզբունքների, տերմինաբանության ոլորտում վարվող լեզվաքաղաքականության մշակումն է: Այս հարցում իր անուրանալի դերն է կատարել շուրջ ութ տասնամյակ առաջ (1933 թ.) ստեղծված՝ ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր տերմինաբանական կոմիտեն, որը որոշ ընդհատումներով և տարբեր անվանումներով (ՀՀ կառավարությանն առընթեր լեզվի պետական տեսչություն, ՀՀ վարչապետին կից հայերենի բարձրագույն խորհուրդ, Լեզվի կոմիտե) գործում է մինչև օրս: Եթե հաշվի չառնենք մասնավոր կարգի մեծ ու փոքր մի շարք խնդիրներ, պետք է արձանագրենք, որ անցյալ դարի կեսերից սկսած՝

հայերենի տերմինաբանության, մասնավորապես տերմինաշինության ոլորտում պարբերաբար արծարծվող ամենաառանցքային հարցը ներկայանում է որպես այսպես կոչված «ծայրահեղ մաքրամոլության» և «օտարամոլության» հակամարտություն: Գլխավորապես այս հակադրության առիթով ծավալված «ամենաներկայացուցչական» քննարկումը տեղի ունեցավ 1969-71 թվականներին «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսի էջերում: Ռ. Բշխանյանի «Հայերենի տերմինաշինության հարցեր» («Լրաբեր», 1969, հ. 7) հոդվածով և հակադիր ուղղությունը ներկայացնող Ա. Ոսկանյանի՝ խմբագրությանն ուղղված նամակով («Լրաբեր», 1969, հ. 9) սկիզբ առած բանավեճին մասնակցեցին մեր նշանավոր լեզվաբանները՝ Է. Աղայան, Ս. Աբրահամյան, Ա. Աբրահամյան, Հ. Բարսեղյան: Բանավեճն ամփոփող հոդվածում Գ. Ջահուկյանը փաստորեն տալիս է տերմինակերտման ոլորտում գոյություն ունեցող ծայրահեղ մոտեցումների համադրման տեսական հիմնավորումը. «Լեզվի համակարգը, որպես տվյալ ազգի հաղորդակցման ընդհանուր միջոց, ձգտում է համազգայնության: Տերմինային համակարգը, որպես տվյալ բնագավառի գիտելիքների ու հասկացությունների արտահայտություն, ձգտում է համամարդկայնության: Այս դեպքում նախ՝ մեծ է փոխառությունների թիվը, երկրորդ՝ ներքին բառակերտումը մեծ մասամբ հենվում է արտաքին կաղապարների (մոդելների) վրա, այսինքն՝ պատճենումը դառնում է բառակերտման հիմնական ուղին՝ հանդես

գալով այլևայլ միջոցներով՝ ըստ պատճենման բնօրինակների»¹: Շուրջ կեսդարյա վաղեմության սույն բանավիճային քննարկումների դրույթներից շատերն այսօր նույնպես արդիական են, սակայն պետք է նկատի առնել նաև, որ անցած տասնամյակների ընթացքում հայերենի ընդհանուր և տերմինային բառապաշարների զարգացման միտումները գնահատման այլ ելակետ են ենթադրում: Հանրային կյանքում տեղի ունեցած քաղաքական տեղաշարժերով պայմանավորված՝ լեզվակիրառության կարգավորման ոլորտը ևս ձեռքագատվել է օտար պարտադրանքներից, դրանով իսկ «ճայրահեղ մաքրամոլության» և «անհարկի հանդուրժողականության» հակամարտությունն ըստ էության կորցրել է երբեմնի հրատապությունը: Լեզվի համակարգը բնականորեն ձգտում է նոր հասկացություններն ու գաղափարներն արտահայտել (իմա՝ թարգմանել) իրեն հարագատ՝ սեփական միջոցներով, և հենց սրան էլ առաջին հերթին միտված են լինում կանոնարկող մասնագետների ու հաստատությունների ջանքերը: Քանի որ լեզվի համակարգին ներհատուկ է ինքնամաքրման հատկությունը, այս շրջանում լեզուն ինքն ընտրում է հայակազմ բառը կամ տերմինը (եթե վերջինս հաջողված է): Փոխառյալ բառերի պատճառաբանված գոյությունը լեզվական ինքնությունը վտանգելու գործառույթ չունի. դրանք կա՛մ ժամանակավոր են, կա՛մ ներդաշնակում են լեզվական հա-

¹ **Գ. Բ. Ջահուկյան**, Հայոց լեզվի տերմինաբանության հարցերի քննարկում// «Լրաբեր հասարակական գիտությունների», 1971, № 9, էջ 95:

մակարգին՝ ամրակայվելով լեզվական նորմի մեջ (ընդամին պահպանելով գտնված բնիկ տարբերակով փոխարինվելու հնարավորությունը): Բառակազմության միջոցների հարստության և ընդհանրապես բառաստեղծական ճկունության շնորհիվ հայերենը հնարավորություն ունի ըստ հնարավորին համարժեքորեն արտահայտելու գիտության, տեխնիկայի, կենցաղի և հանրային կյանքի այլ ոլորտներին վերաբերող այնպիսի հասկացություններ ու գաղափարներ, որոնց անվանումներն այսպես կոչված «միջազգայինի» համարում ունեն և շատ լեզուներում են գործածվում (օրինակ՝ կորոնավիրուս-թագավարակ, թագաժահր, էպիդեմիա – համաճարակ, էնդեմիա – տեղաճարակ, պանդեմիա – համավարակ, դիագնոստիկա – ախտորոշում (բժշկ.), արատորոշում (տեխն.), screenshot – էկրանապատկեր, լինք – հղում և այլն): Սակայն մեր լեզվի հնարավորություններն այս բնագավառում ըստ հնարավորին արդյունավետ գործադրելուն և ըստ այսմ գիտատեխնիկական սրընթաց առաջընթացի պահանջները հաղթահարելուն ուղղված մասնագիտական ջանքերը միշտ են շարունակվել և այժմ էլ մեր լեզվաբանական գիտության մի կարևոր հատվածն են կազմում: Այսպես, ԳԱԱ լեզվի ինստիտուտի կազմում ժամանակին գործող տերմինաբանության, իսկ այսօր նաև ժամանակակից հայոց լեզվի, արևմտահայերենի, բառարանագրության բաժինները հատկապես ուշադրության կենտրոնում են պահում բառապաշարի և տերմինաբանության ուսումնասիրման ու մշակման հարցերը.

հրատարակվել են բազմաթիվ ուսումնասիրություններ, ժողովածուներ, գիտաժողովների նյութեր և այլն: Բուհերի լեզվական ամբիոնները ևս բավականաչափ ակտիվ են այս հարցում. ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնը, օրինակ, վերջին տարիներին նշված բնագավառի խնդիրներին վերաբերող մի շարք հրատարակություններ է ասպարեզ հանել (օր.՝ «Հայոց լեզվի ուղեցույց» (2017), «Արդի հայերենի բառապաշարը» (2020), «Արդի հայերենի բառապաշարի զարգացման և կանոնարկման հիմնախնդիրներ» (2020) և այլն), որոնք, պետք է ասել, նաև գործնական արժեք ունեն և բավական պահանջված են լեզվակիրառության տարբեր ոլորտներում: «Ուղեցույցը», օրինակ, կիրարկության նախընտրելի տարբերակներ է առաջարկում արդի արևելահայերենի կառուցվածքային բոլոր տարրերի (հնչյունաբանություն, բառապաշար, քերականություն) համար: Բառապաշարի, հատկապես նորակերտ տերմինների կիրառության հարցում, կարծում ենք, հեղինակները փորձել են որոշակիորեն համակշռված մոտեցում ցուցաբերել. առաջադիր նպատակը, անշուշտ, բոլոր դեպքերում հայակազմ տերմինների գործածությունը խթանելն է (օր.՝ նրբախորտիկ (փխ.՝ դելիկատես), ստեղծարար (փխ.՝ կրեատիվ) և այլն), սակայն որոշ դեպքերում էլ հայակազմությունների հետ զուգահեռ հանձնարարելի են համարվում նաև օտար տարբերակները (օր.՝ կոնցեպտ և հղացք, կարամել և հրուշակ և այլն), իսկ երբեմն էլ հենց վերջիններն են գերադասելի դիտվում (օր.՝ բիսկվիտ (փխ.՝

կրկնեփուկ), կարիես (փխ.՝ ոսկրափուտ) և այլն): Այս վերջին կարգի փոխառյալ միավորները նախընտրելի համարելը, անշուշտ, առարկության առիթ տալիս է, սակայն դրանց գոնե մի մասը, կարծում ենք, ժամանակի ընթացքում տեղի կտա գտնված ավելի հաջող համարժեքների առջև: Մանավանդ որ բառաստեղծման գործընթացը կանգ չի առնում: Օրինակ՝ կոլաժ օտար բառի դիմաց տարբեր համատեքստերում հանդիպել են կաչարվեստ, կաչանկար, սուրնձանկար, ծվենանկար տարբերակները. առայժմ կարծես առավելաբար օտար ձևն է գործածվում, մենթալիտետ օտար բառի փոխարեն Լեզվի պետական տեսչությունը հանձնարարում է հայերեն երկու տարբերակ՝ 1.մտածելակերպ և 2. խելք², սակայն լեզուն շարունակում է փնտրտուքը, և տարբեր աղբյուրներում հանդիպում են նույն տերմինի դիմաց մտակառույց, մտակառուցվածք, մտակերտվածք, մտակեցվածք, մտահայեցակարգ, հոգեկերտվածք, հոգենկարագիր, հոգեկառույց, կենսակերտվածք, կենսակարգ, կենսակառուցվածք տարբերակները: Ժամանակի խնդիրն է դրանցից մեկին նախապատվություն տալը կամ էլ նոր՝ ավելի հաջողված տարբերակ ստեղծելը: Նման օրինակները բազմաթիվ են և վկայում են, որ տերմինակերտման գործընթացը լեզվի մեջ անընդհատական է: Այս ասպարեզում գնահատելի ջանքեր է գործադրում նաև Լեզվի կոմիտեն. լեզվակիրառողների, հատկապես

² Տե՛ս «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու», Ե., 2006, էջ 251:

ԶԼՄ-ների համար օգտակար են կոմիտեի հրապարակած «Հորդորակները»՝ օտար բառերի ու տերմինների փոխարեն առաջարկվող հայերեն համարժեքների ցանկերով, որոնցում սակավ չեն բառակերտման հաջողված օրինակները: Ինչպես հայտնի է, արևելահայ գրական լեզվի տերմինային բառապաշարի հարստացման միջոցներից մեկն էլ գրաբարի, բարբառների, արևմտահայերենի համապատասխան նյութը ըստ հարկի օգտագործելն է: Վաղուց գրական հայերենի բառապաշարի հարազատ տարրեր են գրաբարյան նախարար, պարետ, հաստոց, աղանդեր, վթար, արգանակ և այլն, բարբառային խաչմերուկ, ջրբաժան, դողերոցք և այլ բառեր: Արևմտահայերենի դերն արդի շրջանում առանձնահատուկ է: Հետխորհրդային շրջանում հայ իրականության մեջ տեղի ունեցած տեղաշարժերը էապես փոխեցին հայերենիք – սփյուռք առնչությունների որակը: Մի հանգամանք, որ մեր երկու գրական լեզուների փոխազդեցությունների և փոխհարստացման նոր ազդակների առիթ դարձավ: Արևմտահայերենի յուրահատուկ կարգավիճակը պարտադրում է խիստ վերապահ մոտեցում ցուցաբերել օտարամույծ բառերի ու տերմինների նկատմամբ, ինչն էլ իր հերթին խթանում է լեզվի բառաստեղծական նոր հնարավորությունների բացահայտումն ու գործադրումը: Այդ հնարավորությունները կարող են յուրովսանն նպաստել նաև արևելահայ տերմինային բառապաշարի հարստացմանը: Անշուշտ, տերմինային բառապաշարի հարստության և հարստացման հեռանկարի առու-

մով մեր երկու գրականների հնարավորությունները բաղդատելի չեն, սակայն արևմտահայերենի՝ փոխառությունների գործածումից ըստ կարելվույն խուսափելու ջանքերը կարող են դուռ բացել նաև արևելահայերենի առջև՝ տերմինային, նաև համագործածական բառապաշարը արևմտահայ հայկաբան կազմություններով համալրելու համար: Մանավանդ որ այս գործի կարևորության գիտակցումն առկա է նաև սփյուռքահայ մտավորականության շրջանում: Այս կապակցությամբ կարևոր ենք համարում հատուկ ընդգծել «Արևմտահայ աշխարհաբարի եզրաբանական խորհրդի» գործունեությունը, որը, մեր տպավորությամբ, արևելահայ գիտական շրջանակներում դեռևս պատշաճ ուշադրության ու գնահատանքի չի արժանացել, թեև խորհրդի ստեղծման նպատակների մեջ հիմնադիրները նկատի են ունեցել նաև «Արևմտահայ եւ արևելահայ փոփոխակներու փոխադարձ յարաբերութիւններ եւ անոնց զարգացման նպաստող հարցեր.... Եթէ հայ մամուլն ու մտաւորականը այդ առաջարկուած եզրերէն համեստ տոկոս միսկ իւրացնէ, ներկայ Ուղեցոյցը աւելիով կատարած կըլլայ իր առաքելութիւնը»³: «Խորհուրդը» հիմնադրվել է 1993-ին, ֆրանսիական Էքս ան Պրովանս քաղաքում, Ռոբեր Տեր-Մերկերյանի նախաձեռնությամբ: Առաջնային նպատակը, անշուշտ, այլալեզու միջավայրում մայրենիի գոյատևմանը սատարելն է. «Արտերկրի մեջ

³ «Արևմտահայ աշխարհաբարի եզրաբանական խորհուրդ, Ուղեցոյց», Ա, 1993, էջ 103:

հայախօսութեան նահանջը օրէ օր կը ստանայ մտահոգիչ համեմատութիւններ, նոյնիսկ հայախօս նկատուած գաղթօջախներու մէջ: Դպրոցներու մէջ հայերէնի մակարդակը, որպէս անկարելորդ նիւթ, տակաւ կը նուազի: Հայատառ մամուլը կապրի կենաց եւ մահու տագնապներ՝ յաճախ օտարացնելով իր լեզուն կամ նօսրացնելով իր յաճախականությունը»⁴: Տագնապահարույց այս «իրողություններով մտահոգ «Եզրաբանական խորհուրդը» 1993-ից սկսած հրատարակում է բառացանկեր՝ տարբեր իմաստային դաշտերի վերաբերող տերմինների և ընդհանուր գործածության բառերի. Պրակ Ա (1993) - «Կառք, ինքնաշարժ, տեղեկագիտութիւն», Բ (1995) - «Դրամատուն, սակարան, առետուր», Գ (1998) - «Իսկական նորաբանութիւններ եւ ընդհանուր նորաբանութիւններ», Դ (2002) - «Իրաւաբանութիւն եւ բժշկագիտութիւն»: Սրանցում ներկայացված նյութը, հատկապէս արևելահայերենում պակասող տերմինները մասնագիտական ընտրությամբ կարելի է շրջանառության մէջ դնել նաև արևելահայերենում: Նման ձեռնարկումի հաջողված օրինակ պետք է համարել ԳԱԱ լեզվի ինստիտուտի հրատարակած ժողովածուն՝ նվիրված արևմտահայերենի և արևելահայերենի բժշկական, քաղաքական, համակարգչային և լեզվաբանական տերմինների գուգադրական հետազոտմանը: Համակարգչային տերմինների բաժնում, օրինակ, հեղինակ Ս. Տիոյանը գուգադրաբար

⁴ «Արեւմտահայ աշխարհաբարի եզրաբանական խորհուրդ, Ուղեցոյց», Դ, 2002, էջ 7, 10:

ներկայացնում է արևելահայերենում գործածվող կամ նոր ստեղծվող և Արևմտահայ եզրաբանական խորհրդի առաջարկած տերմինները՝ հետագա գործածության համար հանձնարարելով արևմտահայ կամ արևելահայ տարբերակը (որը հեղինակն ավելի հաջողված է նկատում): Ահա մի երկու օրինակ. algorithm-ի համար արևելահայերենը կիրառում է այգորիթմ, մեթոդ, կանոն բառերը, իսկ արևմտահայերենը՝ հրամանաշար, որն էլ նախընտրելի է համարված, նույն կերպ հանձնարարելի են համարվում արևմտ. նշիչ (cursor - արևել.՝ կուրսոր, շարժագիծ), զրուցատուփ (dialog box - արևել.՝ երկխոսական վահան), տեղեկավարում (information processing- արևելահայերենը չկա)⁵ և այլն: Այսպիսով, որպես եզրահանգում կարելի է արձանագրել, որ արդի շրջանում հայերենի բառապաշարի, մասնավորապես տերմինաբանության և տերմինաշինության զարգացման ընդհանուր և առաջնային միտումը լեզվի ներքին հնարավորությունների ըստ հնարավորին ամբողջական գործադրումն է, որն իրականանում է մասնագետների և մտավորական հանրույթի ուղղորդված գործունեության շնորհիվ:

⁵Տե՛ս «Արևմտահայերենի և արևելահայերենի տերմինային համակարգերի զուգադրական քննություն», Ե., 2014, էջ 62-82:

ԳԻՏԱԿԱՆ ՈՃ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ: Ժամանակակից աշխարհում մարդկային գործունեության կարևորագույն բնագավառներից մեկը գիտությունն է: Գիտությունը հասարակական գիտակցության՝ մարդու կողմից իրեն շրջապատող աշխարհը ճանաչելու և բացատրելու ձևերից մեկն է, որը դրսևորվում է տեսական-վերացական մտածողության, տրամաբանական կատեգորիաների միջոցով:

Հանրային կյանքի այս կարևորագույն ոլորտի սպասարկմանն է ծառայում գրական լեզվի գործառական տարբերակներից մեկը՝ գիտական ոճը կամ գիտական խոսքը:

Որևէ լեզվի գիտական ոճի զարգացման աստիճանը պայմանավորված է այդ լեզուն կրող ժողովրդի գիտական մտածողության, նրա ստեղծած և յուրացրած գիտական ավանդույթի մակարդակով: Պարզ է, որ գրավոր ավանդույթ չունեցող լեզուն զուրկ է գիտական (և ոչ միայն) ոճից: Այս առումով հարկ է արձանագրել, որ հայոց լեզուն գիտական մշակման բազմադարյա մի պատկառելի շրջան է անցել և այսօր ի գործ է գիտության ամենաբազմապիսի ոլորտների արդիական նվաճումները համարժեքորեն արտացոլելու:

Ընդհանրապես գիտական խոսքը կոչված է իրագործելու գիտության առաքելությունը մարդու կյանքում. դա իրականության տարբեր ոլորտների մասին նոր գիտելիքի հաղորդումն է և դրա ճշմարտացիության ապացուցումը: Մրա-

նով էլ թելադրվում են գիտական ոճի լեզվական առանձնահատկությունները:

Գործառական ոճերի շարքում գիտական ոճը թերևս ամենից ավելի է առանձնանում տարբերակային ձևերի առատությամբ, քանի որ այդպիսին է իր արտացոլման առարկան: Գիտությունը նախ բաժանում են երեք խոշոր բնագավառների՝ բնական, հասարակական (հումանիտար) և տեխնիկական, սրանք էլ ունեն իրենց ոլորտները, ճյուղերը, ենթաճյուղերը*:

Բնական է, որ գիտության լեզուն նույնպես միատարր լինել չի կարող. լեզվական որակի ու կազմի առումով էապես տարբեր պիտի լինեն, ասենք, մաթեմատիկական, կենսաբանական, լեզվաբանական, պատմագիտական աշխատությունները: Համեմատության համար ներկայացնենք մեկական նմուշ մաթեմատիկական և պատմագիտական բնագրերից:

Ա) Անհավասարումները, որոնց ձախ և աջ մասերը X փոփոխականի նկատմամբ առաջին աստիճանի բազմանդամներ կամ թվեր են, անվանում են X մեկ անհայտով գծային անհավասարումներ: ... Գծային անհավասարման ձախ և աջ մասերում գտնվող բազմանդամների անդամները անվանում են այդ անհավասարության անդամներ (Հանրահաշիվ, դասագիրք 8-րդ դաս., 2012):

* Գիտությունն ինքը ևս հանդես է գալիս որպես ուսումնասիրության առարկա հատուկ գիտության՝ **գիտաբանության** համար:

Բ) Անօրինակ հերոսական էր Մուշի ինքնապաշտպանությունը: Դաշտի բնակիչներին տեղահանելուց ու կոտորելուց հետո թուրքական զորքերը հարձակվում են Մուշի վրա, պաշարում քաղաքը և սկսում ուժակոծել: 1915թ. հուլիսի 11-ին և 12-ին արյունահեղ մարտեր են տեղի ունենում հատկապես Վերին և Չորի թաղերում (Վ. Պարսամյան, Պատմագիտական հետազոտություններ):

Ակնառու տարբերություններով հանդերձ՝ գիտական բնագրերը ունեն նաև ընդհանուր շատ գծեր. դրանք բոլորը գրված են արդի գրական հայերենով, ներկայացնում են նրա գործառական տարբերակներից մեկը: Գիտական ոճը գործառական մյուս ոճերի հետ ունի և՛ ընդհանուր, և՛ տարբերակիչ գծեր: Այն առավել չափով մոտ է պաշտոնական, մասամբ հրապարակախոսական և հակադրվում է գեղարվեստական և առօրյա-խոսակցական ոճերին:

Որո՞նք են գիտական ոճը բնութագրող ընդհանուր հատկանիշները: Ամենակարևոր հատկանիշներից մեկը գիտական ոճի **ընդհանրական ու վերացական** բնույթն է՝ պայմանավորված գիտական մտածողության յուրահատկությամբ: Գիտական ոճում գոյականները, օրինակ, հանդես են գալիս իրենց ընդհանուր նշանակությամբ. դրանք սովորաբար ցույց են տալիս ոչ թե կոնկրետ առարկա, այլ տվյալ դասի (տեսակի) առարկան ընդհանրապես, մինչդեռ, ասենք, գեղարվեստական ոճում գոյականի առարկայական վերաբերությունը մեծ մասամբ կոնկրետ է: Եթե գեղարվեստական

գրականության գեղագիտական արժեքը որոշվում է պատկերի կոնկրետ, անկրկնելի, անհատական (թեև հաճախ տիպականացված) էությամբ, ապա գիտության մեջ կոնկրետ երևույթը կամ փաստը հանդես է գալիս որպես երևույթների տվյալ ընդհանրության՝ դասի կամ խմբի օրինակ կամ նմուշ և դրանով էլ արժեք է ստանում գիտության համար: Գիտության մեջ եզակին հանդես է գալիս ընդհանուր ձևով, արվեստի մեջ ընդհանուրը՝ եզակիի, կոնկրետի տեսքով¹:

Որպես օրինակ բերենք «գայլ» գոյականի երկու կիրառությունները՝ գիտական և գեղարվեստական բնագրերում:

«... Տունդրային գայլը ավելի բաց գույնի է, ձմռանը գրեթե սպիտակ, անտառայինը՝ մուգ, անապատայինը՝ գորշ շիկակարմիր» (ՀՄՀ, հ. 2, էջ 678):

«Գայլն աչքերը կտրեց նրա գունատ աչքերից, գլուխը թեքեց և աչքերով ձնափոշի արավ. նա միամտացնում էր այդ երեխային, որ ցատկի, բայց երեխան գիտեր, որ իրեն միամտացնում են, և գայլին ընդառաջ էր գնում դանդաղ ու մահակի պես պինդ. գայլը մոռացավ, որ ինքը գայլ է, կլանչոցով ետ թռավ» (Հ. Մաթևոսյան, «Իմ գայլը», Երկեր, հ. 1, էջ 460):

Գիտական բնագրում «գայլ» բառը նշանակում է կենդանու այդ տեսակը, գեղարվեստական ոճում նկարագրված է այդ տեսակի մի կոնկրետ առանձնյակ: Եվ դա բնական է. չէ՞ որ գիտությունը կոչված է բացահայտելու բնության և հասա-

¹ Տե՛ս **Кожина М. Н.**, О речевой системности научного стиля сравнительно с некоторыми другими, Пермь, 1972, с. 69:

րակության մեջ գործող ընդհանուր օրինաչափությունները: Մակայն սա չի նշանակում, թե գիտությունը չի անդրադառնում մասնավոր կամ կոնկրետ իրողությունների. ընդհանրականության աստիճանը պայմանավորված է գիտական երկի ժանրով, նրա կոնկրետ նպատակադրմամբ:

Վերացականության և ընդհանրականության հետ մեկտեղ գիտական ոճին ներհատուկ են նաև **ճշգրտությունը, տրամաբանական հետևողականությունը, ապացուցականությունը, գրական նորմի շրջանակների խստիվ պահպանումը**: Այդ հատկանիշները (կամ դրանց մեծ մասը) հատուկ են նաև պաշտոնական խոսքին, մի մասը՝ նաև հրապարակախոսական ոճին և ընդհանրապես հայոց լեզվի կանոնական (նորմատիվ) կիրառությանը:

Այժմ տեսնենք, թե ինչպես են դրսևորվում գիտական ոճի առանձնահատուկ գծերը տարբեր մակարդակներում՝ բառապաշարի և քերականության մեջ:

ԲԱՌԱՊԱՇԱՐԸ: Գիտական խոսքի բառապաշարի ամենաբնորոշ տարրերը **տերմիններն են**: Տերմինները գիտական (նաև այլ կարգի մասնագիտական՝ արհեստների, արտադրության և այլնի) հասկացություններ արտահայտող բառեր կամ բառակապակցություններ են, որոնք բնութագրվում են իմաստի ընդհանրականությամբ և միանշանակությամբ. սրանցով են հիմնականում ապահովվում գիտական ոճի ընդհանրականությունը և վերացականությունը, ճշգրտությունն ու հստակությունը: Տերմինները սովորաբար կազմում

են գիտական ոճի բառապաշարի 15-20 %-ը: Իհարկե, տերմինների գործածությունը միայն գիտական ոճի մենաշնորհը չէ. դրանք ճշգրիտ սահմանելի հասկացություններն են արտահայտում նաև այլ ոճերում²:

Քանի որ տերմինները գիտական ճշգրիտ սահմանելի հասկացություններ են արտահայտում, ուստի տերմինային արժեքով կարող են կիրառվել լեզվի բառապաշարի՝ հասկացություն արտահայտող միավորները (այսինքն՝ նյութական իմաստ արտահայտող խոսքի մասերը). **կապերը, շաղկապները, վերաբերականներն ու ձայնարկությունները** տերմին չեն դառնում: Նյութական իմաստով օժտված բառերից էլ տերմինային կիրառության առումով բացարձակ գերակշռություն ունի գոյականը, առավել սակավ գործածվում են ածականներն ու բայերը. դերանուններին ու մակբայներին ևս տերմինային կիրառությունները բնորոշ չեն: Եթե նկատի ունենանք, որ ածականները տերմինային արժեքով հանդես են գալիս հիմնականում գոյականական բառակապակցության կազմում կամ էլ, ինքնուրույնաբար գործածվելով, վերածվում են գոյականների (ինչպես՝ *ածական, միջնակարգ*), ապա տերմինային բառապաշարի մեջ գոյական անվան գերակայությունն ավելի ակնհայտ կդառնա: Պետք է հաշվի առնել մի կարևոր հանգամանք ևս: Տերմինները լեզվի բառապաշարի առանձին շերտ են ներկայացնում, սակայն սովորական

² Պաշտոնական ոճում տերմինների գործածության մասին տե՛ս **Յու. Ա. Վեոխյան**, Պաշտոնական ոճ, Եր., 2011, էջ 18:

երևույթ են դրա և բառապաշարի այլ շերտերի փոխադարձ ներթափանցումները. համագործածական բառաշերտի միավորը կարող է գործածվել նաև տերմինային արժեքով (օրինակ՝ **ջուր**- քիմիական, **ականջ** – կազմախոսական, **թուփ** – բուսաբանական և այլն): Հնարավոր է նաև հակառակ երևույթը, այսինքն՝ մասնագիտական տերմինները կարող են ներթափանցել համագործածական բառաշերտ (սա առավել քիչ է հանդիպում. օրինակ՝ **մուլեկուլ**, **թթվածին** և այլն): Ինչպես նշում է ակադ. Է. Աղայանը, «... մի փոքր չափազանցություն թույլ տալով՝ կարելի է ասել, թե ամեն մի գոյական անուն տերմին է կամ տերմինային բառ: Նույնիսկ այնպիսի սովորական բառեր, ինչպիսիք են **թուղթ**, **գրիչ**, **թանաք**, **սպակի**, **փայտ**, **քար** և այլն, տերմինային բառեր են արտադրության զանազան ճյուղերում, արհեստների, հրատարակչական գործի և այլ բնագավառներում»³:

Ինքնին հասկանալի է, որ գիտության տարբեր բնագավառներն ու ճյուղերն սպասարկող տերմինները իրենց կազմով էապես տարբեր պիտի լինեն, սակայն այս հանգամանքը չի խանգարում, «որ գիտական տերմինաբանությամբ հագեցվածությունն ընդհանրապես համարվի գիտական ոճի բնորոշ հատկանիշ, քանի որ տերմինաբանությունն առհասարակ

³ Է. Աղայան, Տերմինագիտություն, Եր., 1978, էջ 17-18:

րակ գիտական խոսքի անհրաժեշտ ու պարտադիր բաղադրիչ է, և դա բխում է այդ ոճի էությունից»⁴:

Տերմինային կազմի զգալի տարբերություններ են ունենում ոչ միայն գիտության ոչ այնքան մերձավոր ճյուղերի (ասենք, բժշկագիտություն, մաթեմատիկա, լեզվաբանություն և այլն), այլև գիտության միևնույն առարկային վերաբերող, սակայն գիտական ոճի տարբեր ենթառճերին պատկանող բնագրերը: Գիտության լեզվի բառապաշարային այս կարևոր շերտի իմաստային նկարագրի վերաբերյալ պետք է նկատի ունենալ հետևյալը:

Դառնալով որևէ գիտության տերմինային համակարգի միավոր՝ բառը ձեռք է բերում տերմինային իմաստ, որը, ի տարբերություն բառի ոչ տերմինային իմաստի, արտահայտում է գիտության կամ որևէ այլ բնագավառի բնորոշ կոնկրետ հասկացություն և որպես այդպիսին տրվում է գիտական ճշգրիտ սահմանման: Կարելի⁵ է, արդյոք, ասել, որ տերմիններին ընդհանրապես հատուկ չեն բազմիմաստության, հոմանիշության և համանունության իմաստաբանական կարգերը: Իհարկե, այս երևույթները առկա են նաև տերմինային միավորների միջև, սակայն ունեն դրսևորման յուրահատկություններ: Տերմինային բազմիմաստությունը խրախուսելի չէ գիտության միևնույն ճյուղին վերաբերող տերմի-

⁴ Ս. Գ. Աբրահամյան, Գիտական ոճը և նրա առանձնահատկությունները, ԲԵՆ, 1982, N 3, էջ 15:

նահամակարգում (այսպես կոչված **ներհամակարգային բազմիմաստություն**), սակայն սովորական են տարբեր տերմինահամակարգերում գործածվող միևնույն բառային միավորները՝ որպես **արտահամակարգային բազմիմաստության** դրսևորումներ: Այսպես, **սեռ** տերմինը կիրառվում է գրականագիտության, կենսաբանության, լեզվաբանության և այլ, **կուրս** բառը՝ քաղաքագիտության, տնտեսագիտության, ուսումնական և այլ տերմինահամակարգերում՝ բոլորովին տարբեր նշանակություններով: Սա յուրատեսակ **տերմինային համանունություն** է՝ գիտության լեզվում բավական տարածված իրողություն: Մյուս կողմից՝ նշված տերմինների գործածությունը միևնույն նեղ տերմինահամակարգում կարող է տեղիք տալ մտքի խճողման, անցանկալի կրկնաբանությունների: Օրինակ **կուրս** բառը միևնույն՝ ուսումնական բնագավառում «լսարան» և «դասընթաց» իմաստներով գործածելիս կարող է առիթ տալ «Երրորդ **կուրսում** ավարտվում է փիլիսոփայության **կուրսը**» և այս կարգի անհաջող ձևակերպումների: Ներհամակարգային այսպիսի տերմինային բազմիմաստությունը լեզուն հաղթահարում է տերմինային իմաստներից մեկի համար բառային կամ բառակապակցական մեկ այլ միավոր հատկացնելով: Որպես գիտական տերմինաբանության մեջ գործող ընդհանուր օրինաչափություն ընդունված է «մեկ տերմինին՝ մեկ իմաստ տվյալ տերմինահամակարգում» սկզբունքը⁵:

⁵ Հմմտ. **Էդ. Աղայան**, նշվ. աշխ., էջ էջ 44-45:

Ինչ վերաբերում է տերմինային հումանշության երևույթին, ապա պետք է նկատի առնել, որ հումանիշ բառերի սահմանումն իբրև միմյանցից նրբիմաստներով կամ ոճականորեն տարբերվող միավորների, արդեն իսկ հակասում է տերմինային իմաստի ճշգրտության սկզբունքին: Տերմինների մեջ հանդիպում են միևնույն հասկացությունն արտահայտող նույնիմաստ (նույնանիշ) բառեր, որոնք կոչվում են բազմանուններ (օր. *փոշեկուլ-փոշեծուծ-փոշեծծիչ, խնդրատություն-կատավարում-կատավարություն* և այլն): Ժամանակի ընթացքում տվյալ տերմինահամակարգում սովորաբար կայունանում է բազմանուններից որևէ մեկը:

Ընդունված է, որ գիտական խոսքի բնութագրական գծերը՝ տրամաբանական հետևողականություն, ճշգրտություն, հասկանալիություն և այլն, տեղ չեն թողնում նրանում պատկերավորման միջոցների (փոխաբերություն, չափազանցություն և այլն) գործածության, հեղինակի սուբյեկտիվ-հուզական վերաբերմունքի դրսևորման համար: Ընդհանուր առմամբ ճշմարիտ այս պնդումը, սակայն, չի նշանակում, թե գիտական ցանկացած բնագիր լիովին զուրկ պետք է լինի պատկերավորման-արտահայտչական միջոցներից կամ հուզական որոշակի գունավորումից: Նշվածների առկայությունը պայմանավորված է նախ նրանով, թե գիտական ոճի որ ենթաոճին կամ ժանրին է վերաբերում տվյալ բնագիրը, ապա և ոչ սակավ չափով՝ հեղինակի անհատականությամբ: Բնական է, որ հումանիտար (առավելապես գրականագի-

տական, պատմական, արվեստագիտական և այլ) բնագրերում, ինչպես նաև ընդհանրապես գիտահանրամատչելի երկերում այնքան էլ սակավադեպ չեն պատկերավոր մտածողությունն դրսևորող լեզվական միջոցները: Ահա մի օրինակ ֆիզիկային վերաբերող հանրամատչելի գիտական շարադրանքից. «Ապշեցուցիչ բաներ են այդ ֆոտոնները: Նրանց համար անհնարին է այլ արագություն, քան վայրկյանում 300 հազար կիլոմետրը, երբ նրանք թռչում են նյութից զերծ տարածության մեջ: Նրանք հայտնվում են ճառագայթման աղբյուրից, ինչպես նոր դուրս եկած կենդանածին ձկնիկներ՝ միանգամայն ավարտուն, լիովին ձևավորված: Նրանց էներգիամասսան աստիճանական աճման կարիք չունի, նրանք չպետք է տևական մանկություն ունենան, նրանց համար կարծես գոյություն չունի ժամանակ. հենց իրենց առաջացման պահին նրանք ձեռք են բերում այն ամենը, ինչ ընդհանրապես կարող են ունենալ: Մենք հենց նոր կարեկցեցինք նրանց, իսկ նրանք, պարզվում է, չտեսնված հաջողակներ են» (Դ. Դանին, Տարօրինակ աշխարհի անխուսափելիությունը, Եր, 1965, էջ 107):

Ընդհանրապես գիտական ոճի բնագրերում սովորական են բառերի՝ լեզվի մեջ արմատավորված փոխաբերական գործածության դեպքերը (ընդհանրական-ավարտուն փոխաբերությունները): «Գիտության համարյա բոլոր բնագավառներում փոխաբերական իմաստով գործածվում են մի քանի բառեր, որոնք հանդես են գալիս տարբեր լրացումների հետ: Դրանցից են՝ **աղբյուր** (վարակի, տաքացման, ջերմութ-

յան, լույսի, զգացմունքների, ուրախության, երջանկության, հակասությունների, ճառագայթման, շարժման, ձայնի, հաղորդման...., էներգիայի...., գրավոր..., հայկական և այլն», **օջախ** (բորբոքային, գինեգործության...., ճառագայթման, մշակութային և այլն), **մթնուղրտ** (հոգեբանական, շիկացած, ռեակցիայի, գրական...., կործանարար, հեղձուցիչ... և այլն), **բանալի** (գաղտնիքների բացահայտման...., հարցի լուծման, ուսումնասիրության և այլն), **շտեմարան** (... քարի, ձկան, բազալտի և այլն), **գոտի** (սևահողային, խաղողագործական, արևադարձային և այլն)⁶:

Առանձին քննության նյութ կարող են դառնալ գիտության լեզվի տերմինային բառապաշարի հարստացման, նոր տերմինների կերտման (տերմինաշինության), տերմինների փոխառության հարցերը: Այս առումով նշենք միայն, որ հայոց լեզվի բառակազմական ճկունությունն ու գիտական մշակման հարուստ ավանդույթը հնարավորություն են տալիս հայոց լեզվով հաջողությամբ արտահայտելու գիտության անընդհատ նորացող հասկացությունները:

Դրան նպաստում են նաև հայերենի կառուցվածքային-տիպաբանական յուրահատկությունները. դրանցից մեկի մասին հետաքրքիր է Գ. Ջահուկյանի դիտարկումը. «Հայերենի կառուցվածքը հնարավորություն է տալիս գրեթե յուրաքանչյուր բայից կազմել բայանվանական և անորոշ-դերբա-

⁶ **Օ. Ե. Բաբայան**, Փոխաբերությունը արդի հայերենում, Եր., 1998, էջ 85:

յական ձևեր: Եթե այս առումով տիպաբանական գուգահեռ անցկացնենք հայերենի և այլ լեզուների միջև, կարելի է տեսնել, որ մի շարք լեզուներում (արաբերեն, վրացերեն և այլն) ընդհանրապես բացակայում է անորոշը, մի շարք այլ լեզուներում (ռուսերեն, լատիներեն և այլն) անորոշը չի հոլովվում և այլն: Հայերենի այս առանձնահատկությունը հնարավորություն է տալիս բայական բոլոր ձևերը գոյականաբար գործածելու, որ կարևոր նշանակություն ունի տերմինակազմության առումով:

Վերջին ժամանակներս արևելահայ գրական լեզվում լայն տարածում է ստացել անորոշի փոխարեն բուն գոյական անունների գործածությունը՝ ոչ առանց ռուսերենի ազդեցության: Այս բանը հանգեցնում է վերացական արտահայտության հնարավորությունների ուժեղացման և, հասկանալի պատճառներով, առանձնապես լայն չափեր է ընդունում գիտական և պաշտոնական-գործարարական ոճերում»⁷:

Մեր լեզվում, իրոք, սովորական է միննույն բայահիմքից տարբեր իմաստներ արտահայտող տերմինների կազմությունը՝ մշակել, մշակություն, մշակույթ, մշակաբույս, մշակում և այլն, խոսել, խոսք, խոսույթ, խոսողություն, ասել, ասույթ, ասություն, ասք, ասացող, ասացվածք, բանասաց և այլն, ավանդել, ավանդույթ, ավանդություն, ավանդավեպ և այլն:

⁷ Գ. Բ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974, էջ 506:

Տերմինաշինության լայն հնարավորություններին զուգահեռ հայերենը, սակայն, աշխարհի շատ լեզուների պես չի խորշում միջազգային ընդունված տերմինների գործածությունից, եթե, իհարկե, չկան կամ առայժմ գտնված չեն դրանց համարժեք հայերեն այնպիսի ձևեր, որոնք բնական ձևով կընդունվեն լեզվական համակարգի կողմից:

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Գիտական ոճի առանձնահատուկ որակը ձևավորում են նաև **քերականական** իրողությունները, որոնց կիրառությունը ևս պայմանավորված կարող է լինել գիտական խոսքի կիրառության ոլորտով կամ գիտական բնագրի այս կամ այն ժանրով: Որպես ընդհանուր բնութագրական գիծ նշվեց արդեն **գոյական խոսքի մասի** գերակա դերակատարությունը՝ որպես տերմինային բառաշերտի առաջնային բաղադրատարրի: Ածականները (նաև թվականները ոչ մաթեմատիկական բնագրերում) հիմնականում հանդես են գալիս բաղադրյալ տերմիններում՝ որպես լրացական անդամ (որոշիչ) (*օր.՝ պարզ ստորոցյալ, հարյուրամյա պատերազմ, առաջին դեմք և այլն*):

Բայի խոսքաստեղծիչ դերը, բնականաբար, հատուկ է նաև գիտական ոճին: Բայական քերականական կարգերն այստեղ դրսևորում են կիրառական որոշ յուրահատկություններ: Ամենից հաճախված են, անշուշտ, սահմանական եղանակի ներկա ժամանակի երրորդ դեմքի ձևերը. ներկա ժամանակն էլ, որպես կանոն, հանդես է գալիս իր ոչ բուն

նշանակությամբ, այլ որպես ընդհանրական ներկա (*Երկիրը պատվում է Արեգակի շուրջը, ձկներն ապրում են վտառներով, բարդ բառը կազմվում է մեկից ավելի արմատներով և այլն*) կամ էլ հաճախ որպես պատմական ներկա (*Բնքնապաշտպանական ուժերի կազմում կռվում են նաև աշխարհագորայիններ, Աբրահամյանը կատարում է խոսքի մասերի դասակարգում և այլն*):

Պարզ է, որ այս կիրառություններն էլ ծառայում են գիտական խոսքի ընդհանրականությանն ու վերացականությանը: Բայի (նաև դերանվան) երկրորդ դեմքը գիտական խոսքում ամենից սակավադեպն է. առավելապես հանդես է գալիս գիտաուսումնական բնագրերում գործնական բնույթի հանձնարարականներ ձևակերպելիս, երբեմն էլ գիտահանրամատչելի երկերում՝ պատումին երկխոսական-մտերմիկ բնույթ հաղորդելու նպատակով: Սրա համեմատ հաճախված է առաջին դեմքը, որը սովորաբար նշում է երկի հեղինակին և առավելապես արտահայտվում է հոգնակի թվով (հեղինակային **մենք**): Օրինակներ՝ «Սույն աշխատության մեջ մենք անդրադառնում ենք...», «Հուսով ենք, որ այս գիրքն իր նպաստը կբերի...» և այլն:

Հոգնակի թվի առաջին դեմքի բայով (սովորաբար ընդհանրական եղանակի ապառնի ժամանակով) ձևավորվում են նաև ընդհանրական դիմավոր միակազմ նախադասություններ (դարձյալ առավելապես գիտաուսումնական ենթառ-

ճում): Օր.՝ *Լուծենք հավասարումը, մի պահ վերանանք բա-
ների կոնկրետ իմաստներից ...* և այլն:

Բայի եղանակային ձևերից գիտական ոճում գրեթե բա-
ցառվում է հրամայական եղանակը, եթե նկատի չառնենք ու-
սումնական գործնական առաջադրանքների ձևակերպում-
ները (*Առանձնացրե՛ք ածանցավոր բառերը...*). սրանք էլ ա-
վելի հաճախ արտահայտվում են անորոշ դերբայով (*Առանձ-
նացնել ...* և այլն):

Գիտական մտածողության համարժեք արտահայտման
պահանջով գիտական ոճում շատ են կիրառվում ոչ նյութա-
կան իմաստ արտահայտող խոսքի մասերը՝ կապերը (**հա-
մար, պատճառով, մասին, կապակցությամբ, համաձայն, ըստ**
և այլն), շղկապները (**եթե..., ապա, որովհետև, քանի որ,
ուստի, այնպես որ, թեև, չնայած (որ),** վերաբերականները
(**անշուշտ, իհարկե, երբեք, անտարակույս, թերևս, երևի** և
այլն): Չայնարկությունները գիտական ոճում, որպես կանոն,
բացակայում են:

Շարահյուսական կառույցներից գիտական ոճին առա-
վել բնորոշ են **գոյականական բառակապակցությունները** (ո-
րոնց մեծ մասը՝ տերմինային արժեքով):

Պարզ նախադասությունները գերազանցապես երկ-
կազմ են: Գիտական ոճում, առավել քան գործառական մյուս
ոճերում, շատ են գործածվում **բարդ նախադասությունները**՝
հիմնականում շղկապավոր, ինչպես նաև բազմաբաղադ-
րիչ (գերազանցապես ստորադասական տիպի): Մա պայմա-

նավորված է գիտական մտածողության առանձնահատկությամբ, տրամաբանական կադապարների (դատողություն, մտահանգում և այլն) լեզվական ճշգրիտ արտացոլման պահանջով: Մակայն գիտական ոճի համար բնավ խորթ չեն նաև **դերբայական դարձվածներով** կառույցները, որոնք, բարդ նախադասությունների հետ զուգորդվելով, որոշակիորեն մեղմում են գիտական խոսքին պարտադրված միօրինակությունը: Այս առիթով պետք է նշել նաև որ գիտական խոսքը որոշակի միօրինակությամբ հաճախ «տառապում է» անխուսափելիորեն՝ ի նպաստ շարադրանքի ճշտության ու տրամաբանական անհակասականության: Մա էլ, ինչպես նշվել է, չի նշանակում, թե գիտական ոճում լիովին բացառվում են հեղինակի անհատականության կամ անձնական վերաբերմունքի դրսևորումները (հատկապես հումանիտար ոլորտին վերաբերող երկերում):⁸

Գիտական խոսքում դիտելի է շարահյուսական մի յուրահատկություն ևս, որ կրկին գիտական մտածողության յուրահատկությամբ է թելադրված: Գիտական երկի հեղինակը շատ հաճախ խուսափում է առաջին պլան մղել իր (կամ սովյալ հարցով զբաղված այլ գիտնականի) անձը՝ ընդգծելով հատկապես նրանց կատարածը: Այս նպատակն իրագործելուն առավել չափով հարմար են գալիս **կրավորական կառուցվածքի** (օր. *«Ուսումնասիրվել է Հայաստանի տնտեսությ-*

⁸ ՀՀմտ. Ս. Ա. Մելքոնյան, Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Եր., 1984, էջ 235-236:

յան փորձը», «կիրառվել են քննության նորագույն մեթոդներ»), ինչպես նաև միակազմ նախադասության ընդհանրական դիմավոր կոչված տեսակը (Առանձնացնում են լեզվի զարգացման հետևյալ փուլերը, Թեորենը ապացուցում են երկու եղանակով և այլն): Շատ են հանդիպում նաև «Պետք է (կարելի է, անհրաժեշտ է, ցանկալի է...) + անորոշ դերբայ» կառուցվածքի միակազմ նախադասությունները (սրանք որոշ հետազոտողներ երկկազմ են համարում):

Գիտական ոճում սակավադեպ չեն (իսկ որոշ բնագրերում էլ շատ սովորական են) **ներդրյալ միավորներ**՝ բառեր, բառակապակցություններ կամ նախադասություններ, որոնք լրացուցիչ տեղեկատվություն հաղորդելու, այսպես կոչված տեղեկանքային բացահայտչի, կամ էլ հեղինակային վերաբերմունքի դրսևորման գործառույթ ունեն և սովորաբար առնվում են փակագծերի մեջ: Օրինակներ. «Գլխավոր զեկուցումը կազմված էր տարբեր ազգությունների պատկանող վեց գիտնականների՝ Տ. Ա. Բերտազանի, Յու. Դ. Դեշերիևի (դեկավար), Բ. Բ. Իսանի, Վ. Բ. Լիտկինի, Ս. Գ. Հայդակովի, Ա. Ն. Շահիրովի կողմից», «Ինչ վերաբերում է ոչ եվրոպական, հատկապես ասիական մի շարք լեզուների, ապա նրանց մի զգալի մասը գրեթե բոլոր, իսկ երբեմն՝ ուղղակի բոլոր այդ բառերի դիմաց ունի սեփական անվանումները (համոզվելու համար պետք է միայն բաց անել, ասենք, կոբեերենի, վիետնամերենի, չինարենի, հնդկական, ինդոնեզա-

կան կամ բիրմայական լեզուների բառարանները) (Ռ. Իշխանյան, *Ակնարկ հայերենի տերմինաշինության, Եր., 1981*):

Նախադասության հնչերանգային տեսակներից գիտական ոճում բացարձակ գերակշռություն ունի, բնականաբար, **պատմողական տիպը**, որ բխում է գիտական խոսքի առաքելությունից: Բացականչական և հրամայական բնույթի նախադասությունները գրեթե չեն հանդիպում, սակայն **հարցական բնույթի** նախադասությունները այնքան էլ խորթ չեն գիտական խոսքին. դրանք (մասնավորապես դրանց ճարտասանական տարբերակը) գործածվում են շարադրանքին որոշ կենդանի երանգ հաղորդելու նպատակով: Այս առումով հատկանշական է, օրինակ, Գ. Ջահուկյանի «Զրույցներ հայոց լեզվի մասին» գրքույկը, որի բոլոր վերնագրերը հարցական նախադասություններ են («*Ի՞նչ լեզուների հետ է շփվել հայերենը նախքան հայ գրերի գյուտը*», «*Գրաբարը եղե՞լ է արդյոք խոսակցական լեզու*», «*Ինչքա՞ն բարբառ ունի հայերենը*» և այլն):

ԵՆԹԱՌՃԵՐ ԵՎ ԺԱՆՐԵՐ: Նախ՝ գիտական խոսքը, ինչպես և խոսքն ընդհանրապես, ունի դրսևորման երկու ձև՝ բանավոր գրավոր: Իհարկե, գիտության լեզուն հիմնականում գրավոր է, սակայն նրա որոշ ժանրեր՝ զեկուցում, դասախոսություն, ելույթ և այլն, ունենում են նաև բանավոր դրսևորում: Սա, իհարկե, ընդհանրություն չի կարող ունենալ առօրյա-խոսակցական ոճի հետ, քանի որ նախօրոք մտած-

ված և որոշակիորեն նախապատրաստված խոսք է՝ գիտական ոճին բնորոշ գծերով:

Գիտական խոսքի ենթառճերը հիմնականում տարբերվում են նրանով, թե հանրության որ խմբին է հասցեագրվում տվյալ գիտական շարադրանքը և ինչ նպատակ է հետապնդում: Ըստ այսմ տարբերում են **մասնագիտական, գիտաուսումնական, գիտահանրամատչելի** ենթառճեր:

Մասնագիտական ենթառճով գրված երկերը նախատեսված են գիտության տվյալ ոլորտի նեղ մասնագետների համար և չեն կարող ընկալվել կամ յուրացվել առանց հատուկ պատրաստության: Սրանցից գիտատեխնիկական բնագրերը հասցեագրվում են հատկապես գիտական և տեխնիկական մշակումներով ձեռք բերված արդյունքների գործնական կիրառությամբ զբաղվող մասնագետներին և դարձյալ կարող են մատչելի չլինել մասնագիտական պատրաստություն չունեցողներին: **Գիտահանրամատչելի** երկերը գիտելիքի պարզեցված շարադրանք են՝ հասցեագրված գիտության տվյալ բնագավառի վերաբերյալ հատուկ մասնագիտական պատրաստություն չունեցողներին: **Գիտաուսումնական** ենթառճով գրված երկերը նախատեսված են գիտության տվյալ ոլորտի ապագա մասնագետներին. սա դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, ուսուցողական բնույթի այլևայլ աշխատանքներին հատուկ լեզվական որակն է:

Գիտական ոճի ենթառճերի՝ վերևում նկարագրված լեզվական որակների տարբերությունները առավել ակներև

ներկայացնելու համար բերենք մի քանի նմուշներ մասնագիտական և հանրամատչելի բնագրերից:

Ա. Մասնագիտական բնագրեր

ա) մաթեմատիկայից

Այն հարթությունը, որը գնդային մակերևույթի հետ ունի միայն մեկ ընդհանուր կետ, կոչվում է շոշափող հարթություն: Շոշափող հարթությունը կարելի է դիտել որպես հատող հարթության սահմանային դիրք, երբ գնդի կենտրոնից ունեցած նրա հեռավորությունը ձգտում է շառավղին (Աբրամովիչ Մ. Բ., Ստարոդուբցև Մ. Տ., Մաթեմատիկա, Եր., 1978, էջ 291):

բ) ֆիզիկայից

Եթե մարմինն օժտված է որևէ կարգի առանցքային համաչափությամբ, ապա իներցիայի կենտրոնը կգտնվի այդ առանցքի վրա: Նրա հետ կհամընկնի նաև իներցիայի գլխավոր առանցքներից մեկը, իսկ մյուս երկուսը կլինեն նրանց ուղղահայաց: Ըստ որում, եթե առանցքային համաչափության կարգը երկուսից մեծ է, ապա մարմինը սիմետրիկ հոլ է (Լանդաու Լ. Դ., Լիֆշից Ե. Մ., Տեսական ֆիզիկա, Եր., 2008, էջ 189):

գ) կենդանաբանությունից

Թռչուններն անկասկած առաջացել են սողուններից: Դա հաստատվում է բազմաթիվ փաստերով: Սողունների և թռչունների կազմության մեջ ընդհանուր շատ բան կա՝ չոր մաշկ, նմանություն թեփուկների և փետուրների զարգացման

մեջ, մեկ հողելուստով գանգի հողավորում ողնաշարի հետ, ինտերտարսալ հողավորում, զարկերակային արյուն կրող աորտայի աջ աղեղ, կոնքային երիկամ, սաղմային թաղանթներ և այլն: Թռչունների շատ օրգաններ նման չեն սողունների համապատասխան օրգաններին, բայց նրանք զարգացել են վերջիններիս բարդացման հետևանքով (Ե. Խ. Լուկին, Կենդանաբանություն, Եր. 1971, էջ 365):

դ) լեզվաբանությունից

«Ընդհանրական քերականության մեջ պետք է հստակորեն առանձնացվեն արտահայտության և բովանդակության պլանները, մի բան, որ գրեթե հնարավոր չէ և նպատակահարմար չէ առանձնական քերականությունների դեպքում. այստեղ տվյալ իմաստը միշտ ձևավորված է տվյալ միջոցներով: Եթե ընդհանրական քերականության մեջ արտահայտության և բովանդակության պլանները դրվում են իրար կողքի, ապա առանձնական քերականության մեջ դրանք կապվում են փոխհաջորդմամբ՝ մակարդակից մակարդակ և աստիճանից աստիճան անցումով: Եթե առանձին լեզուների դեպքում արտահայտելիի և արտահայտիչի (իմաստի և ձևավորման) բացարձակ տարբերակումը գրեթե անհնար է..., ապա իդեալական վիճակով այդ լիովին թույլատրելի է և անհրաժեշտ» (Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, էջ 41):

Բ. Հանրամատչելի բնագրեր

ա) Ֆիզիկայից

Տիեզերքը կազմող մատերիան գոյություն ունի ոչ միայն որպես նյութ: Լույսը կամ ռադիոալիքները նյութական չեն, բայց մատերիական են: Եթե դրանք **ոչինչ** լինեին, մի՞թե պետք կլիներ ինչ-որ բան ծախսել դրանց ստեղծման համար: Ինչո՞ւ էլեկտրականները պետք է ածուխ կլանեն, իսկ հնադարյան լապտերները՝ ձեթ:

Խորասուզվելով էլեմենտար մասնիկների աշխարհը՝ տեսնում ես, որ այնտեղ ուղղակի հրաշքներ են տեղի ունենում. նյութի հատիկներն ամբողջությամբ, առանց մնացորդի վերածվում են ճառագայթման: Իհարկե, այդպիսի դեպքերը զարմանալի են թվում, սակայն դրանց մեջ զարմանահրաշխի՞նչ կա (**Ռ. Դանին**, Տարօրինակ աշխարհի անխուսափելիությունը, Եր., 1965, էջ 35):

բ) լեզվաբանությունից

«Հարցնել, թե ինչ ծագում ունի այս կամ այն լեզուն, նույնն է՝ հարցնել, թե որ լեզվաընտանիքին է այն պատկանում: Վիճակը ճիշտ այնպես է, ինչպես այն դեպքում, երբ մենք ուզում ենք իմանալ այս կամ այն մարդու ծագումը. հարցնել, թե ինչ ծագում ունի Գրիգորյանը, նշանակում է պարզել, թե ինչ ընտանիքի, լայն առումով՝ տոհմի, ցեղի է նա պատկանում:

Գիտության զարգացման արդի վիճակով կասկած չկա, որ հայերենը հնդեվրոպական ծագում ունի, այսինքն՝ պատ-

կանում է այն լեզվաընտանիքին, որ պայմանականորեն կոչվում է հնդեվրոպական. հնդեվրոպական լեզուները հնում տարածված էին Հնդկաստանից մինչև Եվրոպա, հետագայում տարածվում են նաև այլ վայրերում» (Գ. Ջահուկյան, *Զրույցներ հայոց լեզվի մասին*, Եր., 1992, էջ 10-11):

Գիտական ոճի նշված տարբերակային ձևերը իրենց հերթին կարող են դրսևորվել տարբեր ժանրերի միջոցով: Սրանցից կարևորներն են **մենագրությունը**, **գիտական հոդվածը**, **ատենախոսությունը**, **դասագիրքը**, **ձեռնարկը**, **գեկուցումը** և այլն:

Գիտական ոճի ժանրերից են նաև բուհական ուսումնառության ընթացքում ուսանողների կողմից կատարվող գիտական հետազոտությունները՝ **ռեֆերատ**, **կուրսային**, **ավարտական աշխատանքներ**, **մագիստրոսական թեզ** և այլն:

Գիտական յուրաքանչյուր շարադրանք, այդ թվում նաև նշված ժանրերի ուսանողական գիտահետազոտական աշխատանքները, պետք է ունենան որոշակի՝ այդ կարգի աշխատանքների համար ընդունված կառուցվածք և ձևավորված լինեն գիտական աշխատանքների համար մշակված հատուկ կանոններով ու սկզբունքներով: Գիտահետազոտական աշխատանքի առաջին փորձերին ձեռնամուխ լինելուց առաջ համառոտակի ծանոթանանք դրա **կառուցման** ու **ձևավորման** ընդունված պահանջներին ու սկզբունքներին⁹:

⁹ Այս հատվածը հմմտ. Վ. Գաբրիելյան, Գրավոր խոսք, Եր., 2004, էջ 41-53:

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ- Գիտահետազոտական աշխատանքը, անկախ նրա ծավալից, պետք է բաղկացած լինի կառուցվածքային երեք մասերից՝ **ներածություն, հիմնական բովանդակություն, եզրակացություն(ներ)**: Համեմատաբար մեծ ծավալ ունեցող աշխատանքներում (դիպլոմային աշխատանք, մագիստրոսական թեզ են) այդ բաժանումները ունենում են առանձին վերնագրեր, կարող են ունենալ **ենթաբաժիններ**, նաև կարճ **Առաջաբան** (կամ «**Երկու խոսք**»):

Ներածության մեջ պետք է ներկայացվեն հետազոտության մեջ քննարկվող հարցերն ընդհանուր գծերով, դրանց քննության կարևորության, նպատակի, ակնկալվող արդյունքների, ուսումնասիրության մեթոդի մասին տեղեկությունները: Այս բաժնում սովորաբար դրվում է նաև այսպես կոչված «հարցի պատմությունը»՝ թեմայի վերաբերյալ եղած գրականությունը, դրա մեջ արտահայտված տարբեր կարծիքները, հարցի ուսումնասիրված լինելու աստիճանը և այլն:

Բովանդակության մեջ արդեն պետք է ներկայացվեն հետազոտողի կատարած աշխատանքի (լաբորատոր փորձերի, այլ կարգի փորձարական աշխատանքների, եթե այդպիսիք արված են) արդյունքները, դրանք հիմնավորվեն, կատարվեն յուրաքանչյուր դեպքում առանձին եզրահանգումներ, փաստարկումներ, հաստատվեն հեղինակի նախապես առաջադրած կանխադրույթները, անդրադարձ կատարվի հակադիր

կամ հաստատող կարծիքներին, կատարվեն ընդհանրացումներ:

Եզրակացությունը փաստորեն ամփոփում է հիմնական բովանդակության շարադրանքը՝ առանձին կետերով ներկայացնելով ստացված եզրահանգումներն ու կոնկրետ արդյունքները:

Աշխատանքի վերջում դրվում է օգտագործված գրականության (անհրաժեշտ դեպքերում նաև սկզբնաղբյուրների, համառոտագրությունների) ցանկը: Որոշ կարգի աշխատանքներ ըստ անհրաժեշտության կարող են ունենալ նաև կցվող հավելվածներ:

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ - Կուրսային, ավարտական աշխատանքները, մագիստրոսական թեզերը, ռեֆերատները, ատենախոսությունները կազմվում են՝ պահպանելով հետևյալ կառուցվածքը. **Անվանաթերթ** (էջ 1-ին), որի վրա առանձին տողերով վերևից նշվում են նախ՝ նախարարության, ապա՝ բուհի և ամբիոնի անվանումները, ապա գլխատառերով՝ աշխատանքի տեսակը (ասենք՝ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ), այունհետև առանձին տողով նշվում է հեղինակի անուն-ազգանունը (կուրսայինի կամ ռեֆերատի դեպքում՝ նաև կուրսը և խումբը), ղեկավարի անվան սկզբնատառն ու ազգանունը, գիտական աստիճանն ու կոչումը:

«**Բովանդակություն**» - այս վերնագրի տակ անվանաթերթին հաջորդող (2-րդ) էջում հերթական համարակալումով և էջերի նշումով տրվում են աշխատանքի մասերը՝ **Նե-**

րածություն, հիմնական մասի վերնագրերը, Եզրակացություն, Օգտագործված գրականության ցանկ, Հավելված(ներ) (եթե կան):

Ներածությունը սկսվում է աշխատանքի 3-րդ էջից: **Հիմնական** մասը հաջորդում է **ներածությանը**՝ նոր էջից: Եթե այս մասը բաժանված է առանձին գլուխների, դրանք նույնպես սկսվում են նոր էջից: Հիմնական մասին հաջորդում է **Եզրակացությունը** (նոր էջից), իսկ վերջում՝ **Օգտագործված գրականության ցանկը**, որտեղ առանձին տողերով համարակալումով նշվում են այն աշխատանքները, որոնցից օգտվել է ուսանողը և հիշատակել իր աշխատանքում: Այս ցանկում պետք է նշել հեղինակը, ստեղծագործության անվանումը, հրատարակության տեղն ու տարեթիվը:

Ուսանողական աշխատանքները կարելի է ներկայացնել ձեռագիր կամ համակարգչային շարվածքով՝ այս վերջին դեպքում պահպանելով էջերի ձևավորման տեխնիկական պահանջները (տողերի քանակը, տողամիջյան հեռավորությունը, լուսանցքների չափսերը և այլն):

Հղումների և ծանոթագրությունների կարգը -Գիտական աշխատանքի հեղինակը հաճախ քաղվածքներ ու մեջբերումներ է անում այլոց աշխատանքներից: Դրանք բերվում են կամ բառացի, կամ պատմողաբար՝ վերաշարադրումով: Բառացի մեջբերվող խոսքը առնվում է չակերտների մեջ, իսկ անուղղակի մեջբերվող խոսքը տրվում է առանց չակերտների: Չակերտներով մեջբերվող խոսքն սկսվում է մեծատառով

(բացի այն դեպքերից, երբ մեջբերվող խոսքը ներկայացվում է որպես հեղինակային խոսքի շարունակություն. օրինակ՝ *Աբովյանը ցավով է տեսնում, որ «էլ հայի գիրք ձեռքն առնող, էլ հայի լեզուն խոսող քիչ ա գտնվում»*), վերջում՝ փակվող չակերտի վրա (անուղղակի խոսքի դեպքում՝ վերջին բառի վրա) դրվում է մեջբերման թվահամարը և նույն թվահամարով էջի ներքևում՝ վերջին տողից հետո, գրվում է **հղումը**: Հղումի մեջ նշվում են մեջբերվող խոսքի հեղինակի անվան (անհրաժեշտության դեպքում՝ նաև հայրանվան) սկզբնաբառը, ազգանունը (ընդգծված), աշխատության վերնագիրը, հրատարակության տեղը, տարեթիվը, համապատասխան էջը (Օրինակ՝ 1. *Խ. Աբովյան*, Վերք Հայաստանի, Երևան, 1981, էջ 46): Նույն էջում նույն աղբյուրից այլ հղում տալու դեպքում երկրորդ անգամ հղումը չի կրկնվում, այլ նշվում է՝ **նույն տեղը**: Եթե նույն աղբյուրին հղում է տրվում այլ էջերում, ապա նշվում է հեղինակի ազգանունը և ավելացվում՝ «նշված աշխատությունը» (նշվ. աշխ.) և էջը:

Ընդունված է նաև հղումների այլ կարգ. շարադրանքի մեջ՝ մեջբերված խոսքից անմիջապես հետո, փակագծերում նշվում է միայն աշխատության համարը, որը գրականության ցանկում տվյալ աշխատանքի թվահամարն է, և էջը (օր. 35, 124):

Այլ աշխատություններից մեջբերումները նշող հղումներից բացի հեղինակը կարող է տեքստից դուրս՝ տողատակում, լրացուցիչ որևէ տեղեկություն, բացատրություն կամ

մեկնաբանությունն անել շարադրանքի որևէ բառի, դարձվածի, դրույթի վերաբերյալ: Մրանք **ծանոթագրություններ** են, որոնք տեքստում կարող են համարակալվել կամ նշվել աստղանիշով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԼԵԶՎԱԿԱՆ ՆՈՐՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ. ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՆՈՐՄ....	3
ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՆՈՐՄ. ԶՈՒԳԱԶԵՎԵՐ ԵՎ ՇԵՂՈՒՄՆԵՐ.....	15
ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՆՈՐՄ. ԿԱՊԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹ- ՅՈՒՆԸ.....	38
ՈՐ. ՇԱՂԿԱ՞Պ, ԹԵ՞ ԴԵՐԱՆՈՒՆ.....	58
ՇԱՐԱՀՅՈՒՍԱԳԻՏԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ.....	75
ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԼԵԶՎԱԿԱՆ ՆՈՐՄԸ ԵՎ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԼԵԶՈՒՆ.....	87
ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ԿԱՊԱԿՑՈՒ- ԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՈՒՐԶ.....	102
ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒՅԹԻ ՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.....	120
ԲԱՌԱՊԱՏՃԵՆՈՒՄՆԵՐՆ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՊԱՇԱՐՈՒՄ.....	136
ՀԱՅԵՐԵՆԻ ՏԵՐՄԻՆԱՅԻՆ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ԶԱՐԳԱՑ- ՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ.....	145
ԳԻՏԱԿԱՆ ՈՃ.....	156